ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎ. ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

1 (87). 2016

**«ԱՅԼԵ՛Վ ԵՐԲԵՔ.
ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»**

**«НИКОГДА БОЛЕЕ.
АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»**

**«NEVER AGAIN.
ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»**

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ

IMPROVING INFORMATION SECURITY SYSTEM

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԼՂՀ հակամարտության գոտում ս. թ. ապրիլի սկզբին Ադրբեջանի կողմից զինադադարի կոպիտ խախտման հետևանքով ստեղծված լարված իրավիճակից դուրս գալու ուղիների վերաբերյալ քննարկում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետությունների արտգործնախարարների և ԵԱՀԿ Գործող նախագահի անձնական ներկայացուցչի մասնակցությամբ

Վիեննա, 2016 թ. մայիսի 16

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Հարվարդի համալսարանի Քեննեդիի անվան պետական հետազոտությունների դպրոցում

Քեմբրիջ, 2016 թ. մարտի 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

1 (87). **2016**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Ջ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապրիամով Է. Ա.
Ավետիսյան Վ. Ն.
Դավթյան Ա. Մ.
Իսախանյան Մ. Ռ.
Խաչատրյան Կ. Ա.
Խաչատրյան Տ. Վ.
Խաչատուրով Յու. Գ.
Ղահրամանյան Ա. Բ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիրոսով Լ. Ա.
Յալանուզյան Ա. Կ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Յոլչյան Ն. Ի.
Նազարյան Ա. Ս.
Շիրինյան Մ. Ա.
Պողոսյան Բ. Պ.
Սեդրակյան Ս. Գ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Տոնոյան Դ. Է.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Հ. Ս. Քոթանջյան, Ա. Վ. Աթանեսյան, Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների ու գերակայությունների վերլուծությունը ՀՀ ազգային անվտանգության համատեքստում 9

Ա. Ն. Անտոնյան, Ա. Կ. Յալանուզյան, Ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովման արդիական սկզբունքները, եղանակները և մեխանիզմները 21

Ռ. Ա. Այդինյան, ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման որոշ հարցեր 33

Ա. Հ. Գրիգորյան, Կիբեռանվտանգության տեղն ու դերը տեղեկատվական անվտանգության համակարգում 48

Վ. Հ. Մարգարյան, Բացասական տեղեկատվական-հոգեբանական ներգործությանը հոգեբանական հակազդեցության հարցի շուրջ 56

Ա. Գ. Վաղարշյան, Ռազմական և դիվանագիտական գաղտնիքի պահպանության կազմակերպական-իրավական միջոցները Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարաններում . . 67

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ջ. Ա. Թադևոսյան, ՀՀ պարենային անվտանգության ապահովման որոշ խնդիրների շուրջ 78

ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կ. Ա. Գալոյան, «Հակաղրահայաց վերլուծությունը»՝ որպես պաշտպանական-անվտանգային համակարգերի գնահատման մեթոդ 85

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հ. Մ. Գրիգորյան, Զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննությանը խոչընդոտող գործոններ 91

ՌԱԶՄԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ. Վ. Եփրեմյան, Ա. Լ. Հակոբյան, «Արզնի» օդանավակայանի շրջանի ամպամածության գնահատումը թռիչքների անվտանգության ապահովման համատեքստում 102

ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ա. Ա. Մկրտչյան, Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում պարենային ծառայության վարած հաշվառումը ավտոմատացնելու պրոբլեմի շուրջ 110

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հ. Վ. Նազարյան, Առաջին աշխարհամարտում 1918 թվականի մայիսյան հերոսամարտերի և Բաքվի պաշտպանության ռազմավարական նշանակության հարցի շուրջ 116

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան, Ռազմագիտական ոլորտում հայերենի տերմինաշինության որոշ հարցեր 126

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Կ. Ս. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Յ. Սայադյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ռ. Ա. Սաֆրասյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Սիմոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 1 (87)**. 2016**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. Н.*, *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Алексанян А. Дж.*, *Априамов Э. А.*, *Варданян А. Г.*, *Давтян А. М.*, *Елчян Н. И.*, *Исаханян М. Р.*, *Каграманян А. Б.*, *Маргарян В. Г.*, *Мартиросов Л. А.*, *Назарян А. С.*, *Погосян Б. П.*, *Седракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Хачатрян К. А.*, *Хачатрян Т. В.*, *Хачатуров Ю. Г.*, *Ширинян М. А.*, *Яланузян А. К.* (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ

Г. С. Котанджян, А. В. Атанесян. Анализ проблем и приоритетов информационной безопасности в контексте национальной безопасности РА . . . . . 9 (19)*

А. Н. Антонян, А. К. Яланузян. Современные принципы, способы и механизмы информационного обеспечения военных действий . . . 21 (31)

Р. А. Айдинян. Некоторые вопросы обеспечения информационной безопасности РА 33 (45)

А. Г. Григорян. Место и роль кибербезопасности в системе информационной безопасности 48 (55)

В. Г. Маргарян. К вопросу о психологическом противодействии отрицательным информационно-психологическим воздействиям 56 (65)

А. Г. Вагаршян. Организационно-правовые средства защиты военной и дипломатической тайны в парламентах Первой Республики Армения 67 (77)

ПРОДОВОЛЬСТВЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ

Дж. А. Тадевосян. О некоторых проблемах обеспечения продовольственной безопасности РА 78 (83)

ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

К. А. Галоян. «Анализ с позиций противника» как метод оценки оборонно-безопасностных систем 85 (89)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

Г. М. Григорян. Факторы, препятствующие расследованию военных преступлений, совершаемых противоборствующими сторонами вооруженного конфликта 91 (100)

ВОЕННАЯ МЕТЕОРОЛОГИЯ

М. В. Епремян, А. Л. Акопян. Оценка облачности в районе аэродрома «Арзни» в контексте обеспечения безопасности полетов 102 (108)

ТЫЛОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ

А. А. Мкртчян. К проблеме автоматизации ведения учета продовольственной службой в Вооруженных силах Республики Армения . 110 (114)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

Г. В. Назарян. О стратегическом значении героических Майских сражений 1918 г. и обороны Баку в Первой мировой войне 116 (124)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян. Некоторые вопросы терминообразования в военной сфере в армянском языке 126

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, профессор;

Н. У. Аракелян, академик НАН РА;

Л. С. Арзуманян, доктор филологических наук;

Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;

В. М. Арутюнян, академик НАН РА;

Г. Е. Багдасарян, академик НАН РА;

С. А. Галстян, доктор филологических наук, профессор;

С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;

Г. А. Геворкян, академик НАН РА;

К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук;

А. А. Манташян, академик НАН РА;

М. М. Маргарян, доктор политических наук, профессор;

Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;

Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;

М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;

К. С. Мосоян, доктор технических наук, профессор;

Р. А. Сафрастян, академик НАН РА,

О. Я. Саядян, доктор геогрофических наук, профессор,

А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,

А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;

Ю. С. Чилингарян, академик НАН РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 1 (87)**. 2016**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J., Apreamov E. A., Avetisyan V. N., Ayvazyan L. G., Davtyan A. M., Idinyan R. A., Isakhanyan M. R., Kaghramanyan A. B., Khachatourov Yu. G., Khachatryan K. A., Khachatryan T. V., Margaryan V. H., Martirossov L. A., Nazaryan A. S., Poghosyan B. P., Sedrakyan S. G., Shirinyan M. A., Ter-Grigoryants N. G., Tonoyan D. E., Vardanyan A. G., Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*

CONTENTS

IMPROVING INFORMATION SECURITY SYSTEM

H. S. Kotanjian, A. V. Atanesyan. Analysis of the issues and priorities of information security in the context of the RA national security . . . . . 9 (20)*

A. N. Antonyan, A. K. Yalanuzyan. Contemporary principles, methods and mechanisms of Military Information Support Operations 21 (32)

R. A. Idinyan. Some issues of ensuring the RA information security . . 33 (46)

A. H. Grigoryan. The place and role of cybersecurity in the system of information security 48 (55)

V. H. Margaryan. On the issue of psychological counteraction to the negative information psychological impacts 56 (66)

A. G. Vagharshyan. Organizational and legal assets of securing military and diplomatic secrets in the parliaments of the First Republic of Armenia 67 (77)

FOOD SECURITY

J. A. Tadevosyan. On some issues of ensuring the RA food security . . 78 (84)

POLITICAL STUDIES

K. A. Galoyan. "Red teaming" as a method for assessing defense-security systems 85 (90)

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

H. M. Grigoryan. The factors impeding the investigation of war crimes committed by the warring parties to the armed conflict 91 (101)

---

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY METEOROLOGY

M. V. Yepremyan, A. L. Hakopyan. The assessment of cloudiness in the "Arzni" airdrome region in the context of ensuring flight safety . . 102 (109)

LOGISTIC SUPPORT

A. A. Mkrtchyan. To the issue of the automatization of record-keeping by the Food and Rations Service in the Armed Forces of the Republic of Armenia 110 (115)

MILITARY HISTORY

H. V. Nazaryan. Strategic significance of the 1918 May Heroic Battles and Defense of Baku in the World War I 116 (125)

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan. Some issues of Armenian term formation in the military sphere 126

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

R. V. Aghouzoumtsian, Candidate of Psychological Sciences, Professor;
N. H. Arakelian, Full Member, NAS RA;
L. S. Arzumanyan, Doctor of Philology;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
Yu. S. Chilingarian, Full Member, NAS RA;
K. S. Danielyan, PhD in Biology, Doctor of Geography;
S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;
S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
B. N. Harutyunyan, Doctor of Medical Sciences, Professor;
V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;
H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;
R. A. Safrastyan, Full Member, NAS RA;
Hov. Y. Sayadyan, Doctor in Geography, Professor;
A. H. Simonyan, Corresponding Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ

IMPROVING INFORMATION SECURITY SYSTEM

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հ. Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր (ՀՀ), Պաշտպանական ազգային համալսարանի հրավիրված առաջատար պրոֆեսոր (ԱՄՆ), հակաահաբեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ), ՀԱՊԿ-ի գիտափորձագիտական խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ,
Ա. Վ. ԱԹԱՆԵՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան

Տեղեկատվական անվտանգության (ՏԱ) հիմնախնդիրները արդի տեղեկատվական հասարակության պայմաններում աննախադեպ տարածում են ստացել ինչպես անվտանգային-պաշտպանական գործունեության, այնպես էլ միջառարկայական հետազոտությունների դաշտում: Տեղեկույթը, լինելով պետության կենսագործունեության բոլոր ոլորտների համար ռազմավարական ռեսուրս, այսօր իր որակական և ծավալային առումներով գնահատվում է անգամ ավելի բարձր, քան ավանդական նյութական պաշարները: Տեղեկույթն ու տեղեկատվական գործընթացները պետության կողմից իր ենթակառուցվածքների և հասարակության կառավարման, պետությունների միջև համագործակցության և հակամարտության, ռազմավարական, գիտական ու հոգևոր ներուժի կուտակման և ինքնաներկայացման կարևոր միջոցներից են: Պետության ներքին և արտաքին տեղեկատվական քաղաքականությունը ազգային անվտանգության ապահովման կարևոր գործիքներից է, որն իր արդյունավետությամբ և ազգային անվտանգության վրա ունեցած ազդեցությամբ կարող է համեմատվել անվտանգության ավանդական, այդ թվում՝ քաղաքական, ռազմական և տնտեսական, քաղաքականությունների հետ:

ՏԱ-ի սահմանման պրոբլեմը և դրա լուծման եղանակները պայմանավորված են տեղեկատվական տիրույթի և ՏԱ-ի ոլորտի տարաբնույթությամբ ու սահմանների անհստակությամբ: Պետք է նշել, որ ՏԱ-ի հասկացության բովանդակությունը անգլալեզու և ռուսերեն ու հայերեն մասնագիտական գրականության մեջ, ինչպես նաև հայեցակարգային բնույթի փաստաթղթերում տարբեր է:

Անգլալեզու գրականության մեջ ՏԱ *(Information Security)* ասելով հիմնա-

կանում հասկանում են տեխնիկական տեղեկատվական համակարգերի և դրանցում պահպանվող տեղեկույթի պաշտպանվածությունը արտաքին ազդեցություններից, օրինակ. «Տեղեկատվական անվտանգության նպատակն է կազմակերպության այնպիսի արժեքավոր ռեսուրսների պաշտպանությունը, ինչպիսիք են տեղեկույթը, համակարգչային սարքավորանքը և ծրագրերը»[1]: ՏԱ-ի մեկ այլ սահմանմամբ՝ «Տեղեկատվական անվտանգությունը տեղեկույթի և տեղեկատվական համակարգերի պաշտպանությունն է չարտոնված մուտքից, օգտագործումից, հրապարակումից, փոփոխակումից կամ ոչնչացումից, որպեսզի ապահովված լինեն գաղտնիությունը, ամբողջականությունը և մատչելիությունը»[2]: Այս իմաստով ՏԱ-ի հոմանիշներն են «կիբեռանվտանգությունը» *(Cybersecurity)* և «համակարգչային անվտանգությունը» *(Computer security)*, քանի որ ըստ սահմանման՝ կիբեռանվտանգությունը «տեղեկատվական ակտիվների պաշտպանությունն է միջցանցային տեղեկատվական համակարգերի միջոցով մշակվող, պահպանվող և փոխանցվող տեղեկույթին ուղղված սպառնալիքներին դիմակայությամբ»[3], կամ՝ «կիբեռհարձակումներից կիբեռտարածությունը պաշտպանելու կարողությունը»[4]:

«Համակարգչային անվտանգության» առումով «տեղեկատվական անվտանգություն» տերմինի իմաստը բավականին հստակ է, մինչդեռ քաղաքագիտական-քաղաքական և միջգիտաճյուղային իմաստով ՏԱ-ի բովանդակությունը արտահայտում է պետական-քաղաքական, հասարակական, խմբային և անհատական մակարդակները, ԶԼՄ-ները և համացանցային ներազդման տեղեկատվական-հաղորդակցային, սոցիալ-հոգեբանական միջոցները և այլն: Նման լայն իմաստով ՏԱ տերմինի ընկալումն ու կիրառումը հարուցում են մի շարք հարցեր, որոնց մի մասը դեռ հստակեցման կարիք ունի և մշտապես փոփոխվում է: Բացի այդ, ՏԱ-ի հումանիտար չափումը վերջին ժամանակներում դարձել է բազում ինքնակոչ «փորձագետների» շահարկման առարկա. խնդրի ոչ մասնագիտական պարբերական հրապարակային քննարկումները նվազեցնում են ՏԱ-ի գործիքային նշանակությունը քաղաքական, սոցիալ-հոգեբանական, քարոզչական չափումներում:

«Տեղեկատվական անվտանգություն» *(Information Security)* տերմինը տեղեկատվական քաղաքականություն, քարոզչություն, անհատական և խմբային գիտակցության և վարքի վրա ներազդման իմաստներով անգլալեզու գրականության մեջ քիչ է օգտագործվում, իսկ այդ իմաստների բազմազանությունը սովորաբար արտահայտվում է «տեղեկատվական պատերազմի գործիքարան» *(Information Warfare)* տերմինով: Ինչպես նշում է, օրինակ, ՈՒ. Ֆրանկը, «Կան

[1] Տես *Th. R. Peltier, J. Peltier, J. Blackley.* Information Security Fundamentals. Auerbach Publications, 2005, P. 18:

[2] Տես «Glossary of Key Information Security Terms». Ed. by Richard Kissel. National Institute of Standards and Technology, May 2013, P. 94:

[3] Տես «Cybersecurity Fundamentals Glossary». ISACA, 2014, P. 9 (http://www.isaca.org/knowledge-center/documents/glossary/cybersecurity_fundamentals_glossary.pdf):

[4] Տես նույն տեղում:

տեղեկատվական պատերազմին վերաբերող բազմաթիվ տերմիններ: Անգլերենում մեծաթիվ են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են տեղեկատվական օպերացիաները *(information operations)*, հակառակորդի կառավարման համակարգի կազմալուծումը *(command and control warfare)*, հոգեբանական օպերացիաները *(psychological operations)*, տեղեկատվական անվտանգությունը *(information security)*, կիբեռհզորությունը *(cyberpower)*, ներազդման օպերացիաները *(influence operations)*, էլեկտրոնային պատերազմը *(electronic warfare)*, ռազմական խորամանկությունը *(military deception)*, կիբեռանվտանգությունը *(cybersecurity)*, ռազմավարական հաղորդակցությունը *(strategic communication)*, հանրային դիվանագիտությունը *(public diplomacy)*, կիբեռլրտեսությունը *(cyber espionage)*, կիբեռպատերազմը *(cyberwar)* և այլն: Մասնագետների կարծիքով՝ դրանց մի մասն ունի ճշգրիտ և հստակ կերպով սահմանված իմաստ, մյուսները դուրս են եկել գործածությունից կամ էլ պարզապես անհասկանալի են»[5]:

ԱՄՆ-ի Ջորջթաունի համալսարանի քաղաքագետներ Ք. Ջոյների և Ք. Լոտրիոնտիի կարծիքով՝ «տեղեկատվական պատերազմի *(Information Warfare)* վարման ավանդական միջոցները ներառում են հոգեբանական օպերացիաներ, էլեկտրոնային պատերազմ, ռազմական խորամանկություն, ֆիզիկական ոչնչացում և տեղեկատվական հարձակում»[6]:

Ռուսալեզու և հայալեզու գրականության մեջ «տեղեկատվական անվտանգություն» տերմինը գործածվում է երկու իմաստով: Մի կողմից՝ այն արտահայտում է տեղեկատվական քաղաքականության համապատասխան մոտեցումների ու գործողությունների, ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում տեղեկույթի պաշտպանությունն ապահովող կառույցների համախումբը, ինչպես նաև պետական և հասարակական հաստատությունների գործունեության արդյունավետության ապահովման տեղեկատվական բաղադրիչը (տվյալ դեպքում ՏԱ-ն օգտագործվում է լայն իմաստով և միջգիտաճյուղային ուսումնասիրության առարկա է): Մյուս կողմից՝ ՏԱ-ն գործածվում է նեղ իմաստով, երբ նկատի ունեն երևույթի զուտ տեխնիկական-տեխնոլոգիական բաղադրիչը:

Այսպես. «Տեղեկատվական մարտահրավերներ ազգային և միջազգային անվտանգությանը» գրքում ռուսաստանցի հեղինակները տալիս են տեղեկատվական անվտանգության հետևյալ սահմանումը.

«1. Տեղեկատվական տարածության մեջ անհատի, հասարակության և պետության հիմնական շահերի պաշտպանվածության վիճակը, ներառյալ՝ տեղեկատվահեռահաղորդակցային ենթակառուցվածքն ու բուն տեղեկույթը՝ իր այնպիսի հատկությունների առնչությամբ, ինչպիսիք են ամբողջականությունը, օբյեկտիվությունը, մատչելիությունը և գաղտնիությունը,

[5] *U. Franke.* War by non-military means. Understanding Russian information warfare. Ministry of Defense, 2015, P. 10.

[6] *Christopher C. Joyner, Catherina Lotrionte*. Information Warfare as International Coercion: Elements of a Legal Framework. «European Journal of International Law», 2001, N 12 (http://www.ejil.org/pdfs/12/5/1552.pdf).

2. տեղեկատվական տարածության, տեղեկատվական ենթակառուցվածքի և տեղեկույթի այնպիսի համախումբ վիճակ, որի դեպքում.

– տեղեկատվական տարածության համար ապահովվում են դրա ձևավորումն ու զարգացումը՝ ի շահ քաղաքացու, կազմակերպությունների և պետության,

– տեղեկատվական ենթակառուցվածքում տեղեկույթը գործածվում է խստագույնս ըստ նախանշանակման և օգտագործման դեպքում համակարգի (օբյեկտի) վրա չի գործում բացասական ազդեցություն,

– տեղեկույթի համար բացառվում կամ էապես դժվարանում է նրա այնպիսի հատկությունների վատթարացումը, ինչպիսիք են գաղտնիությունը, ամբողջականությունը և մատչելիությունը,

3. անհատի, հասարակության և պետության տեղեկատվական միջավայրի պաշտպանվածությունը կանխամտածված և ոչ կանխամտածված սպառնալիքներից և ազդեցություններից»[7]:

Ս. Գրինյաևը ՏԱ-ն դիտարկում է, մի կողմից, տեղեկատվական օպերացիաների բազմազանության և դրանցում կիրառվող ավանդական ու ժամանակակից գործիքարանի տեսանկյունից և, մյուս կողմից՝ ՏԱ ասելով հասկանում է կիբեռանվտանգությունը՝ տեղեկատվական պրոբլեմները համակարգչային տեխնոլոգիաների ասպարեզում: Ըստ հեղինակի՝ ՏԱ-ի տիրույթը ներառում է անգամ հասարակության հետ պետության կապերը *(PR)*, ինչպես նաև հանրային դիվանագիտությունը *(public diplomacy)*[8]:

ՏԱ-ի տիրույթը սովորաբար դիտարկվում է ըստ համակարգային և կառուցվածքային ու գործառական մոտեցումների, այն է՝ քննարկվում են արտաքին ու ներքին տեղեկատվական ազդեցությունների և դրանց հնարավոր բացասական հետևանքների (սպառնալիքների) առկայության պայմաններում համակարգի (միկրո՝ անհատ, միջին՝ խումբ, կազմակերպություն, մակրո՝ պետություն, հասարակություն, համընդհանուր գործընթացներ) ամբողջականության և արդյունավետ գործառման հիմնահարցերը[9]: Այսպես. «Անվտանգությունը համակարգի այն վիճակն է, որը կապված է այդ համակարգի ամբողջականության, կառուցվածքային ու գործառական առանձնահատկությունների հետ: Անվտանգ վիճակում համակարգը գործում է կայուն կերպով: Համակարգի կայուն աշխատանքի խախտումը նրա անվտանգության խախտումն է»[10]:

---

[7] Տես «Информационные вызовы национальной и международной безопасности». Под общ. ред. А. В. Федорова, В. Н. Цыгичко. М.: ПИР-Центр, 2001, с. 204:

[8] Տես *С. Гриняев.* О концепции тотальной информационной войны. «О некоторых проблемах информационной безопасности». Е.: НОФ «Нораванк», 2009, сс. 49–56:

[9] Համակարգային և կառուցվածքային ու գործառական տեսությունների մասին տես, օրինակ, *N. Luhmann.* Soziale Systeme. Grundriß einer allgemeinen Theorie. Frankfurt am Main: Wissenschaftliche Buchgesellschaft, 1984; *T. Parsons.* Politics and Social Structure. NY: Free Press, 1969:

[10] Տես *А. В. Атанесян.* Актуальные проблемы современных политических и конфликтных коммуникаций. Е.: Изд. ЕГУ, 2008, с. 101:

Ըստ Վ. Գրինյաևի՝ «Ցանկացած, այդ թվում՝ տեղեկատվական անվտանգության, համակարգի համակարգային վերլուծությունը հնարավորություն է տալիս այն ներկայացնելու որպես այնպիսի հավաքածուի բաղադրիչների, որոնցից յուրաքանչյուրը համակարգի գործառման ընդհանուր նպատակների կատարման համար որոշ գործառույթներով միավորված տարրերի բազմություն է: ՏԱ-ի տարրերի և ամբողջ համակարգի վերլուծության համար մտցվում են ռազմավարությունների հասկացություններ…: Սահմանված են հետևյալ ռազմավարությունները.

– տեղեկույթի պաշտպանության ռազմավարություններ (միջոցներ),

– դիտարկվող օբյեկտի վրա հարձակման կանխատեսման ռազմավարություններ (մեթոդներ),

– որոշումների ընդունման ռազմավարություններ (մեխանիզմներ), որոնք հիմնվում են նախորդ երկու ռազմավարությունների կիրառման գումարային գործողության հնարավոր արդյունքների վերլուծության վրա և կազմում են անվտանգության քաղաքականությունը (այն նորմերի, կանոնների և գործնական հնարների ամբողջությունը, որոնցով կարգավորվում են արժեքավոր տեղեկույթի անվտանգությունն ապահովող նրա կառավարումն ու բաշխումը)»[11]:

ՏԱ-ի ուսումնասիրություններում առկա է նաև անվտանգության տեղեկատվական և հոգեբանական հիմնահարցերի միասնական դիտարկումը: Այսպես. Ա. Ի. Պետրենկոն նշում է. «սոցիալ-քաղաքական հարաբերությունների համակարգի տեղեկատվական-հոգեբանական անվտանգությունը սոցիալ-հոգեբանական հարաբերությունների համակարգի այն վիճակն է, որի դեպքում համակարգը իր վրա և՛ կայունացնող, և՛ ապակայունացնող տեղեկատվական-հոգեբանական արտաքին ու ներքին գործոնների ինտենսիվ ազդեցության պայմաններում ի վիճակի է արդյունավետորեն, կայուն կերպով և մշտապես զարգանալ»[12]:

Ս. Պ. Ռաստորգուևը պետության՝ որպես անվտանգության հիմնական սուբյեկտի ՏԱ ասելով շեշտում է տեղեկատվական հոսքերում նրա ունեցած գործառական նշանակությունը. ««Երկրի տեղեկատվական անվտանգությունը» երկրին վնաս պատճառելու նպատակով երկրի ներսից և դրսից գործադրվող որոշակի տեղեկատվական ազդեցությունից պաշտպանվածության զգացում է: Նման տեղեկատվական ազդեցությունը կարող է գործադրվել ցանկացած տեղեկատվական համակարգերի նկատմամբ, որոնց գործունեությունը կախված է մուտք գործող տեղեկույթից, օրինակ՝ մարդկանց (սոցիալական ոլորտ) կամ բարդ տեխնիկական ծրագրավորվող համակարգերի (տեխնիկական ոլորտ)»[13]:

---

[11] *В. В. Гриняев.* О некоторых подходах к описанию модели информационной безопасности. «Труды Третьей Всероссийской научной конференции (29–31 мая 2006 г.)». Ч. 4, «Математическое моделирование и краевые задачи». Самара, 2006, сс. 40–41.

[12] *А. И. Петренко.* Актуальные вопросы обеспечения информационно-психологической безопасности системы социально-политических отношений современного информационного общества. «Россия и Европа: информационное сотрудничество в условиях глобализации». Аналитический вестник Совета Федерации ФС РФ, 2004, № 11 (231).

[13] *С. П. Расторгуев.* Основы информационной безопасности. М.: «Академия», 2009, с. 14.

Հայ հեղինակները ՏԱ-ն հիմնականում օգտագործում են հենց լայն իմաստով՝ նկատի ունենալով այն քաղաքագիտական-քաղաքական հիմնահարցերի ամբողջությունը, որոնց մի ոլորտը՝ ՏԱ-ի ապահովման տեխնիկական-տեխնոլոգիական բաղադրիչը, կիբեռանվտանգությունն է: Այս առումով հայ և ռուսաստանյան հեղինակների մոտեցումները էապես չեն տարբերվում:

Այսպես. «ՏԱ-ն ծավալուն և բովանդակալից հասկացություն է, որը ներառում է ոչ միայն տեղեկատվական-տեխնիկական համակարգերի, ցանցերի և դրանց գործառույթների ապահովության խնդիրները, այլև այն ամենը, ինչ վերաբերում է հոգևոր-հոգեբանական, մտավոր-գիտելիքային ոլորտներին: Կարելի է փաստել, որ ՏԱ-ն փոքր-ինչ ավելի անմիջականորեն, քան ԱԱ-ի (ազգային անվտանգության) մնացյալ բաղադրամասերը, կապված է մարդկային, հանրային, էթնոսոցիալ-հոգեբանական գործոնների ու դրանց վերահսկման և օգտագործման հետ»[14]:

Դ. Չիլինգարյանի և Ա. Սարգսյանի «Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական բառարանում» տրվում է ՏԱ-ի հետևյալ սահմանումը. «Տեղեկատվական անվտանգություն. ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է այն վիճակը, որի դեպքում ապահովվում են տեղեկատվության բնագավառում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումը, տեղեկատվական միջոցների ու կապուղիների պաշտպանվածությունը, ինչպես նաև տեղեկատվական աղբյուրների մատչելիությունը: Նախատեսում է բնակչության բարոյահայրենասիրական ոգու բարձրացման ուղղությամբ տեղեկատվական միջոցառումներ, ինչպես նաև համալիր միջոցներ՝ հավանական հակառակորդի տեղեկատվական ձեռնարկումներին հակազդեցության կարողությունն ապահովելու նպատակով»[15]:

ՏԱ-ն անմիջականորեն առնչվում է ազգային ինքնության և գաղափարախոսության հետ. «Քաղաքական համակարգի տեղեկատվական անվտանգությունը ազգային շահերի, արժեքների, մարդկանց քաղաքացիական գիտակցության ամբողջականության պաշտպանության համակարգ է, որն ապահովվում է ներքաղաքական, գաղափարախոսական մեթոդներով: Գաղափարախոսական պայքարի և պաշտպանության մեխանիզմները ներպետական տեղեկատվական դաշտի կայուն գործառմանն աջակցման հիմնական եղանակներն են, ինչը հնարավորություն է տալիս որոշ չափով վերահսկելու իշխանություններին քաղաքա-

[14] Տես «Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը»: Խմբ. Գ. Ա. Հարությունյան, Հ. Ս. Քոթանջյան: Ե., «Նորավանք» ԳԿՀ, 2009, էջ 9–10, նաև՝ *Гайк Котанджян.* Защищать научную истину от фальсификаций – в союзе с научными элитами мира. «ICES», 20 января 2011 (http://www.elections-ices.org/russian/publications/textid:9159/):

[15] *Դ. Ս. Չիլինգարյան, Ա. Ե. Սարգսյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարան: Ե., 2012, էջ 73–74: Պետք է նշել, որ տվյալ սահմանման մեջ «տեղեկութային անվտանգություն» տերմինի կիրառումը բխում է 2002 թ. մայիսի 15-ին ՀՀ Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի ընդունած որոշումից, ըստ որի՝ «информация» տերմինը հայերենում ունի երկու համարժեք. «1. տեղեկույթ (տեղեկությունը գիտության համակարգում), 2. տեղեկատվություն (տեղեկույթի հաղորդում)» (տես «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու. 1956–2006»: Ե., 2006, էջ 273):

ցիական լոյալությունը և թույլ չտալու քարոզչության արտաքին աղբյուրների հրահրած ներպետական խռովությունների բռնկումներ»[16]:

Անհրաժեշտ է ՏԱ-ի պրոբլեմներն ու ռազմավարությունները դիտարկել նաև ամերիկացի քաղաքագետ Ջոզեֆ Նայի մշակած «փափուկ ուժի» *(Soft Power)* հայեցակարգի շրջանակներում[17], մի հայեցակարգի, որը լայնորեն կիրառվում է ԱՄՆ-ի և մի շարք այլ պետությունների արտաքին քաղաքականության մեջ: Արդի տեղեկատվական գործընթացների համընդհանրության պայմաններում պետությունն անհրաժեշտաբար պետք է իր քաղաքականության ներքին և արտաքին սուբյեկտների նկատմամբ կիրառի ներգործության ոչ միայն ավանդական «կոշտ» (ռազմական, տնտեսական, քաղաքական) միջոցներ *(Hard power)*[*], այլև դրանք ուղեկցող և հանրային կարծիքն ուղղորդող «փափուկ» միջոցներ *(Soft Power)*, որոնց օգնությամբ հնարավոր է «համոզել հակառակորդին չանել այն, ինչ ձեռնտու չէ քեզ»: Ռազմաքաղաքական ներուժի և տնտեսական հզորության հետ տեղեկատվահաղորդակցային միջոցների խելամիտ զուգակցումը արտահայտվում է «խելացի ուժ» *(Smart Power)* տերմինով, որն էլ արտացոլում է առաջատար պետությունների ազգային անվտանգության ռազմավարական գերակայությունների և քաղաքականության արդի միտումները: Ինչպես այդ կապակցությամբ ժամանակին ասել է ԱՄՆ-ի պետքարտուղար Հ. Քլինտոնը, «Մենք պետք է կիրառենք այն, ինչը կոչվում է «խելացի ուժ». մեզ համար մատչելի գործիքների ամբողջ շարքը՝ դիվանագիտական, տնտեսական, ռազմական, քաղաքական, իրավական և մշակութային»[18]:

ԱՄՆ-ի 2015 թ. «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ տեղեկատվական անվտանգության ուղղակի հիշատակումը համապատասխանում է ՏԱ-ի նեղ իմաստին, այն է՝ կիբեռանվտանգությանը: Տեքստի «Կիբեռանվտանգություն» բաժնում մասնավորապես նշվում է. «Որպես Համացանցի ծննդավայր՝ Միացյալ Նահանգներն ունի ցանցային աշխարհն առաջնորդելու համար հատուկ պատասխանատվություն: Ավելի ու ավելի է աճում բարեկեցության ու անվտանգության կախումը բաց, համագործակցելի, պաշտպանված և հուսալի

[16] Տես *А. В. Атанесян.* Актуальные проблемы современных политических и конфликтных коммуникаций, с. 112, նաև՝ *նույնի*՝ Угрозы информационной безопасности РА: трехуровневый анализ. «О некоторых проблемах национальной безопасности». Е., 2010, сс. 183–192; *նույնի*՝ Համացանցը որպես ԼՂՀ ազգային անվտանգության տեղեկատվական պաշտպանության հարթակ: «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ: Ե., 2013, հմ. 6:

[17] «Կոշտ ուժ» *(Hard Power)*, «փափուկ ուժ» *(Soft Power)* և «խելացի ուժ» *(Smart Power)* հայեցակարգերի մասին տես, օրինակ, *J. S. Nye.* Soft Power: The Means to Success in World Politics. NY: Public Affairs, 2004; *նույնի*՝ Limits of American Power. «Political Science Quarterly», 2002, Vol. 117, N 104, PP. 545–559:

[*] Տնտեսական և քաղաքական միջոցները ևս կարող են լինել կոշտ ուժ, հատկապես՝ պատժամիջոցների կիրառման պարագայում:

[18] Տես «Dealing With Today's Asymmetric Threat to U.S. and Global Security». Symposium Three: Employing Smart Power. CACI International Inc., Unclassified, 2009, P. 7 (http://asymmetricthreat.net/docs/asymmetric_threat_3_paper.pdf):

Համացանցից: Մեր տնտեսությունը, ապահովությունը և առողջությունը փոխկապված են ցանցային ենթակառուցվածքով, որը դարձել է պատասխանատվությունից խուսափելու ձգտող թշնամական պետական, քրեական և անհատ ղեկավարների թիրախ: Հենվելով կիբեռանվտանգության կամավոր հայեցակարգի վրա՝ մենք պաշտպանում ենք Դաշնային ցանցերն ու աշխատում մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ ԱՄՆ-ի կենսականորեն կարևոր ենթակառուցվածքի անվտանգությունն ու կայունությունն ամրապնդելու համար»[19]:

Իսկ լայն իմաստով ՏԱ-ի պրոբլեմները քննարկվում են «Արժեքներ» բաժնում. արժեքների ամրապնդումն ու տարածումն ամբողջ աշխարհում ենթադրում են համապատասխան ներքին և արտաքին տեղեկատվաքարոզչական աշխատանք, համընդհանուր տեղեկատվական դաշտում ամերիկյան տեղեկատվական միջոցների հաստատութենական ներկայացվածություն, «փափուկ ուժի» մշտական գործարկում, ինչին և նվիրված է տվյալ բաժինը: Մասնավորապես՝ այնտեղ նշվում է. «Մեր ուժի և անվտանգության աղբյուրն են մեր արժեքները, իսկ դրանք աշխարհում տարածելու մեր կարողությունը ուղղակիորեն կապված է մեր տանն այդ արժեքներով ղեկավարվելու մեր պատրաստակամության հետ: …Ամերիկյան արժեքները արտացոլում են համընդհանուր արժեքները, որոնք մենք պաշտպանում ենք ամբողջ աշխարհում, ներառյալ՝ խոսքի, խղճի և խաղաղ հավաքների ազատությունները, առաջնորդներին ժողովրդավարորեն ընտրելու հնարավորությունը և արդարադատության կատարման պատշաճ ընթացակարգերի իրավունքը»[20]:

Նույնը տեսնում ենք Մեծ Բրիտանիայի 2015 թ. Ազգային անվտանգության ռազմավարությունում, որում դարձյալ կիբեռանվտանգությանը *(«Cyber»)* հատկացված է առանձին բաժին, ինչպես նաև արժեքներին և տեղեկատվական, քաղաքական, ռազմական, տնտեսական ոլորտներում համապատասխան մեթոդաբանությամբ դրանց պաշտպանությանը[21]:

Այլ մոտեցում է ցուցաբերվում ՌԴ ՏԱ-ի հայեցակարգում, որում «տեղեկատվական անվտանգություն» տերմինն օգտագործվում է իր լայն՝ ընդհանուրհումանիտար, իմաստով, և առանձնացվում են ՏԱ-ի ապահովման երեք հիմնական օբյեկտներ՝ պետությունը, հասարակությունը և անհատը. «Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգություն ասելով հասկանում ենք տեղեկատվական ոլորտում անձի, հասարակության և պետության հաշվեկշռված շահերի համախումբը ներկայացնող ՌԴ ազգային շահերի պաշտպանվածության վիճակը: Տեղեկատվական ոլորտում անձի շահերն են՝ տեղեկույթից օգտվե-

[19] Տես «National Security Strategy». The White House, February 2015, PP. 12–13 (https://www.whitehouse.gov/sites/default/files/docs/2015_national_security_strategy.pdf):

[20] Տես նույն տեղում, էջ 19–20:

[21] Տես «National Security Strategy and Strategic Defence and Security Review 2015. A Secure and Prosperous United Kingdom». Presented to Parliament by the Prime Minister by Command of Her Majesty, November 2015, P. 11 (https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/478933/52309_Cm_9161_NSS_SD_Review_web_only.pdf):

լու, օրենքով չարգելված գործունեության վարման, ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման նպատակով տեղեկույթն օգտագործելու՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների իրացումը, ինչպես նաև անձնական անվտանգությունն ապահովող տեղեկույթի պաշտպանությունը:

Տեղեկատվական ոլորտում հասարակության շահերն են՝ այդ ոլորտում անձի շահերի ապահովումը, ժողովրդավարության ամրապնդումը, իրավական սոցիալական պետության ստեղծումը, հասարակական համաձայնության կայացումն ու պահպանումը, Ռուսաստանի հոգևոր նորացումը:

Տեղեկատվական ոլորտում պետության շահերն են՝ ռուսաստանյան տեղեկատվական ենթակառուցվածքի ներդաշնակ զարգացման համար Ռուսաստանի սահմանադրական կարգի անհողդողդության, ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության, քաղաքական, տնտեսական ու սոցիալական կայունության ապահովման նպատակով տեղեկույթ ստանալու և օգտագործելու՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների իրացման համար պայմանների ստեղծումը, օրինականության և իրավակարգի անվերապահ ապահովումը, իրավահավասար ու փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացումը»[22]:

ՀՀ Տեղեկատվական անվտանգության հայեցակարգը, որն ընդունվել է 2009 թ. հունիսի 26-ին, որոշ հատվածներով, այդ թվում՝ ՏԱ-ի ազգային շահերի սահմանման մասով, գրեթե պատճենում է ՌԴ ՏԱ-ի հայեցակարգը և տարբերվում միայն որոշ առանձնահատկություններով, այդ թվում՝ ՏԱ-ի ոլորտում Հայաստան–Արցախ–Սփյուռք համագործակցության անհրաժեշտության շեշտադրմամբ: Այսպես. ՀՀ ՏԱ-ի հայեցակարգում նշվում է. «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը հանրապետության ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրության հետ:

Անհատի շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են մարդու և քաղաքացու՝ օրենքով չարգելված գործունեության իրականացման, ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման համար օգտագործվող տեղեկատվության հասանելիության սահմանադրական իրավունքի իրագործումը, ինչպես նաև շրջակա միջավայրի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և անձնական անվտանգությունն ապահովող տեղեկատվության պաշտպանությունը:

Հասարակության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են անձի շահերի ապահովումն այդ ոլորտում, ժողովրդավարության ամրապնդումը, իրավական-սոցիալական պետության կառուցումը, հասարակական համաձայնության և հանդուրժողականության հաստատումը, ինչպես նաև հայ ժողովրդի և նրա տարբեր հատվածների հոգևոր և պատմամշակութային ժառանգության պահպանումը, ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրությունն ու զարգա-

[22] Տես «Доктрина Информационной безопасности Российской Федерации». Утверждена Президентом Российской Федерации В. Путиным 9 сентября 2000 г. (http://www.scrf.gov.ru/documents/6/5.html):

ցումը, հայ ինքնության հիմնասյուների՝ բարոյահոգեբանական կերտվածքի, հայոց լեզվի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի ամրապնդումը, Հայաստան–Արցախ–Սփյուռք եռամիասնության տեղեկատվական կապի ապահովումը:

Պետության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են համահայկական տեղեկատվական դաշտի ձևավորման, նրա ենթակառուցվածքների ներդաշնակ գործառման և զարգացման, սահմանադրական կարգի, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության անխախտելիության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության, օրինականության և իրավակարգի ապահովման նպատակով անձի և քաղաքացու՝ տեղեկատվության ստացման և օգտագործման բնագավառում նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացման, ինչպես նաև հավասարազոր և փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը»[23]:

Հայաստանի ՏԱ-ի համար հիմնական արտաքին սպառնալիքը ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի սանձազերծած տեղեկատվաքարոզչական պատերազմն է: Ադրբեջանը ոչ միայն խեղաթյուրում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության էությունը, այլև կատարում է նենգափոխումներ, որոնք իրագործվում են պատմագրության աղավաղումների տրամաչափով[24]: Որպես Արևելյան Անդրկովկասի պատմության խեղաթյուրման օրինակ կարելի է նշել հայ բնակչության նկատմամբ քսաներորդ դարի սկզբին կատարված եղեռնական ոճրագործությունների քաղաքական հավասարակշռումը «ադրբեջանցիների նկատմամբ ձեռնարկված ցեղասպանությամբ», որը երբեք էլ տեղի չի ունեցել: Այդ կեղծարարության հիման վրա 1998 թ. Ադրբեջանի Հանրապետության նախագահը հրապարակեց «Ադրբեջանցիների դեմ ցեղասպանության մասին» հրամանագիրը[25]:

Տեղեկատվական ոլորտում ՀՀ «Տեղեկատվական անվտանգության հայեցակարգի» դրույթների իրագործման համատեքստում առանձնակի նշանակություն ունի Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի ձևավորումը: Այն գործելու է ԱՄՆ-ի և ՌԴ առաջատար անվտանգային ուղեղային պետական կենտրոնների հետ համագործակցությամբ ստեղծված ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կազմում, մի հաստատության, որը լինելու է ՀՀ-ում ազգային անվտանգության ապահովման «խելացի ուժի» զարգացման արդյու-

[23] Տես Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» հմ. ՆԿ-97-Ն կարգադրությունը (http://www.arlis.am/documentview.aspx?docID=52559):

[24] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* Ռազմավարական ուղենիշներ Հայաստանի պատմության նենգափոխման դեմ գիտական պայքարում՝ ցանցապետականության տեսանկյունից: «Աշխատանքային տետրեր», 2010, հմ. 4:

[25] Տես *H. S. Kotanjian.* «Referendum As A Gesture Of A Good Will»: Peace And War Scenarios For Karabakh. Presentation at the International Conference «Reassesssing Security in the South Caucasus: Regional Conflicts, Stability and Transformation». Yerevan, 14–15 May 2009 (http://www.harvard-bssp.org/static/files/390/Lyon%20University%20Yerevan%20INSS%20Regional%20Security%20South%20Caucasus%20Conference.pdf):

նավետ գործիքներից մեկը: Ընդսմին նախատեսվում է այդ կենտրոնի հետագա զարգացմամբ ու ծավալմամբ հիմնադրել Կիբեռանվտանգության ռազմավարական հետազոտությունների և ռեսուրսների կառավարման ազգային ինստիտուտ, որին վերապահվելու է տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների, կիբեռանվտանգության ու ռեսուրսների կառավարման ոլորտներում ՀՀ գերազանցության կենտրոնի դեր:

Այսպիսով՝ ՏԱ-ի ոլորտում առկա փոխլրացնող մոտեցումների և գործընթացների համախումբը, ինչպես նաև պետությունների կողմից ՏԱ-ի ոլորտում կոնկրետ գերակայությունների հստակեցումը և ապարատային ջանքերի սիներգիկ գործադրումը նպաստում են պետությունների ազգային անվտանգության առաջնահերթությունների ապահովմանը՝ տեղեկատվաքարոզչական գործունեության ավանդույթների ու ժամանակակից տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների մշտապես աճող հնարավորությունների հաշվառմամբ:

АНАЛИЗ ПРОБЛЕМ И ПРИОРИТЕТОВ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

Г. С. КОТАНДЖЯН, генерал-майор, доктор политических наук (РФ), профессор (РА), приглашенный ведущий профессор Национального университета обороны (США), научный эксперт по контртерроризму (США), член Научно-экспертного совета ОДКБ, Начальник ИНСИ МО РА, А. В. АТАНЕСЯН, доктор политических наук, профессор, Заведующий кафедрой прикладной социологии ЕГУ, ученый-аналитик ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

В статье представлены основные теоретические подходы к определению и концептуализации информационной безопасности и сопутствующих терминов. Рассматривается «широкое» определение информационной безопасности, включающее политико-политологические аспекты проблемы в контексте национальных интересов и стратегий национальной безопасности, а также «узкое» определение, включающее ряд современных направлений анализа вопросов информационной безопасности в рамках кибербезопасности. Кроме того, в статье рассматриваются системный и структурно-функциональный подходы к информационной безопасности.

В качестве одного из актуальных направлений исследований вопросов и стратегий информационной безопасности анализируется концепция «умной силы». В этом контексте подчеркивается важность формирования в составе НИУО МО РА, созданного в сотрудничестве с ведущими государственными «мозговыми» центрами США и РФ в качестве одного из эффективных инструментов развития «умной силы» обеспечения национальной безопасности РА, Центра информационно-коммуникационных технологий и политики национальной безопасности, который в перспективе будет трансфор-

мирован в Национальный институт стратегических исследований кибербезопасности и управления ресурсами, планируемый как центр превосходства РА в сферах ИКТ, кибербезопасности и управления ресурсами.

Современные подходы к концептуализации информационной безопасности в статье анализируются на примерах стратегий и концепций национальной и информационной безопасности США, РФ и РА.

ANALYSIS OF THE ISSUES AND PRIORITIES OF INFORMATION SECURITY IN THE CONTEXT OF THE RA NATIONAL SECURITY

H. S. KOTANJIAN, Major General, Doctor of Political Sciences (Russian Federation), Professor (Republic of Armenia), Distinguished Visiting Professor at the US National Defense University, Counterterrorism Fellow (US), Member of the CSTO Academic-Expert Council, Head of the INSS, MOD, RA, A. V. ATANESYAN, Doctor of Political Sciences, Professor, Head of the Chair of Applied Sociology, YSU, Research Fellow at the INSS, MOD, RA

SUMMARY

The main theoretical approaches to the definition and conceptualization of information security and related terms are discussed in the article. The broad definition of information security is examined, including the political and political science aspects of the issue in the context of national interests and national security strategies, as well as the narrow definition, covering a number of current trends in the analysis of information security issues within the framework of cybersecurity. Besides, the system and structural-functional approaches to information security are studied.

The concept of “smart power” is analyzed as one of the contemporary trends in the study of information security issues and strategies. In this context, a matter of great importance is to establish within the NDRU, MOD, RA – founded in the cooperation with the leading public think tanks of the US and RF as one of the efficient tools for the development of “smart power” of ensuring the RA national security – the Center for Information and Communication Technologies and National Security Policy, which will be ultimately transformed into the National Institute for Cybersecurity Strategic Studies and Resource Management, designed as the RA Center of Excellence in the spheres of the Information and Communication Technologies, Cybersecurity and Resource Management.

Present-day approaches to the conceptualization of information security are analyzed in the article by examples of the national and information security strategies and concepts of the United States of America, Russian Federation and the Republic of Armenia.

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ա. Ն. ԱՆՏՈՆՅԱՆ, գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի զորամասի հրամանատարի տեղակալ, Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովումը» *(Military Information Support Operation՝ MISO)* «պլանավորված գործողություններ են, որոնք ուղղված են ընտրված տեղեկույթը և ազդեցության ցուցիչները արտաքին լսարանին հաղորդելուն՝ նրա զգացմունքների, շարժառիթների, օբյեկտիվ դատողությունների և ի վերջո՝ օտարերկրյա կառավարությունների, կազմակերպությունների, խմբերի ու անհատների վարքի վրա հօգուտ իր նպատակների ազդելու համար»[1]: Առաջ այն կոչվում էր նաև «հոգեբանական օպերացիա» *(«Psychological operations – PSYOP»)*[2]:

ՌԳՏԱ-ն «Ռազմավարական հաղորդակցության» (ՌՀ) կարևոր տարրերից է: ԱՄՆ-ում ՌՀ-ն «կիզակետում է ԱՄՆ-ի կառավարության ջանքերը՝ ուղղված հանգուցային լսարանների ըմբռնմանն ու ներգրավմանը այն նպատակով, որ ազգային հզորության բոլոր գործիքների գործադրման հետ փոխհամաձայնեցված և հավասարակշռված համադասված ծրագրերի, պլանների, թեմաների, հաղորդագրությունների և արտադրանքի կիրառման միջոցով ստեղծվեն, դառնան ավելի ներազդու և պահպանվեն ԱՄՆ-ի կառավարության շահերի, քաղաքականության և նպատակների առաջմղման համար նպաստավոր պայմաններ»[3]: ԱՄՆ-ի զինվորականությունը ռազմավարական հաղորդակցության մեջ «խաղում է կարևոր օժանդակիչ դեր՝ հիմնականում տեղեկատվական օպերացիաների, հանրային գործերի, ինչպես նաև հանրային դիվանագիտությանը պաշտպանական աջակցման միջոցով»[4]:

Աղյուսակ 1-ից երևում է, թե որքան լայն ու բազմապիսի է ԱՄՆ-ի Պաշտպանական գերատեսչության տեղեկատվական գործունեությունը:

ՌԳՏԱ-ն չպետք է շփոթել տեղեկատվական օպերացիայի (ՏՕ) հետ: Վերջինս «ռադիոէլեկտրոնային պայքարի (ՌԷՊ), համակարգչային ցանցային օպերացիաների (ՀՑՕ), հոգեբանական օպերացիաների (ՀոգՕպ), ռազմական մոլորեցման (ՌազՄոլ) և օպերացիաների ծածուկության (ՕպԾած) հիմնական հնարա-

[1] Տես «Military Information Support Operations» (JP 3-13.2), 07 January 2010, Incorporating Change 1, 20 December 2011, P. VII (https://www.pksoi.org/document_repository/Lessons/JP3_13_2_MISO_(20-Dec-2011)-LMS-1255.pdf):

[2] Տես նույն տեղում, էջ III:

[3] Տես «Joint Operation Planning» (JP 5-0), 11 August 2011, P. XIV (http://www.dtic.mil/doctrine/new_pubs/jp5_0.pdf):

[4] Տես նույն տեղում:

Աղյուսակ 1

ԱՄՆ-Ի ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ (ՊԳ)
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ[5]

Գործունեությունը	Առաջնային խնդիրը	Կիզակետը	Նպատակը	Ցանկալի արդյունքը
1	2	3	4	5
ԱՄՆ-ի Կառավարության Ռազմավարական հաղորդակցություն (Պետական կառավարման դեպարտամենտ)	Համադասել այն տեղեկությունը, թեմաները, պլանները, ծրագրերը և գործողությունները, որոնք համաձայնեցված են պետական իշխանության մյուս օղակների հետ	Հասկանալ և ներգրավել հանգուցային լսարանները	ԱՄՆ-ի Կառավարության համար ստեղծել ավելի լավ հնարավորություններ՝ ջանքերի միավորմամբ արտաքին լսարաններն ամբողջովին ներգրավելու նպատակով	Ստեղծել, ավելի ներազդու դարձնել կամ պահպանել այն պայմանները, որոնք նպաստավոր են ազգային շահերի և նպատակների առաջմղման համար
ՊԳ աջակցությունը Ռազմավարական հաղորդակցությանը	Օգտագործել ՊԳ օպերատիվ ու տեղեկատվական գործունեությունը և ռազմավարական հաղորդակցության գործընթացները՝ հանրային դիվանագիտության ոլորտում Պետքարտուղարության ավելի լայն ջանքերին աջակցելու համար	Հանգուցային լսարաններ	Բարելավել ՊԳ գործողությունների և տեղեկության համաձայնեցումը քաղաքականության նպատակների հետ	Ռազմական գործողությունների և օպերացիաների իրագործում ձևավորված միջավայրում
Տեղեկատվական օպերացիաներ	Համախմբել տեղեկատվական օպերացիաների հիմնական, օժանդակ և հարակից հնարավորությունները՝ որպես ռազմական պլանի մաս	Հակառակորդի լսարաններ	Ազդեցություն գործել հակառակորդի որոշումների կայացման մարդկային և ավտոմատացված օղակների վրա, քայքայել, փչացնել կամ տիրանալ դրանց՝ միևնույն ժամանակ պաշտպանելով յուրայինները	Հնարավորությունների օպտիմալ գործադրում՝ ցանկալի ռազմական արդյունքի հասնելու համար
Ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովում (ՌԳՏԱ՝ MISO)	Ազդել թիրախային լսարանի ընկալումների, վերաբերմունքի և համապատասխան վարքի վրա	Թույլատրված արտաքին լսարաններ	Ձևավորել, զսպել, շարժառիթավորել, հակել գործելու	Ընկալումներ, վերաբերմունք կամ վարք, որոնք բարենպաստ են ԱՄՆ-ի կամ նրա բազմազգ գործընկերների նպատակների համար

[5] Տես «Military Information Support Operations», P. II-9 (https://www.pksoi.org/document_repository/Lessons/JP3_13_2_MISO_(20-Dec-2011)-LMS-1255.pdf):

1	2	3	4	5
Հանրային գործեր	Տրամադրել հավաստի, յուրաժամանակ, ճշգրիտ տեղեկույթ ՊԳ գործունեության մասին	ԱՄՆ-ի, դաշնակից, ազգային, միջազգային և ներքին լսարաններ	Հասարակությանը տեղյակ պահել, հակազդել հակառակորդի տեղեկատվական գործունեությանը, զսպել թշնամական գործողությունները, պահպանել ԱՄՆ-ի բնակչության, բարեկամների ու դաշնակիցների հավատն ու վստահությունը	Լսարանի համար պահպանել ԱՄՆ-ի կամ գործընկերների բազմազգ ռազմական օպերացիաների արժանահավատությունն ու օրինականությունը

վորությունների միասնական գործածությունն է՝ հակառակորդի որոշումների մարդկային և ավտոմատացված օղակների կայացման վրա ազդեցություն գործելու, խաթարելու, փչացնելու կամ տիրանալու համար աջակցող և առնչվող կարողությունների զուգակցմամբ և, միևնույն ժամանակ, յուրայինների պաշտպանությամբ»[6]: ՀոգՕպ-ը՝ որպես ՏՕ-ի հիմնական հնարավորություն, կենտրոնական դեր է խաղում միացյալ ուժերի հրամանատարների (ՄՈՒՀ) տեղեկատվական նպատակների իրականացման գործում՝ շնորհիվ այդ նպատակների համար հակառակորդի բարենպաստ վերաբերմունք ու վարք հարուցելու կամ ամրապնդելու նրա կարողության[7]:

ՌԳՏԱ-ի նպատակը հակառակորդի նկատմամբ **տեղեկատվական գերազանցության** ձեռքբերումն է: Ըստ ամերիկյան հետազոտողների՝ տեղեկատվական գերազանցությունը տեղեկույթի անընդհատ հոսքի ստացման, մշակման և տարածման հնարավորությունն է այն դեպքում, երբ հակառակորդը զրկված է դրանից: Տեղեկատվական գերազանցությունը մարտական պատրաստության նոր մակարդակ է, որի անհրաժեշտությունը ծագել է համեմատաբար վերջերս[8]: Մասնագետների կարծիքով՝ ՌԳՏԱ-ն ազդում է անձնակազմի, սպառազինության ու տեխնիկայի կորուստների, նյութական ծախսերի մակարդակների վրա՝ նվազեցնելով դրանք, նպաստում է բանակի ու պետության հեղինակության պահպանմանը նույնիսկ ռազմական գործողությունների անհաջողության դեպքում[9]: Վերջին տասնամյակների զինված հակամարտություններում ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի[10], ինչպես նաև Սիրիայի[11], Ռուսաստանի,

[6] Տես նույն տեղում, էջ IX:

[7] Տես նույն տեղում:

[8] Տես *Т. Л. Партыка, И. И. Попов*. Информационная безопасность. М., 2010, с. 36:

[9] Տես *Н. Д. Плотников*. Информационно-пропагандистское обеспечение операций и боевых действий в военных конфликтах. «Военная мысль» («ВМ»), 1996, № 1:

[10] Տես *Д. Давыдов*. Информационно-психологическая война в Афганистане. «Зарубежное военное обозрение» («ЗВО»), 2012, № 8; *А. Савельев*. Информационное обеспечение применения вооруженных сил США (на примере вторжения в Ирак в 2003 году). «ЗВО», 2015, № 12:

[11] Տես *Д. Семенов*. Роль дезинформации в информационном противостоянии сторон в сирийском конфликте. «ЗВО», 2014, № 12:

ՈՒկրաինայի[12], Չինաստանի[13], Իսրայելի[14] և այլ երկրների զինված ուժերի կիրառման փորձը վկայում է, որ այսօր ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովմանը հատկացվում է մեծ ուշադրություն:

Ընդսմին ԱՄՆ-ում իրագործվող օպերացիայի ընթացքին, սպառազինության մարտական հնարավորություններին ու կիրառման կարգին վերաբերող գաղտնի տվյալները պետք է հուսալիորեն պաշտպանված լինեն ԶԼՄ-ներով հրապարակումներից: Խորհուրդ չի տրվում ԶԼՄ-ներին հաղորդել տեղեկույթ, որը կարող է կասկածի տակ դնել մարտական գործողությունների հաջողությունը, մեծացնել զինծառայողների համար վտանգի աստիճանը, շոշափել դաշնակիցների շահերը, բացահայտել հետախուզական տվյալների ստացման մեթոդներն ու աղբյուրները[15]:

Ըստ այդմ հրապարակման ենթակա չեն՝ զորքերի (ուժերի) մարտական կազմի ու թվաքանակի, նյութատեխնիկական ապահովման միջոցների պաշարների մասին տվյալները, ապագա օպերացիաների կամ հարվածների մշակվող պլանների մանրամասները, զորքերի (ուժերի) տեղաբաշխումը, ռազմական օբյեկտների պահպանության ու պաշտպանության կազմակերպման մասին տվյալները, զորքերի (ուժերի) մարտական կիրառման կարգը, ստորաբաժանումների ու զորամասերի համարները, զորքերի (ուժերի) գործողությունների մարտավարությունն ու մարտական համակարգերի կիրառման արդյունավետությունը բնութագրող տվյալները, հատուկ նախանշանակման զորքերի մարտական օգտագործման մարտավարության ու եղանակի, հանդերձավորման մասին տվյալները, զորքերի (ուժերի) օպերատիվ և թիկունքային ապահովման համակարգում եղած թերությունները, օպերացիայի անցկացման տեմպը: Հրապարակման ենթակա չեն նաև զորքերի կորուստների մասին ընդհանրացված տվյալները: Այս հարցում ամերիկացիների սկզբունքն է՝ հանրությանը հասցնել միայն այն կորուստների մասին տեղեկություններ, որոնք հայտնի են դարձել հակառակորդին[16]:

ՏԵՂԵԿՈՒԹԱՔԱՐՈԶՉԱԿԱՆ (ՏԵՂԵԿՈՒԹԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ) ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ռազմական գործողությունների տեղեկութաքարոզչական (տեղեկութահոգեբանական) ապահովման ընդհանուր սկզբունքները ներկայացնենք առաջատար պետությունների ուժային կառույցների մամուլի կենտրոնների աշխատանքի վեր-

[12] Տես *С. Преображенский*. Информационная война вокруг событий на Украине. «ЗВО», 2014, № 7:

[13] Տես *А. Гущин*. Информационно-психологическое воздействие КНР на Тайвань. «ЗВО», 2014, № 10:

[14] Տես *В. Певцов*. Информационное противостояние организации ХАМАС и Израиля в новом тысячелетии. «ЗВО», 2013, № 6:

[15] Տես *В. Жуков*. Информационное обеспечение военных операций в ВС США и ОВС НАТО. «ЗВО», 2000, № 4:

[16] Տես նույն տեղում:

լուծության[17] և մասնագիտական գրականության ուսումնասիրության[18] հիման վրա: Ըստ այդմ դրանք են.

– տեղեկատվական ապահովման միջոցառումների **պլանավորման գաղտնիությունը**,

– ՌԳՏԱ-ի միջոցառումների **կենտրոնացված ղեկավարումը**,

– **նպատակասլացությունը**, այսինքն՝ ՌԳՏԱ-ի նպատակների համապատասխանեցումը ռազմական օպերացիայի մտահղացմանը,

– ՌԳՏԱ-ի միջոցառումների **փոխհամաձայնեցվածությունը**, այսինքն՝ ՌԳՏԱ-ով զբաղվող բոլոր ռազմական ու քաղաքացիական կառույցների գործունեության համադասումն ըստ միասնական մտահղացման,

– **օպերատիվությունը** (հակառակորդից տեղեկատվությամբ առաջանցումը),

– **անընդհատությունը** (ցանկացած իրավիճակում թիրախային լսարանների վրա մշտական ազդեցությունը),

– տեղեկատվական ազդեցության **համոզչությունը** (ձեռք է բերվում տարածվող տեղեկույթի հավաստիության, արդիականության ապահովմամբ, համոզման և ներշնչման տարբեր միջոցների կիրառմամբ),

– **տեղեկատվական պահանջմունքների բավարարումը** (տեղեկատվության բովանդակության և ձևի համապատասխանեցումը թիրախային լսարանի հետաքրքրություններին),

– տեղեկատվական ազդեցության օբյեկտների **խոցելի կողմերի**, ռազմաքաղաքական և օպերատիվ իրավիճակների **առանձնահատկությունների հաշվառումը**,

– տեղեկատվական ապահովման ուժերի և միջոցների կիրառման **զանգվածայնությունը, համալիրությունը և բազմապիսությունը**:

Տեղեկութաքարոզչական (տեղեկութահոգեբանական) ապահովման հիմնական եղանակներն են՝ համոզումը, ներշնչումը, ապատեղեկատվությունը (խաբում), ձեռնածությունը (մանիպուլյացիա), ասեկոսեների և հնարանքների տարածումը[19]:

ՆԱՏՕ-ի «Ռազմավարական հաղորդակցություն» հայեցակարգում որպես տեղեկութահոգեբանական ապահովման հիմնական գործիքներ, հնարներ ու հնարավորություններ նշված են՝ հանգուցային գործիքները և հնարները *(key tools and techniques),* հոգեբանական օպերացիաները *(psychological operations)*, ներկայությունը, դիրքավորումը և կերպարը *(presence, posture and profile)*, օպերացիաների ծածուկությունը *(operations security)*, տեղեկութային անվտան-

[17] Տես *Ն. Պլուտնիկով*, Նշ. աշխ.:

[18] Տես *В. Крысько*. Секреты психологической войны (цели, задачи, методы, формы, опыт). Минск, 1999, сс. 46–47:

[19] Տես *Վ. Կրիսկո,* Նշ. աշխ., *Е. Е. Бойцова*. Информационное обеспечение военных кампаний, организованных правительством США в современных условиях глобализации: сравнительный анализ военно-политической ситуации в Ираке 1991 и 2003 гг. Автореферат диссертации. Нижний Новгород, 2004 (http://www.dissercat.com/content/informatsionnoe-obespechenie-voennykh-kampanii-organizovannykh-pravitelstvom-ssha-v-sovremen):

գությունը *(information security)*, մոլորեցումը *(deception)*, ռադիոէլեկտրոնային պայքարը *(electronic warfare)*, ֆիզիկական ոչնչացումը *(physical destruction)*, առաջատար ղեկավարների ներգրավումը *(key leader engagement)*[20]:

ՏԵՂԵԿՈՒԹԱՔԱՐՈԶՉԱԿԱՆ (ՏԵՂԵԿՈՒԹԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ) ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

Տեղեկութաքարոզչական (տեղեկութահոգեբանական) ապահովման ժամանակակից մեխանիզմի հիմնական բաղադրատարրերն են՝

– զորքերում բարոյահոգեբանական ապահովման աշխատանքները (տեղեկատվական-դաստիարակչական, հոգեբանական, սոցիալ-իրավական, մշակութաժամանցային, տեղեկատվահոգեբանական)[21],

– ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար հրամանատարության մամուլի ասուլիսներն ու ճեպազրույցները,

– ՁԼՄ-ների միջոցով հրամանատարության դիմումները (ուղերձները) յուրային և հակառակորդի զինծառայողներին և քաղաքացիական բնակչությանը, թռուցիկների տարածումը,

– յուրային զորքերի հաջող և հակառակորդի անհաջող գործողությունների տեսա- և լուսանկարահանումը և ՁԼՄ-ների միջոցով տարածումը,

– ՁԼՄ-ներում հրապարակվող նյութերի ռազմական գրաքննությունը,

– ՁԼՄ-ներով «սպիտակ», «գորշ» և «սև» քարոզչությունների տարածումը[*],

– անցանկալի լուրեր տարածող անձանց հայտնաբերումն ու չեզոքացումը,

– յուրայինների մեջ պարտվողականություն (հակառակորդի ճամբարում՝ հայրենասիրություն) սերմանող ուժերի վարկաբեկման քարոզարշավները[22],

– հակառակորդի համացանցային կայքերի դեմ կիբեռգրոհները,

– սոցիալական ցանցերի գործիքարանի կիրառմամբ տեղեկութաքարոզչական միջոցառումների իրագործումը:

Աղյուսակ 2

ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տեսակը	Տեղեկույթի աղբյուրը	Տեղեկույթի որակը	Նպատակը
«Սպիտակ»	Միշտ նշվում է	Հավաստի	Չի թաքցվում
«Գորշ»	Երբեմն թաքցվում է	Երբեմն ոչ հավաստի	Ձեռնածություն (մանիպուլյացիա)
«Սև»	Միշտ թաքցվում է	Ստահոդ	Խաբեություն

[20] Տես «Allied Joint Doctrine for Information Operations» (AJP 3-10), November 2009, PP. 1-8–1-10 (https://info.publicintelligence.net/NATO-IO.pdf):

[21] Տես *Ա. Ջ. Ալեքսանյան*, Զինվորական ստորաբաժանումներում ԲՀԱ գործընթացի կատարելագործումը՝ մարտական կարողությունների զարգացման համատեքստում: «ՀԲ», 2015, հմ. 4:

[*] Փորձը ցույց է տալիս, որ ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովման արդյունավետության համար պետք է ոչ թե կիրառել քարոզչության տեսակներից միայն մեկը, այլ խելամտորեն համադրել բոլորը (տես *Վ. Կրիսկո*, Նշ. աշխ., էջ 160–161): «Սպիտակ» «գորշ» և «սև» քարոզչությունների բնութագրերը բերված են աղ. 2-ում:

[22] Տես *Ն. Պլուտնիկով*, Նշ. աշխ.:

Նշված մեխանիզմներից առավել կարևորը ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ աշխատանքն է: Դրա արդյունավետության համար պետք է նախօրոք մշակել տարբեր իրավիճակներում ԶԼՄ-ների ներկայացուցիչների աշխատանքի՝ ՌԳՏԱ-ի շահերից բխող սկզբունքները (կանոնները), որոնք են՝

– գաղտնի տեղեկույթի հրապարակման արգելում,

–ռազմաճակատից ԶԼՄ-ների խմբագրություններ հաղորդվող նյութերի հնարավորինս վերահսկում ուժային կառույցների տեղեկատվական մարմինների կողմից,

– իրադարձությունների կամայական, միակողմանի մեկնաբանությունների արգելում,

– գազանությունների, բռնության, ազգային ու կրոնական հատկանիշներով խտրականության փաստերի հրապարակման արգելում[23]:

ԱՄՆ-ում մշակվել է ԶՈՒ-ի և քաղաքացիական ԶԼՄ-ների համագործակցության մի մոդել (այսպես կոչված «ներդրված լրագրողի» *(embedded journalist)* մոդելը[*]), որի էությունը հետևյալն է. քաղաքացիական ԶԼՄ-ների հատուկ կերպով ընտրազատված լրագրողները հավատարմագրվում են բանակի տեղեկատվական բյուրոյում և իրավունք ստանում մարտական գործողությունների ընթացքում լինելու զինվորի կողքին, հասարակայնության հետ կապերի գծով սպաներից ստանալու իրադարձությունների վերաբերյալ մասնագիտական մեկնաբանություններ: Իհարկե, ներդրված լրագրողները պարտավորություն են ստանձնում չհրապարակելու ռազմական գաղտնիք[24]:

Որոշ ամերիկացի լրագրողների կարծիքով՝ այս մոդելի կիրառման նպատակն այն է, որ լրագրողը, զինվորին հավասար վտանգելով իր կյանքը և օգտվելով նրա պաշտպանությունից, հոգեբանորեն չկարողանա ու երբեք քննադատաբար չլուսաբանի մարտական գործողությունները: Նաև նշվում է, որ այս մոդելը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ յուրային զորքը վարում է հաջող մարտական գործողություններ[25]: Անհաջողության դեպքում ներդրված լրագրողը անցանկալի տեղեկույթի սորակորստի միջոց է:

Տեղեկութաքարոզչական (տեղեկութահոգեբանական) ապահովման մեխանիզմների տվյալ ցանկի ընդլայնումը կախված է հակամարտության կողմերի ազգային, հոգեբանական, մշակութային առանձնահատկություններից, հնարամտությունից, տեխնիկական հնարավորություններից: Այսպես. Աֆղանստանում թալիբներն ահաբեկում էին տեղի բնակչությանը, որպեսզի նա չհամագործակցի դաշնադրային ուժերի հետ: Այդ նպատակով օգտագործում էին այսպես կոչված «գիշերային նամակներ»՝ սպառնալիքներով թղթեր կամ պաստառներ, որոնք գիշերը դռների տակից տներ էին մտցնում կամ փակցնում փողոցնե-

[23] Տես նույն տեղում:

[*] Գրեթե նույն մոդելը կիրառվել է նաև ԽՍՀՄ-ում՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

[24] Տես *В. Газетов, М. Ветров*. Когда журналист сильнее солдата. «Независимое военное обозрение» («НВО»), 04.04.2014 (http://nvo.ng.ru/wars/2014-04-04/8_journalist.html):

[25] Տես նույն տեղում:

րում[26]: «Արաբական գարնան» օրերին Թունիսում ու Եգիպտոսում «Թվիտեր» և «Ֆեյսբուկ» սոցիալական ցանցերի օգտատերերն իրենց բջջային հեռախոսներով և էլեկտրոնային փոստով ստանում էին տեղեկույթ՝ բողոքի ցույցի տեղի ու ժամի վերաբերյալ: Հատուկ ծառայություններն ի վիճակի չէին կանխելու այդ հաղորդագրությունների տարածումը, որովհետև սոցիալական ցանցերը կառավարող սպասարկիչները (սերվերները) գտնվում էին ԱՄՆ-ի տարածքում[27]: Այլ կերպ ասած՝ ՌԳՏԱ-ի մեխանիզմները բազմաթիվ են ու բազմազան, և օր-օրի կատարելագործվում են:

ՌԳՏԱ-ի մեխանիզմները կատարելագործելու համար անհրաժեշտ է գնահատել ՌԳՏԱ-ի միջոցառումների արդյունավետությունը, հետևաբար՝ ունենալ արդյունավետության գնահատման չափանիշներ: ԱՄՆ-ը դեռ 2003 թ. Հոգեբանական օպերացիաների դոկտրինում ներառել էր այդ չափանիշները[28], սակայն ո՛չ դրանք, ո՛չ էլ տեղեկատվական օպերացիաների արդյունավետության գնահատման չափանիշները բաց աղբյուրներում չեն հրապարակվում[29]:

2016 Թ. ԱՊՐԻԼԻ 2–5-Ը ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍԱՆՁԱԶԵՐԾԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ («ՁՈՐՍՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ») ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ. ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀՀ հասարակության համար ռազմական գործողությունների վերաբերյալ հավաստի տեղեկույթի հիմնական աղբյուրներից առաջինը ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայության՝ 2,5-3 ժամը մեկ տարածվող հաղորդագրություններն էին, որոնք արագորեն վերահաղորդում էին հայկական մյուս լրատվամիջոցները և սոցիալական ցանցերի օգտատերերը: Այդ հաղորդագրությունների առանձնահատկություններն էին՝ զուսպ, զգացմունքայնությունից զերծ ոճը, զուտ փաստերի ներկայացումը, լուսանկարներով ու տեսանյութերով ուղեկցումը[*]:

Ստեփանակերտում ստեղծվեց նաև օպերատիվ իրազեկման կենտրոն, որի նպատակն էր «պարբերաբար ներկայացնել առաջնագծում տեղ գտնող զարգացումների մասին կանոնավոր և օբյեկտիվ տեղեկատվությունը»[30]:

Հայաստանի հանրության համար տեղեկույթի մյուս հիմնական աղբյուրը ՀՀ պաշտպանության նախարարությունն էր, որը հանդես էր գալիս պաշտոնական

---

[26] Տես *Դ. Դավիդով*, Նշ. աշխ.:

[27] Տես *Ա. Бобров*. Информационная война: от листовки до твиттера. «ЗВО», 2013, № 1; *Ա. Մ. Շահվերդյան*, Բլոգ-կայքերը որպես սոցիալական համախմբման գործիք: «ՀԲ», 2015, հմ. 4:

[28] Տես *Ա. Սավելև*, Նշ. աշխ.:

[29] Տես *Ю. Горбачев*. Ударная мощь информационных операций. «НВО», 28.08.2015 (http://nvo.ng.ru/ concepts/2015-08-28/1_info.html):

[*] Արդեն ապրիլի 2-ի երեկոյից ԼՂՀ ՊՆ մամուլի կենտրոնն սկսեց տարածել ադրբեջանական զինուժի անձնակազմի և զինտեխնիկայի կորուստները փաստող լուսանկարներ ու տեսանյութեր:

[30] Տես «Հաղորդագրություն»: «ԼՂՀ պաշտպանության նախարարություն», 04.04.2016 (http://nkrmil.am/main/am/newsMore1255.html):

հայտարարություններով ու հաղորդագրություններով: ՀՀ պաշտպանության նախարարի մամլո քարտուղարը ևս իր ֆեյսբուկյան էջի միջոցով օպերատիվ կերպով տեղեկություն էր հաղորդում ռազմաճակատում իրադրության մասին, հերքում էր ինչպես Ադրբեջանի ապատեղեկությունը, այնպես էլ մեր հասարակության մեջ ծագող անհիմն լուրերը, պատասխանում լրագրողներին ու քաղաքացիներին հուզող հարցերին, հրապարակում մեր զինծառայողների սխրանքի մասին տեղեկույթ, զոհված հերոսների անուն-ազգանուններն ու լուսանկարները և այլն:

ՀՀ պաշտպանության նախարարությանը աջակցում էին նաև մի ստվար խումբ ֆեյսբուկյան օգտատերեր, որոնք գործում էին փոխհամաձայնեցված կերպով: Նրանք օգտատերերին խորհուրդներ էին տալիս, թե ռազմական գործողությունների ժամանակ համացանցում ինչպես խուսափել ապատեղեկատվության զոհ և աղբյուր դառնալուց, ինչպես տեղեկատվական պատերազմում օգնել մեր երկրին, կանխում էին անհիմն լուրերի ու խուճապի տարածման փորձերը և այլն: ՈՒ թեպետ որոշ «դեղին» ԶԼՄ-ներ, այնուամենայնիվ, տարածեցին ապատեղեկույթ, սակայն օգտատերերի նախաձեռնող խումբը կազմեց ու հրապարակեց այդպիսի «լրատվամիջոցների» ցանկը, որպեսզի մարդիկ չվստահեն դրանց հաղորդումներին:

Հայկական ԶԼՄ-ները ևս օգտվում էին սոցիալական ցանցերում գործող հիշյալ խմբի տրամադրած տեղեկույթից: Այսպես. ԶԼՄ-ներում արագորեն տարածվեց սոցիալական ցանցերում ադրբեջանցի օգտատերերի գրառումների ուսումնասիրությամբ կորզված այն տեղեկույթը, որ Ադրբեջանում խուճապ է, և որ թշնամին մեծ թվով զոհեր ունի[31]:

Արդեն ապրիլի 2-ի երեկոյան հայկական ԶԼՄ-ները, մասնավորապես՝ «www.razm.info» կայքը, սկսեցին անուն առ անուն հրապարակել թշնամու զոհված զինծառայողների՝ սոցիալական ցանցերից վերցված լուսանկարները[32]:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա մինչև ապրիլի 2-ի կեսօր ադրբեջանական ոչ մի կայքում ռազմական գործողությունների մասին տեղեկություն չկար: Սակայն ապրիլի 2-ի երեկոյան Ադրբեջանի հեռուստատեսությունը հաղորդեց, որ Երևանում, իբր, սկսվել են բազմահազարանոց ցույցեր՝ ծանր տնտեսական վիճակը բարելավելու պահանջով: Հայկական լսարանի համար էր նախատեսված նաև ադրբեջանական լրատվամիջոցներով տարածվող այն ապատեղեկույթը, թե իբր՝ Ադրբեջանի Զինված ուժերը գրավել են Արցախի տարբեր բնակավայրեր, իսկ հայկական կողմը կրել է սպառազինության ու ռազմական տեխնիկայի տասնյակ, կենդանի ուժի՝ հարյուրավոր կորուստներ[33]:

ՀՀ ՊՆ-ն ապրիլի 4-ին հրապարակեց ադրբեջանցի զոհված զինծառայողների լուսանկարները, իսկ Ադրբեջանի ՊՆ մամլո քարտուղար Վ. Դյարգյախլին

[31] Տես, օրինակ, ««Ստեղից փախնել ա պետք». Ադրբեջանի բնակիչների խուճապահար արձագանքները (վիդեո)»: «ՌԱԶՄ.info», 02.04.2016 (http://razm.info/81533):

[32] Տես, օրինակ, «Ադրբեջանի ԶՈՒ-ի հայտնի դարձած կորուստները գերազանցում են պաշտոնական թիվը. նախնական»: «ՌԱԶՄ.info», 02.04.2016 (http://razm.info/81599):

[33] Տես «Հերքում»: «ԼՂՀ պաշտպանության նախարարություն», 04.04.2016 (http://nkrmil.am/main/am/newsMore1256.html):

հայտարարեց, թե դրանք արված են 2-3 տարի առաջ ՈՒկրաինայում: Սակայն կադրում կար ավտոմեքենա, որի հայկական պետհամարանիշը հստակորեն երևում էր: Ադրբեջանական որոշ լրատվամիջոցներ ուշադրություն հրավիրեցին այդ հանգամանքի վրա, և Ադրբեջանի ՊՆ հերթական սուտը բացահայտվեց:

Արցախում ադրբեջանցիների հրետակոծությունից հայ երեխայի զոհվելու մասին տեղեկույթի տարածմանն ի պատասխան՝ Ադրբեջանը հրապարակեց երեխաների լուսանկարներ, որոնք, իբր, վիրավորվել էին ապրիլի 2-ի գիշերը՝ հայերի արձակած կրակից: Սոցիալական ցանցերի հայ օգտատերերն արագորեն պարզեցին, որ դրանք 1999 թ. Չեչնիայում և 2015 թ. Սիրիայում արված լուսանկարներ են[34]:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ռազմական գործողությունների տեղեկութահոգեբանական ապահովման նպատակով Հայաստանը կիրառում էր «սպիտակ», իսկ Ադրբեջանը՝ «սև» քարոզչություն: Հակամարտության կողմերի գործելաոճերի այս տարբերությունը նկատելի էր նաև կողմնակի դիտորդների համար: «www.eurasianet.org» կայքի՝ Թբիլիսիի արտահաստիքային թղթակից Ռոբին Ֆորեստիեր-ՈՒոլկերը գրում է, որ ռազմական գործողությունները լուսաբանելու արտասահմանցի լրագրողների հնարավորությունները Հայաստանում և Ադրբեջանում էապես տարբեր էին: Հայկական կողմի աջակցությամբ լրագրողներն առանց խոչընդոտի հասել են Ստեփանակերտ, որտեղ ամեն օր ճեպազրույցներ են վարել տեղի իշխանությունների ներկայացուցիչների հետ: Հայաստանի Հանրային հեռուստատեսությունը ցանկացողներին տրամադրել է արբանյակային կապի անվճար գիծ: Լրագրողներն առանց հսկողության քաղաքային փոխադրամիջոցներով այցելել են տարբեր շրջաններ: Ամեն առավոտ լրագրողներին առաջարկվել է մեկնել առաջնագծում գտնվող Թալիշ և Մարտունի բնակավայրերը:

Ի տարբերություն Հայաստանում աշխատող լրագրողներից, Ադրբեջանում լրագրողները բախվել են դժվարությունների: Ադրբեջանը խստորեն վերահսկել է լրագրողների տեղաշարժը հատկապես այն շրջաններում, որոնք մոտ էին առաջնագծին: Առաջնագծում եղած լրագրողներից մեկն իր այցելությունն անվանել է «հոգնեցուցիչ» և «քառսային»՝ նշելով, որ ավելի շատ իրենց են նկարահանել, քան իրենք (Ադրբեջանի հեռուստալիքներից մեկը արտասահմանյան լրագրողների այցի մասին տեսանյութ էր պատրաստում)[35]:

Միևնույն ժամանակ, այս շրջանում ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովման փորձը ցույց է տալիս, որ տեղեկատվական պայքարի պետական համակարգը անհրաժեշտ է դարձնել ավելի արդյունավետ ու համադասված:

---

[34] Տես «Ադրբեջանական սուտ պրոպագանդան բացահայտված է. ֆոտո»: «BlogNews», 02.04.2016 (http://blognews.am/arm/news/356633/andrbejanakan-sut-propagandan-baca haytvats-e-foto.html):

[35] Տես *Robin Forestier-Walker*. Nagorno-Karabakh: Who Won the Media War? «EURASIANET.org», 18.04.2016 (http://www.eurasianet.org/node/78346):

ԱՄՓՈՓՈՒՄ

Ռազմագետների կանխատեսումներով՝ ապագա պատերազմներում տեղեկութահոգեբանական օպերացիաների նպատակն է լինելու հակառակորդի ռազմական ներուժի զգալի նվազեցումը ոչ ուժային միջոցներով՝ նրա տեղեկատվության վրա համապատասխան ազդեցություն գործելու, նրա բնակչությանը և ԶՈՒ-ի անձնակազմին մոլորեցնելու ու բարոյալքելու ճանապարհով[36]: Տեղեկութահոգեբանական օպերացիաներում պահպանվելու են նոր տեսակի՝ «հիբրիդային»* պատերազմների վարման հիմնական սկզբունքները՝ պատեհաժամություն, հանկարծակիություն և ծածուկություն[37]:

[36] Տես *С. Г. Чекинов, С. А. Богданов*. Прогнозирование характера и содержания войн будущего: проблемы и суждения. «ВМ», 2015, № 10:

* Հիբրիդային են կոչվում այն պատերազմները, որոնց հիմքում քաղաքական-դիվանագիտական, տեղեկութաքարոզչական, ֆինանսատնտեսական, ինչպես նաև ռազմական բնույթի փոխհամաձայնեցված համալիր միջոցառումներն են (տես *В. А. Киселев, И. Н. Воробьев*. Гибридные операции как новый вид военного противоборства. «ВМ», 2015, № 5):

[37] Տես *Ս. Չեկինով, Ս. Բոգդանով*, Նշ. աշխ.:

СОВРЕМЕННЫЕ ПРИНЦИПЫ, СПОСОБЫ И МЕХАНИЗМЫ ИНФОРМАЦИОННОГО ОБЕСПЕЧЕНИЯ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ

А. Н. АНТОНЯН, полковник, заместитель командира войсковой части ВС РА,
А. К. ЯЛАНУЗЯН, полковник, заместитель главного редактора военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

Основными принципами информационно-психологического обеспечения военных действий (ИПОВД) являются: секретность планирования; централизованное управление; целеустремленность, т. е. соответствие целей ИПОВД замыслу военной операции; взаимосогласованность мероприятий; оперативность, непрерывность, действенность информационного воздействия; удовлетворение информационных потребностей целевой аудитории; учет выявленных уязвимых мест объекта информационного воздействия и особенностей военно-политической и оперативной обстановки; массированность, комплексность и разнообразие применения сил и средств информационного обеспечения.

Основными способами осуществления ИПОВД являются убеждение, внушение, дезинформация (обман), манипуляция, распространение слухов и мифов. В концепции Стратегической коммуникации НАТО в качестве основных инструментов, приемов и возможностей ИПОВД, отмечаются скрытность операций, информационная безопасность, радиоэлектронная борьба, физическое уничтожение, вовлечение ключевых لیدеров и т. д.

Основные составляющие механизма ИПОВД – это: морально-психологическое обеспечение войск; пресс-конференции и брифинги командования для представителей СМИ; радио- и телеобращения командования и гражданской администрации; цензорский контроль материалов СМИ из района событий; выявление лиц, распространяющих нежелательные слухи, печатные, аудио- и видеоматериалы и др.

CONTEMPORARY PRINCIPLES, METHODS AND MECHANISMS OF MILITARY INFORMATION SUPPORT OPERATIONS

A. N. ANTONYAN, Colonel, Second-in-command at the Military Unit, RA Armed Forces,
A. K. YALANUZYAN, Colonel, Deputy Editor-in-Chief, Haikakan Banak Defense-Academic Journal, INSS, MOD, RA

SUMMARY

The main principles of Military Information Psychological Support Operations (MIPSO) are: planning confidentiality; centralized management, commitment, i. e. compliance of the MIPSO goals with the intent of military operations; synergy in activities, operability, continuity, efficiency of information impact; satisfaction of information needs of the target audience; consideration of the revealed vulnerabilities of the information impact object and the peculiarities of military-political and operational situation; massiveness, complexity and diversity of using the power and means of information support.

The main methods of implementing MIPSO are persuasion, indoctrination, misinformation (hoax), manipulation, spread of rumors and myths. The operation security, information security, electronic warfare, physical destruction, key leader engagement, etc. are earmarked as the key tools, techniques and capabilities of the MIPSO in the NATO Strategic Communications Concept.

The main components of the MIPSO mechanism are: troops' moral-psychological support; press conferences and briefings of the command for the representatives of the mass media; radio- and tele-appeals of the command and civil administration; censor control of materials of the mass media from the area of events; identification of persons, spreading unwanted rumors, printed, audio and video materials, and others.

ԱԳՐԲԵՋԱՆԻ ՍԱՆՋԱՁԵՐԾԱԾ ՉՈՐՍՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի նախագահությամբ
Ազգային անվտանգության խորհրդի նիստ

Երևան, 2016 թ. ապրիլի 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Դրվագներ հայկական ուժերի
պաշտպանական մարտական գործողություններից

ԼՂՀ ՊԲ ոչնչացրած
ադրբեջանական Մի-24 ուղղաթիռը և ԱԹԱ-ն

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը և ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը
պետական պարգևներ են հանձնում մի խումբ զինծառայողների՝
Արցախի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած խիզախության համար

ԼՂՀ, 2016 թ. ապրիլի 19

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի այցելությունը
ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ

Երևան, 2016 թ. ապրիլի 4

ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ռ. Ա. ԱՅԴԻՆՅԱՆ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական, ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալ

«Разве можем мы так легко допустить,
чтобы дети слушали и воспринимали душой
какие попало мифы, выдуманные кем попало
и большей частью противоречащие тем мнениям,
которые, как мы считаем, должны быть у них,
когда они повзрослеют?»*
Платон. *«Государство. Книга 2»*

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային հանրությունը թևակոխել է զարգացման մի այնպիսի ժամանակաշրջան, երբ պետությունների, հասարակությունների, անհատի կենսագործունեության բոլոր ոլորտները էապես կախված են տեղեկատվական համակարգերից: Աշխարհում ակտիվ գործընթացներ են ծավալվում տեղեկատվահեռահաղորդակցային ցանցերի զարգացման, անձի, հասարակության և պետության հարաբերություններում էլեկտրոնային կառավարման, տեղեկատվական համակարգերի և էլեկտրոնային ծառայությունների համընդհանուր ներդրման ուղղությամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաներն էապես փոխել են մարդկանց կենսակերպը, շփման ձևերը, հասարակական և տնտեսական հարաբերությունները, ինչի հետևանքով աճել է կյանքի բոլոր ոլորտներում տեղեկատվական հոսքերի նշանակությունը և դերը:

Սակայն զարգացման այս միտումներն ուղեկցվում են որակապես նոր բնույթի սպառնալիքներով և մարտահրավերներով, որոնք պահանջում են տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանցով ստեղծված համակարգերի անվտանգության ապահովում, տեղեկատավական հոսքերի համակարգում, ապատեղեկատվությամբ հասարակական կարծիքի խեղաթյուրման կանխում և այլն:

Տեղեկատվական անվտանգությունը շատ լայն ոլորտ է, որը, մի կողմից, ներառում է տեղեկատվական-տեխնիկական համակարգերի ապահովության, մյուս կողմից՝ տեղեկատվահոգեբանական ապահովման պրոբլեմները[1]:

---

* «Կարո՞ղ ենք արդյոք մենք այդքան հեշտ թույլ տալ, որ մեր երեխաները լսեն և հոգով ընկալեն ամեն տեսակի մյութոսներ, որոնք ով ասես հորինում է, և որոնք մեծ մասամբ հակասում են այն կարծիքներին, որոնք, ըստ մեզ, նրանք պետք է ունենան, երբ մեծանան»:–*Խմբ.:*

[1] Տես «Информационная безопасность» (http://bezopasnik.org/article/1.htm#):

Տեղեկատվական անվտանգության դերը հատկապես կարևորվեց տեղեկատվական ոլորտում տեղի ունեցած համընդհանուր առաջընթացի շնորհիվ, երբ կտրուկ աճեց տեղեկատվությունից ու տեղեկատվական տեխնոլոգիաներից հասարակության կախումը: Ընդսմին ձևավորված երևակայական (վիրտուալ) աշխարհը դարձավ անվերահսկելի և խոցելի՝ առաջ բերելով, ինչպես վերը նշվեց, և՛ նոր հնարավորություններ, և՛ նոր սպառնալիքներ:

Տեղեկատվահեռահաղորդակցային ոլորտի զարգացումը հնարավորություն է տալիս աշխարհի գրեթե ցանկացած կետից տարբեր նպատակներով մակածելու ապազգային դրսևորումներ տարածքային և ժամանակային արգելքների շրջանցմամբ: Նպատակներին հասնելու համար օգտագործվում են համակարգչային վիրուսներ, վեբ կայքերի վնասում, տեղեկատվության հափշտակում, խեղաթյուրված տեղեկույթի՝ ապատեղեկույթի տարածում և այլն: Ընդսմին ապատեղեկույթը մշակվում և տարածվում է հատուկ ընտրված բովանդակության ու համապատասխան արտահայտչաձևերի և մատուցման եղանակների ու հնարների կիրառման շնորհիվ՝ թիրախային լսարանի վրա առավել մեծ և արդյունարար ազդեցություն գործելու նպատակով: Միևնույն ժամանակ, կարևոր է նշել, որ ցանցային պայքարի համար պետք չեն մեծ նյութական միջոցներ և անձնակազմ. կարելի է արդյունավետ կերպով գործել անգամ մեկ մասնագետի, համակարգչի կամ հեռախոսի օգտագործմամբ, ընդսմին հաճախ ծախսվում են սակավ ռեսուրսներ, քան տեղեկատվական պատերազմի այլ մեթոդների կիրառման դեպքում: Համակարգչային տեխնոլոգիաների միջոցով հակառակորդի կառավարման համակարգը կաթվածահար անելը նույնպես ավելի էժան և արդյունավետ է, քան ավանդական մեթոդների կիրառման դեպքում[2]:

Տեղեկատվական անվտանգության ռազմավարական նշանակության մասին սկսեցին խոսել հատկապես այն ժամանակ, երբ համաշխարհային քաղաքականության վարման միջոցների շարքում հանդես եկան տեղեկատվական պատերազմները՝ սկիզբ դնելով աշխարհաքաղաքական տեղեկատվական դիմամարտությանը[3]: Այս փաստն առաջատար պետություններին ստիպեց վերանայել իրենց ազգային անվտանգության հայեցակարգերը, ռազմական դոկտրիններն ու օրենսդրական ակտերը՝ դրանց մեջ ներմուծելով անձի, հասարակության և պետության տեղեկատվական ավտանգության ապահովման դրույթներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանելու ռազմավարական նշա-

[2] Տես *Fred Schreier.* On Cyberwarfare, 2015 (https://www.google.ru/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=5&ved=0ahUKEwjg-YCxhZXLAhWqCpoKHQhKBgcQFgg-MAQ&url=http%3A%2F%2Fwww.dcaf.ch%2Fcontent%2Fdownload%2F67316%2F1025687%2Ffile%2FOnCyberwarfare-Schreier.pdf&usg=AFQjCNHSti4VD11zqhHbyC36ASV-0RLJ8g), նաև՝ *Հ. Պալյան*, Համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ներթափանցելը): «Իրավագիտության հարցեր», 2007, հմ. 4:

[3] Տես *А. К. Жарова.* Сущность и структура информационного противоборства. «Государство и право», 2009, № 2; *И. Панарин.* Система информационного противоборства. «Военно-промышленный курьер», 2008, № 41 (http://vpk-news.ru/articles/3672):

նակություն ունեցող սպառնալիքների ու մարտահրավերների ձևափոխման և դրանց համախմբի ընդլայնման նոր միտումներ: Այդ մասին արդեն բարձրաձայնում են տեղեկատվական անվտանգության ոլորտի փորձագետները՝ կիբեռհանցագործության տարբեր դրսևորումներին հակազդեցության միջոցների մշակումը համարելով առավել քան արդիական պրոբլեմ[4]:

Այդ առումով ուշադրության են արժանի 2011 թ. նոյեմբերին Մեծ Բրիտանիայում անցկացված «Կիբեռտարածության հարցերով Լոնդոնյան խորհրդաժողովում» հեղինակավոր փորձագետների և քաղաքական գործիչների տված այն գնահատականները, ըստ որոնց՝ կիբեռհարձակումների վնասները առաղրելի են ռազմական գործողությունների հետևանքով առաջացած վնասների հետ, ինչպես նաև նրանց հնչեցրած այն հարցադրումը, թե՝ «Արդյո՞ք կիբեռպատերազմը կվերածվի երրորդ աշխարհամարտի»[5]:

Ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից ուշագրավ է առանձին պետությունների դեմ իրագործվող ծրագրահենային հարձակումների մասին տեղեկատվությունը, համաձայն որի՝ այդ հարձակումներն ընդունում են նոր բազմափուլ, նպատակային, երկարաժամկետ, համընդհանուր և կործանարար բնույթ: Մի շարք մեծ հեղինակություն վայելող փորձագետների կարծիքով՝ կիբեռտարածությունն արդեն վերածվել է հակառակորդ երկրների համար հակամարտության նոր ասպարեզի, իսկ հարձակումներն ավելի ու ավելի հաճախ են ուղղվում պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների և գերատեսչությունների վրա[6]:

Տվյալ միտումներին արդեն արձագանքել է Մեծ Բրիտանիան՝ «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ կատարելով փոփոխություններ, ըստ որոնց՝ Միացյալ Թագավորության կիբեռտարածության վրա կատարված հարձակումները հավասարեցվել են առաջին կարգի սպառնալիքների, ինչպիսիք են միջազգային ահաբեկչությունը, մեծ բնական աղետները, պետությունների միջև ռազմական բախումները[7]: Միևնույն ժամանակ, 2011 թ. ԱՄՆ-ի Նախագահ Բա-

[4] Տես *Pierluigi Paganini*. Preventing and Recovering from Cybercrime, 4 November 2014 (http://www.tripwire.com/state-of-security/incident-detection/preventing-and-recovering-from-cybercrime/):

[5] Տես «Full text of the Chair's statement from the London Conference on Cyberspace», 2 November 2011 (https://www.gov.uk/government/news/london-conference-on-cyberspace-chairs-statement); *Ольга Дмитриева.* Станет ли кибервойна третьей мировой? «Российская газета», Федеральный выпуск, 02.11.2011, № 5622 (246) (http://rg.ru/2011/11/02/brit.html):

[6] Տես *Warwick Ashford*. Critical infrastructure commonly hit by destructive cyber attacks, survey reveals. «ComputerWeekly.com», 7 April 2015 (http://www.computerweekly.com/news/4500243886/Critical-infrastructure-commonly-hit-by-destructive-cyber-attacks-survey-reveals):

[7] Տես «National Security Strategy and Strategic Defence and Security Review 2015. A Secure and Prosperous United Kingdom», November 2015 (https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/478933/52309_Cm_9161_NSS_SD_Review_web_only.pdf):

բակ Օբամայի հաստատած «Կիբեռտարածությունում գործողությունների միջազգային ռազմավարություն» փաստաթղթով կիբեռտարածությունը պաշտոնապես հայտարարվել է «ռազմական գործողությունների վարման ոլորտ», ինչպիսիք են ցամաքը, ջրային տարածությունը, մթնոլորտը և տիեզերական տարածությունը, և պետության պաշտպանության ու հետախուզական մարմինների գործառույթների մեջ է մտել կիբեռոլորտի նկատմամբ վերահսկողության հաստատումը[8]:

2. ՀՀ-Ի ՀԱՄԱՐ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՅՔԱՐԸ

Մարտահրավերները լինում են ոչ միայն տեխնիկական բնույթի, այլև ընդգրկում են կազմակերպված ու բազմակողմանի ռազմաքաղաքական և անվտանգության հարցեր ու ծրագրեր:

Ներքին մարտահրավերները բաժանվում են երկու հիմնական ենթախմբի. առաջին՝ հոգեբանական և գաղափարական, երկրորդ՝ կազմակերպատեխնիկական:

Արտաքին մարտահրավերները դրսևորվում են նպատակային գործողություններով և ունեն տարաբնույթ անկանխատեսելի դրսևորումներ, որոնք կարող են ի հայտ գալ որոշակի հապաղմամբ՝ ժամանակի ընթացքում: Ակնհայտ է, որ դրանց դեմ կարելի է արդյունավետորեն պայքարել կանխարգելիչ միջոցառումներով:

Միջազգային հարաբերությունների ներկա պայմաններում պատերազմը միայն ռազմական ուժի կիրառում չէ, այլ ենթադրում է նաև տեղեկատվական-հոգեբանական գործողություններ, որոնք նույնքան վտանգավոր են, որքան ռազմական գործողությունները: Հայաստանի համար այս առումով առաջնային նշանակություն ունի հայ հասարակության հոգեբանական պաշտպանվածությունը:

Չպետք է մոռանալ, որ հակառակորդը շարունակում է տեղեկատվական ոլորտում ձեռնարկել հոգեբանական օպերացիաներ: Դա այն հույժ կարևոր հանգամանքներից մեկն է, որը մշտապես պետք է գերակայի մեզանից յուրաքանչյուրի գիտակցության մեջ:

Ադրբեջանի հակահայկական քարոզչությունն ունի բազմաթիվ ուղղություններ, որոնք, ընդհանուր առմամբ, բոլորն էլ միտված են ապատեղեկատվության տարածմամբ միջազգային հանրության կարծիքում Հայաստանի, հայ ժողովրդի վարկանիշը գցելուն և Հայաստանի բնակչության վրա բացասական հոգեբանական ազդեցություն գործելուն:

Նման միջոցներից են.

ա. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը «սև գույնով» պատկերող և այդ վիճակն Արցախի հիմնահարցի հետ կապող թեզերը,

բ. Հայաստանը՝ թշնամիներով շրջապատված լինելու և անելանելի դրության մեջ գտնվելու մասին թեզերը,

[8] Տես «International Strategy for Cyberspace. Prosperity, Security, and Openness in a Networked World». The White House. Washington, May 2011 (https://www.whitehouse.gov/sites/default/files/rss_viewer/international_strategy_for_cyberspace.pdf):

գ. հայերի համար խորհրդանիշ հանդիսացող գործիչներին, ինչպես նաև դեպքերը և իրադարձությունները պախարակող ու արժեզրկող թեզերը,

դ. Ադրբեջանի և ադրբեջանական բանակի օրեցօր հզորացման, ազատագրված տարածքների ոչ հայկականության մասին թեզերը,

ե. ԼՂ հակամարտության կարգավորման գործում նոր միջազգային կառույցների՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, ՆԱՏՕ-ի, Միջազգային իրավապաշտպան կառույցների, Կարմիր խաչի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ կազմակերպությունների, ներգրավման մասին թեզը: Դա է պատճառը, որ Ադրբեջանն անընդհատ շրջանառության մեջ է դնում ԼՂ հակամարտության հետ առնչվող բոլոր հնարավոր պրոբլեմները, ինչպիսիք են՝ փախստականների և բռնի տեղահանվածների, պատմամշակութային հուշարձանների պահպանության, ականազերծման, չպայթած զինամթերքի և այլ հարցեր:

Այս ամենի նպատակը ինչպես հայ հասարակության պառակտումն է, այնպես էլ պարտվողական տրամադրությունների առաջացումն ու խորացումը: Առաջին հայացքից սա կարող է թվալ հայկական բանակի համար անվտանգ, սակայն իրականում այդպես չէ: Խոսելով ազատագրված տարածքների ոչ հայկականության մասին՝ ադրբեջանցիները, առաջին հերթին, հոգեբանական ճնշում են գործադրում հայկական բանակի մարտիկների, հայ հասարակության վրա՝ ձգտելով ներշնչելու, թե նրանք, իբր, կռվում են օտար հողի համար: Թվում է, թե Արցախյան ազատամարտին վերաբերող բոլոր հարցերը հայ հասարակության համար հասկանալի են, սակայն հաճախ մենք մոռանում ենք, որ նոր սերունդը չունի համապատասխան պատմամշակութային գիտելիքներ, ուստի և չի կարելի բացառել, որ Ադրբեջանի այս կեղծ քարոզչական թեզերը իրենց բացասական ազդեցությունը կգործեն հայ պատանիների և երիտասարդների ենթագիտակցության վրա: Սա բոլորիս խնդիրն է, նաև բանակի խնդիրն է, քանի որ այդ պատանիները մեր հայրենիքի վաղվա պաշտպաններն են:

Հաջողության գրավականը հասարակության մեջ առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումն է: Կրթական, մշակութային և ազգային ծրագրերի մշակումն ու իրագործումը հնարավորություն կտան ամուր հիմքերի վրա դնելու մեր երկրի տեղեկատվական քաղաքականությունը: Արդյունավետ քարոզչական քաղաքականության իրականացումը կապված է լուրջ ներպետական և արտաքին ազդակների հետ, հետևաբար՝ միասնական տեղեկատվական քաղաքականությունը կսնի և կամրապնդի հասարակության իրավական, մասնագիտական, տնտեսական և բարոյահոգեբանական հիմքերը:

3. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Տեղեկատվական անվտանգությունը ազգային անվտանգության առանցքային բաղադրիչներից է: Ավանդական մոտեցման դեպքում անվտանգության համակարգը պատկերացվում է աստիճանակարգված կառուցվածքով, որի գագաթը ռազմական ոլորտն է, որից ածանցվում են մյուս բոլոր ոլորտները[9]: Սակայն ժա-

[9] Տես *С. А. Ланцов, Ф. И. Усмонов.* Проблемы безопасности в теории международ-

մանակակից զարգացումները տեսաբաններին ստիպում են հրաժարվել ավանդական մոտեցումներից և ընդունել անվտանգության ապահովման տեսակետից հասարակության կենսագործունեության ոչ ռազմական ոլորտների կարևորությունը: Այս դեպքում անվտանգության համակարգը ներկայանում է ոչ թե բուրգի, այլ մի ցանցի ձևով, որի կենտրոնում գտնվող տեղեկատվական անվտանգությունը փոխկապում է անվտանգության համակարգի մյուս բոլոր բաղադրատարրերը[10]:

Տեղեկատվական անվտանգության համար սպառնալիքները նպատակային և կանոնակարգված գործողությունների ամբողջություն են՝ ուղղված ինչպես անձի, հասարակության և պետության, այնպես էլ պետությունների դաշինքների տեղեկատվական միջավայրի զարգացման ու գործառման դեմ[11]: Դրանք կարելի է բաժանել երկու հիմնական գործառական խմբերի՝ արտաքին և ներքին:

Հարկ է նշել, որ այդ սպառնալիքների բացահայտումն ու որակումը զգալի չափով պայմանավորված են տեղեկատվական ոլորտում ազգային շահի բովանդակության վերաբերյալ ձևավորված համապետական պատկերացումներով, որոնք, իհարկե, կարիք ունեն մանրակրկիտ մշակման ու քննարկման: Այդուհանդերձ, տեղեկատվական անվտանգության ցանկացած համակարգ պետք է այս կամ այն չափով զբաղվի տվյալ հարցերի ուսումնասիրությամբ՝ դրանք կապակցելով որոշակի հանգամանքների և իրողությունների հետ: Ընդսմին ազգային անվտանգությանը վերաբերող հայեցակարգային բնույթի ցանկացած փաստաթուղթ պետք է ներառի տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներին վերաբերող դրույթներ, որտեղ ներկայացված լինեն տեղեկատվական անվտանգության սպառնալիքների չեզոքացման կամ հետմղման հիմնական մեթոդները, եղանակներն ու միջոցները: Միևնույն ժամանակ, տեղեկատվական անվտանգության ապահովման համար մշակվող մեթոդներն ու միջոցները պետք է համապատասխանեն քաղաքական կյանքի ներքին և արտաքին բաղադրիչների գոյատևման հրամայականներին:

Կիբեռտարածությունից բխող սպառնալիքները և մարտահրավերներն արդիական են նաև Հայաստանի Հանրապետության համար: Սա շաղկապված է երկրի գործունեության բոլոր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառման հետ:

ՀՀ-ում ինտերնետ կապի ոլորտը առաջատար դեր ունի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ տեխնիկական և տեխնոլոգիական զարգացման համար: Վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է էլեկտրոնային հաղորդակցության ակտիվ ծավալում, ինչը հնարավորություն է տալիս մատուցելու անհրաժեշտ հե-

---

ных отношений: сравнительный анализ основных направлений. «Политическая экспертиза» (http://www.politex.info/content/view/437/30/):

[10] Տես «Network-Centric Intelligence: An Approach to a Strategic Framework», P. 5 (https://www.google.ru/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=4&ved=0ahUKEwiCxMfX6pTLAhWhDZoKHWrWABMQFggwMAM&url=http%3A%2F%2Fwww.dtic.mil%2Fcgi-bin%2FGetTRDoc%3§D%3DADA467476&usg=AFQjCNFGqJ96Pxyh5njDbzbvB1fdcrESFw):

[11] Տես «Угрозы информационной безопасности» (http://kirillykk.narod.ru/ugroz.html):

ռահաղորդակցային ծառայություններ՝ արդիական տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների կիրառմամբ:

Ոլորտի ընդհանուր զարգացումը մեծապես կախված է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտից, որի բարեփոխումների նպատակով ուսումնասիրվում է միջազգային փորձը, և այդ ուղղությամբ կատարվում են աշխատանքներ: Մասնավորապես՝ անհրաժեշտ է միջազգային փորձին համահունչ կերպով զարգացնել միջօպերատորական հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտը, ինչը կբացառի անբարեխիղճ մրցակցությունը և հնարավորություն կտա դյուրինաբար կազմակերպելու էլեկտրոնային հաղորդակցության գոյություն ունեցող ցանցերի փոխադարձ կապակցումը: Առաջին հայացքից զուտ տեխնիկական և տեխնոլոգիական բնույթ ունեցող այս հարցի լուծումը պահանջում է նաև իրավական կարգավորում, համատեղելիության ապահովում և միասնական ստանդարտների կիրառում: Այդ առումով կարևորվում է Եվրամիության երկրներում կիրառում ստացած համապատասխան ստանդարտների ներդրումը: Միևնույն ժամանակ, կարևոր նշանակություն ունեն ծառայությունների մատուցման շուկայի կարգավորումը և հավասար մրցակցային դաշտի ստեղծումը: Ոլորտի զարգացման համար առանձնակի նշանակություն ունի ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործունեությունը՝ նպատակաուղղված ծառայությունների մատուցման հավասարակշռված շուկայի ստեղծմանը:

Հարկ է նշել, որ հեղինակավոր միջազգային կառույցները, ելնելով միջազգային հանրությանն արդեն այսօր սպառնացող վտանգների բնույթից, ձեռնամուխ են լինում միջազգային տեղեկատվական անվտանգության համակարգի օրենսդրական և տեխնիկական հիմքերի ներդաշնակեցմանը[12]: Այսպես. միջազգային համագործակցության որոշակի հիմնախնդիրներ են առաջանում ինտերնետ ծառայություններ մատուցող այն կազմակերպությունների գործունեության առնչությամբ, որոնք, գտնվելով մեկ մայր ցամաքում, իրենց ծառայություններն են մատուցում ամբողջ աշխարհով մեկ: Օրինակ՝ «Ամերիկան Օնլայն (American Online)» կազմակերպությունը պրովայդերական ծառայություններ է մատուցում ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ասիայում, սակայն ամբողջ «անձնական տվյալների» շտեմարանը պահում է իր գլխավոր գրասենյակում, որը գտնվում է ԱՄՆ-ում: Այսպես. եթե կազմակերպության ծառայություններից օգտվող երկու անձինք, որոնք բնակվում են միևնույն երկրում, միմյանց հաղորդագրություններ են ուղարկում, ապա դրանց վերաբերյալ «անձնական տվյալները» պահվում են ԱՄՆ-ում: ՈՒստի նրանց բնակության պետության իշխանությունները նշված անձանց հաղորդագրությունները վերահսկելու համար պետք է ստանան ԱՄՆ-ի իշխանությունների թույլտվությունը, ինչը, իհարկե, կապված է որոշակի իրավական, ինչպես նաև տեխնիկական բարդությունների հետ և դժվարացնում է կամ առան-

[12] Տես «Конвенция об обеспечении международной информационной безопасности (концепция)» (http://www.scrf.gov.ru/documents/6/112.html), նաև՝ *Հ. Պալյան*, Համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը: «Պետություն և իրավունք», 2006, հմ. 4(34):

ձին դեպքերում անհնար է դարձնում գործի քննության արդյունավետության ապահովումը:

ՀՀ տեղեկատվական անվտանգության* հիմնախնդիրների քննարկումն ու դրանց հնարավոր լուծումների մշակումը մեր պետության համար հույժ արդիական են: Սակայն շատերին թվում է, թե դա «խիստ մոդայիկ զբաղմունք է», որով կարող է զբաղվել նաև խոր մասնագիտական գիտելիքներ, տրամաբանություն ու հմտություններ չունեցող, իրեն «տեղեկատվական անվտանգության փորձագետ» համարող յուրաքանչյուր ոք, որն ունի ընդամենը համակարգչով աշխատելու փորձ: Դա է պատճառներից մեկը, որ ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում առկա են բազում հիմնախնդիրներ, որոնց հետևանքների զոհ կարող է դառնալ ցանկացած քաղաքացի: ՀՀ տեղեկատվական անվտանգության մակարդակը դեռ չի համապատասխանում ժամանակակից չափանիշներին, քանի որ հեռահաղորդակցության համակարգի զարգացումը հանգեցրել է հանրապետությունում այնպիսի ցանցերի և ծառայությունների ներդրման, որոնք տեխնիկապես կառավարվում են դրսից: Միևնույն ժամանակ, այն հանգամանքը, որ հայրենական տեղեկատվական տեխնոլոգիաները հետ են մնում համաշխարհային ստանդարտներից, մեզ ստիպում է ստեղծել տեղեկատվական համակարգեր արտասահմանյան սարքավորանքի և տարրերի օգտագործմամբ, ինչն էապես մեծացնում է այդ համակարգերի խոցելիությունը՝ մշակվող տեղեկատվության չարտոնված օգտագործման հավանականության հաշվառմամբ:

ՀՀ-ի համար հույժ կարևոր է նաև հետևյալ պրոբլեմը: Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ մեծ թվով այլ երկրներում օրենսդրորեն կարգավորված չեն «անձնական տվյալների» կամ այլ համակարգչային արձանագրությունների պահպանման ժամկետները, օգտագործման դեպքերը և կարգը, «անձնական տվյալների» կամ համակարգչային արձանագրությունների այն տեսակները, որոնք պարտադիր կերպով պետք է պահպանեն ինտերնետային պրովայդերի ծառայություններ մատուցող կազմակերպությունները: Մինչդեռ դրանք կարող են ունենալ ապացուցողական նշանակություն և կանխորոշել, օրինակ, քրեական գործի բարեհաջող ավարտը:

Սույն պրոբլեմի նկատմամբ մոտեցումներում կան էական սկզբունքային տարբերություններ: Այսպես. արևմտյան մոտեցումը հիմնվում է այն գաղափարի վրա, որ ինտերնետն ունի նույն կարգավիճակը, ինչ տիեզերքը կամ օվկիանոսը, այսինքն՝ արտերկրային է: Մինչդեռ Ռուսաստանի Դաշնությունը համարում է, որ

* Տեղեկատվական անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ կապված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրության հետ: Տեղեկատվական ոլորտը տեղեկատվություն հավաքող, ձևավորող, տարածող և օգտագործող սուբյեկտների, տեղեկատվության և տեղեկատվական ենթահամակարգերի ամբողջություն է, ինչպես նաև այդ գործընթացների ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգ, որն ազդում է ՀՀ անվտանգության՝ քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա (տես ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» հմ. ՆԿ-97-Ն կարգադրությունը (http://www.arlis.am/documentview.aspx?docID=52559)):

հանցագործին պետք է պատժել այն երկրի օրենքներով, որտեղից կատարվել է հանցագործությունը: Այլ կերպ ասած՝ Ռուսաստանի Դաշնությունը համարում է, որ գոյություն ունեն կիբեռսահմաններ: Այս մոտեցումը խոցելի է, քանի որ այսօր տեղեկատվությունը տեղադրվում է ոչ թե մի սպասարկիչում (սերվեր), այլ տարբեր սպասարկիչներում, որոնք գտնվում են տարբեր երկրներում, այսպես կոչված՝ «ամպում»: Սա գործնականորեն անհնար է դարձնում տեղեկատվության կամ ծրագրի գտնվելու վայրի որոշումը և կոնկրետ պետության օրենսդրության կիրառումը: Որպես լուծում՝ Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանը և Բելառուսը պահանջում են, որ տեղեկատվական աղբյուրները տեղադրվեն իրենց երկրների սահմաններում[13]:

Հայաստանի Հանրապետությունն ընդունում է արևմտյան մոտեցումները, որոնք ամրագրված են Բուդապեշտյան կոնվենցիայում, որը Հայաստանի Հանրապետությունն ստորագրել է 2007 թ.: ՈՒստի պետք է Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական մակարդակով կարգավորել «անձնական տվյալների» օգտագործման կարգն ու պայմանները, դրանց պահպանման ժամկետները, սահմանել տեղեկույթի այն տեսակները, որոնց պահպանումը ինտերնետ պրովայդերի ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար պարտադիր է և այլն:

ՈՒստի նպատակահարմար է թվում ստեղծել գաղտնագրված համակարգչային ցանց, որի միջոցով՝ էլեկտրոնային թվային ստորագրության հնարավորությունների օգտագործմամբ, կապահովվի համակարգչային հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցող պետությունների կամ դրանց իրավասու մարմինների միջև էլեկտրոնային հաղորդակցությունը: Ընդ որում, այդ ցանցի օգտագործման կարգը, պայմանները, օգտագործողների շրջանը պետք է սահմանվի պետությունների միջև կնքված միջպետական համաձայնագրերով: Նման համընդհանուր համակարգչային ցանցի ստեղծումը դյուրին և արդյունավետ կդարձնի համակարգչային հանցավորության դեմ պայքարի գործում պետությունների միջազգային իրավական համագործակցությունը:

Կարևոր պրոբլեմ է նաև հանցագործություն կատարած համակարգչի նույնականացումը: Մասնավորապես՝ գոյություն ունեն որոշակի ծառայություններ, որոնք վճարովի կամ անվճար հիմունքներով ապահովում են համացանցից օգտվող անձանց անանուն լինելը: Նշված ծառայությունների գոյությունն ի չիք է դարձնում տարբեր երկրների իրավապահ մարմինների համագործակցային ջանքերը՝ ուղղված համակարգչային հանցագործությունների բացահայտմանը, և նպաստում է անանուն կերպով հանցավոր գործունեության իրականացմանը: Որոշակի բարդությունների հետ է կապված նաև համացանց մուտք գործելու հնարավորություն տվող հանրային օբյեկտներից համացանց մուտք գործող անձանց նույնականացումը: Այս առումով, կարծում ենք, մեր երկրում ինտերնետ մուտք գործելու հնարավորություն ապահովող հանրային օբյեկտներում անհրա-

[13] Տես *Олег Демидов.* Обеспечение международной информационной безопасности и Российские национальные интересы. «Индекс безопасности», 2013, т. 19, № 1 (104) (http://www.pircenter.org/media/content/files/10/13559089230.pdf):

ժեշտ է ստեղծել օգտվողների հաշվառման որոշակի համակարգ, որն ավելի դյուրին կդարձնի և կուժեղացնի համացանց մուտք գործող անձանց նկատմամբ վերահսկողությունը:

Այսպիսով՝ համակարգչային հանցավորության դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների օրենսդրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք էականորեն տարբերվում են ինչպես քննարկվող ոլորտում հանրորեն վտանգավոր արարքների սահմանված շրջանակներով, այնպես էլ տեղեկատվական իրավահարաբերությունների կարգավորման մակարդակով[14]: Նման պարագայում արդիական նշանակություն է ստանում համակարգչային հանցավորության դեմ պայքարի բնագավառը միջազգային իրավական տեսակետից կարգավորելու, ինչպես նաև տարբեր պետությունների քրեական և քրեադատավարական օրենսդրությունները ներդաշնակեցնելու և պետությունների միջև սերտ համագործակցություն ապահովելու անհրաժեշտությունը: Համակարգչային հանցավորության դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորում ասելով նախ պետք է հասկանալ այն միջազգային իրավական ակտերը, որոնք համագործակցող պետություններին պարտավորեցնում են քրեականացնել համակարգչային տեղեկատվության ոլորտում կատարվող հանրորեն վտանգավոր արարքները: Երկրորդ հերթին՝ միջազգային իրավական կարգավորումը ենթադրում է քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի ենթատեքստում պետությունների տեղեկատվական, քաղաքացիական, ինչպես նաև քրեական և քրեադատավարական օրենսդրությունների համընթաց կատարելագործման անհրաժեշտություն:

4. ՀՀ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԱՍ

ՀՀ ազգային անվտանգության տարբեր բաղադրիչների համար իրական վտանգ են ներկայացնում կիբեռանվտանգության սպառնալիքները, մինչդեռ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը չի ներառում կիբեռանվտանգության հարցերի հիմնական շրջանը:

Հայաստանի Հանրապետությունը խոցելի է կիբեռսպառնալիքների նկատմամբ, քանի որ չունի կիբեռանվտանգության հստակորեն ձևակերպված ռազմավարություն, նման սպառնալիքներին հակազդեցության համապատասխան տեղեկատվական ենթակառուցվածք, ինչպես նաև Համակարգչային պատահարներին արձագանքման թիմեր *(CERT)*: ՈՒստի կիբեռանվտանգությունը պետք է ճանաչվի որպես ազգային անվտանգության առաջնահերթություններից մեկը:

Ներքին անվտանգության ոլորտում այս էական բացերի հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետությունը միջազգային կիբեռհամագործակցության ոլորտում հասել է որոշակի հաջողությունների: Նա մասնակցում է ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի, ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի շրջանակներում տեղի ունեցող մի շարք գործընթացների: Մասնավորապես՝ ՀՀ-ն միացել է ԵՄ-ի «Կիբեռհանցագործությունների

[14] Տես *Հ. Պալյան*, Նշ. աշխ.:

մասին» և «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիաներին[15], որոնց շրջանակներում ստանձնել է կիբեռանվտանգության և տեղեկատվության պաշտպանության ոլորտների ազգային օրենսդրությունը միջազգային կոնվենցիաներից և համաձայնագրերից բխող պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև այդ պահանջների կատարումն ու տվյալ ոլորտներում միջազգային համագործակցությունն ապահովող իրավասու պետական մարմիններ ձևավորելու պարտավորություններ:

2015 թ. մայիսի 26-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել «Մայկրոսոֆտ» ընկերության հետ: ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ «ԵրՄՄԳ» ՓԲԸ-ի հենքի վրա ստեղծվել է կիբեռանվտանգության «Հայ տեք» կենտրոն[16]: Կենտրոնի հիմնական խնդիրներն են. ապահովել պաշտպանական համակարգում բարձր տեխնոլոգիական լուծումների մշակումը և դրանց իրագործումը, ապահովել ներդրված հատուկ պաշտպանական համակարգերի արդյունավետ շահագործումը, առավել արդյունավետ կերպով օգտագործել զորակոչիկների մասնագիտական կարողությունները՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածում, իրականացնել ՊՆ համապատասխան կադրերի ուսուցումն ու վերապատրաստումը, ինչպես նաև համակարգել մասնավոր և կրթական հաստատությունների հետ համագործակցությունը: Կենտրոնը համագործակցելու է կիբեռանվտանգության բնագավառում աշխարհի առաջատար տեխնոլոգիական ընկերությունների հետ, որոնց ներդրած տեխնոլոգիական լուծումները լինելու են տարածաշրջանում միակը:

Կիբեռանվտանգության ոլորտի սպառնալիքների դեմ պայքարում նշանակալի առաջընթաց ապահովելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարությունն ի դեմս իր ՊԱՀՀ-ի, օգտագործելով իր հետազոտական կարողությունները, ինչպես նաև համագործակցելով հայկական առաջատար տեղեկատվական տեխնոլոգիական ընկերությունների հետ, կմշակի ինչպես ՀՀ ՊՆ համակարգի տեղեկատվատեխնիկական ենթակառուցվածքների պաշտպանության լրացուցիչ հայեցակարգային փաստաթղթեր, այնպես էլ ակտիվ մասնակցություն կունենա ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, Ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի առաջ քաշած «ՀՀ կիբեռանվտանգության ռազմավարության» մշակման աշխատանքներին, հանդես կգա որպես գիտահետազոտական համագործակցային կամուրջ կիբեռոլորտում ՀՀ առաջատար կազմակերպությունների և աշխարհի առաջավարական ուղեղային կենտրոնների միջև: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ ՊՆ ՊԱՀՀ-ում արդեն մշակվել է

[15] Տես «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիա: Բուդապեշտ, 23 նոյեմբերի 2001 թ. (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=48028), «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիա: Ստրասբուրգ, 28.01.1981 (http://www.parliament.am/library/bazmakoxm/98.pdf):

[16] Տես «Փոխշահավետ համագործակցություն բարձր տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկությունների հետ», 29 հունիսի 2015 (http://www.mil.am/hy/news/3561):

«Ազգային կիբեռանվտանգության ռազմավարության» նախագիծը, որը փորձաքննություն է անցել աշխարհի առաջատար պետական ուղեղային կենտրոններից մեկում՝ ԱՄՆ-ի ՊԱՀՀ-ում և ս. թ. մարտի 23-ին ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի ծրագրած «Կիբեռանվտանգության ոլորտում կարողությունների զարգացումը ՀՀ-ում հատվածային կարգավորումներից դեպի ռազմավարություն» միջազգային սեմինարի[17] ժամանակ:

5. ԻՐԱՎԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Իրավանորմատիվային դաշտի կատարելագործումը նախատեսում է վերանայել տեղեկատվական ոլորտում ՀՀ ներկայիս օրենսդրությունը՝ ոլորտին առընչվող իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով:

Սկսվել է տեղեկատվական անվտանգության իրավական դաշտի ձևավորումը: Ընդունվել են այդ բնագավառին առնչվող «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին»[18], «Արխիվային գործի մասին»[19], «Տեղեկատվության ազատության մասին»[20], «Անձնական տվյալների պաշտպանության մասին»[21], «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին»[22], «Էլեկտրոնային հաղորդակցության մասին»[23], «Զանգվածային լրատվության մասին»[24], «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»[25], «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին»[26] ՀՀ օրենքները, ստորագրվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի «Հայաստանի Հանրապետության

[17] Տես «Միջազգային սեմինար՝ նվիրված կիբերանվտանգության ոլորտի խնդիրների քննարկմանը», 23.03.2016 (http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=8234&year=2016&month=03&day=23&lang=arm):

[18] Տես «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-94 օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docID=26193):

[19] Տես «Արխիվային գործի մասին» ՀՀ 2004 թ. հունիսի 8-ի հմ. ՀՕ-88-Ն օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docID=1644):

[20] Տես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ 2003 թ. սեպտեմբերի 23-ի հմ. ՀՕ-11-Ն օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1372):

[21] Տես «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ 2015 թ. մայիսի 18-ի հմ. ՀՕ-49-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2015, հմ. 35 (1124)):

[22] Տես «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ 2004 թ. դեկտեմբերի 14-ի հմ. ՀՕ-40-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2005, հմ. 7 (379)):

[23] Տես «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ 2005 թ. հուլիսի 8-ի հմ. ՀՕ-176-Ն օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docid=1869):

[24] Տես «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ 2003 թ. դեկտեմբերի 13-ի հմ. ՀՕ-14 օրենքը (http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1890):

[25] Տես «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ 2006 թ. հունիսի 15-ի հմ. ՀՕ-142-Ն օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docid=25161):

[26] Տես «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ 2006 թ. դեկտեմբերի 5-ի հմ. ՀՕ-258 օրենքը (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2832):

ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին»[27] 2007 թ. փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին»[28] 2007 թ. դեկտեմբերի 25-ի հմ. ՆՀ-308-Ն հրամանագրերը և Նախագահի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին»[29] 2009 թ. հունիսի 26-ի ՆԿ-97-Ն կարգադրությունը:

Վերը նշվածի հաշվառմամբ, մեր կարծիքով, անհրաժեշտություն է առաջացել.

1. մշակելու և ընդունելու տեղեկատվական ոլորտը կարգավորող մեկ հիմքային օրենք, որով սահմանվեն տեղեկատվական ոլորտին առնչվող հիմնական հասկացությունները, տեղեկատվության դասակարգումը՝ ըստ նշանակության, դրա ստեղծման, հաշվառման, ինչպես նաև տեղեկատվական պաշարների և տեղեկատվական համակարգերի ձևավորման, օգտագործման ու պաշտպանության ընթացքում առաջացող հարաբերությունները կարգավորող նորմերը, այդ թվում՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և պարտականությունների ապահովման մեխանիզմները, ինչպես նաև տվյալ ոլորտում գործընթացներին մասնակից սուբյեկտների իրավահարաբերությունները,

2. հստակեցնելու տեղեկատվական ենթակառուցվածքների տեխնիկական և ծրագրային միջոցների առջև դրվելիք անհրաժեշտ պահանջները, ինչպես նաև պաշտոնական կայքերում տեղեկույթի տեղադրման համար պատասխանատվության աստիճանը,

3. ստեղծելու պետական/մասնավոր տեղեկատվական կառույցների հետ տեղեկույթի փոխանակման արդյունավետ մեխանիզմներ:

[27] Տես ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31189):

[28] Տես ՀՀ Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» հմ. ՆՀ-308-Ն հրամանագիրը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116):

[29] Տես ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» հմ. ՆԿ-97-Ն կարգադրությունը (http://www.arlis.am/documentview.aspx?docID=52559):

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОБЕСПЕЧЕНИЯ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ РА

Р. А. АЙДИНЯН, советник 1-го класса СГС, заместитель начальника Управления информации и по связям с общественностью МО РА

РЕЗЮМЕ

Мировое сообщество достигло такого уровня развития, при котором информационные технологии оказывают огромное влияние на образ жизни людей, тем самым предопределяя способы и выбор средств общения, особенности экономических и общественных отношений. Однако данные тен-

денции требуют более тщательного отслеживания потоков информации для обеспечения защиты информационных технологий и созданных на их базе систем, эффективной борьбы с манипуляциями общественным мнением путем дезинформации.

Развитие информационных технологий дает возможность почти из любой точки Земли осуществлять целевую антинациональную и антигосударственную информационную деятельность, что ставит мировое сообщество перед необходимостью противостоять новым угрозам и вызовам. При этом сетевая борьба не требует значительных финансовых вложений и человеческих ресурсов, что делает ее более эффективным средством деструкции систем управления противника. Вследствие этого, обеспечение информационной безопасности становится одной из важнейших задач обеспечения национальной безопасности. Перед такой задачей стоит и Армения. Антиармянская пропаганда Азербайджана многовекторна и, в основном, преследует цель посредством распространения дезинформации очернить в глазах мирового сообщества образ Армении и армянского народа, оказать негативное психологическое влияние на население РА, в первую очередь – личный состав ВС.

В подобных условиях эффективными средствами противостояния информационной войне для Армении представляются: обеспечение здоровой морально-психологической атмосферы в обществе путем разработки и реализации специальных образовательно-воспитательных, культурных и национальных программ; усовершенствование национального законодательства в сфере информационной безопасности с принятием системообразующего базового закона; уточнение системы требований, предъявляемых к техническим и программным средствам информационных инфраструктур; создание эффективных механизмов обеспечения обмена информацией между государственным и частным секторами с созданием надежных систем защиты информации, являющейся государственной тайной.

SOME ISSUES OF ENSURING THE RA INFORMATION SECURITY

R. A. IDINYAN, Special Civil Service 1st Class Advisor, Deputy Chief,
Branch of Information and Public Affairs, MOD, RA

SUMMARY

The international community has reached such a level of development at which information technologies exert a huge impact on the people's mode of life, thus predetermining the methods and choice of means of communication, specifics of economic and public relations. However, these developments call for closer monitoring of information flows to ensure the protection of information technologies and the systems devised on their basis, to effectively combat manipulations of public opinion formed through disinformation.

The development of information technologies makes it possible to carry out targeted anti-national and anti-state information activities from almost any point on the Earth, and that puts the international community before the need to counter new threats and challenges. At the same time, network warfare does not claim for significant financial investments and human resources, which makes it a more efficient way of destructing the enemy's control systems. Hence, the information security has become one of the most important tasks of ensuring national security. Armenia also faces this task. Azerbaijan's anti-Armenian propaganda is multi-vector and, in general, targeted at denigrating the image of Armenia and the Armenian people in the eyes of the international community and exerting a negative psychological impact on the population of the Republic of Armenia, and firstly – on the Armed Forces personnel – through spread of disinformation.

As to Armenia, the effective means of countering information warfare in such circumstances are: ensuring a healthy moral and psychological environment in the society through the development and implementation of special training and educational, cultural and national programs; improving the national legislation in the sphere of information security with the adoption of a backbone framework law; specifying the system of requirements imposed on hardware and software tools of information infrastructures; establishing efficient mechanisms for ensuring information exchange between the public and private sectors with the creation of reliable systems for protecting state secret information.

ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ա. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի կիբեռանվտանգության խմբի պետ

Մարդկության զարգացման արդի փուլում՝ համընդհանրացման պայմաններում, տեղեկույթի ծավալների սրընթաց աճումը և տեղեկատվությունից ու տեղեկատվական համակարգերից հասարակության զգալի կախվածությունը էապես նպաստում են տեղեկութակենտրոն հասարակության ձևավորմանը: Ակնհայտ է, որ ներկայումս տեղեկատվական ռեսուրսները էական ազդեցություն են գործում պետության քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտների զարգացման վրա, ինչն իր հերթին ավելի է մեծացնում ազգային անվտանգության համակարգում տեղեկատվական անվտանգության ունեցած դերն ու նշանակությունը: Տեղեկատվական անվտանգության ապահովումը ենթադրում է անվտանգության հիմնասյուների՝ գաղտնիության, ամբողջականության և հասանելիության[1] համակարգված և պլանաչափ ապահովում:

Տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտին վերաբերող ժամանակակից գրականությունում «տեղեկատվության հավաստիություն» *(information assurance)*, «տեղեկատվական անվտանգություն» *(information security)*, «կիբեռանվտանգություն» *(cybersecurity)*, «տեղեկույթի տեխնոլոգիական անվտանգություն» *(information technology security)* տերմինները հաճախ օգտագործվում են միևնույն իմաստով: Մինչդեռ դրանք թեև ունեն մասնակի իմաստային և կիրառական ընդհանրություններ, սակայն, ինչպես ցույց կտանք ստորև, ունեն և որոշակի տարբերություններ:

Նախ նշենք, որ “information”–«информация» տերմինը հայերենում ունի, ըստ այդ տերմինով նշանակվող երկու տարբեր հասկացությունների, երկու հիմնական համարժեքներ՝ 1) տեղեկույթ, 2) տեղեկատվություն[2]: Հարկ է նաև առանձնացնել տեղեկույթի երկու հիմնական կողմերը՝ բովանդակային և գրանցումամշակումային:

---

[1] Տես «Cybersecurity/Information Assurance (IA) Instruction» (DCMA-INST 815). US Department of Defense. Defense Contract Management Agency, 10 July 2014 (http://www.dcma.mil/policy/815/DCMA-INST-815.pdf); «Standards for Security Categorization of Federal Information and Information Systems» (FIPS PUB 199). National Institute of Standards and Technology (NIST), February 2004 (http://csrc.nist.gov/publications/fips/fips199/FIPS-PUB-199-final.pdf):

[2] Տես «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու 1956–2006»: Ե., 2006, էջ 273, *նաև՝ Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 577, 578:

Այժմ քննենք մյուս առանցքային տերմինների անգլերեն–ռուսերեն–հայերեն զուգահեռների հարցը:

“information assurance” – «достоверность информации» – «տեղեկատվական հավաստիություն»

ԱՄՆ-ի Պաշտպանության դեպարտամենտի Պաշտպանության գծով պայմանագրերի կառավարման գործակալության *(US DOD DCMA)* կիբեռանվտանգության և տեղեկատվության հավաստիության հրահանգների համաձայն՝ տեղեկատվության հավաստիությունը պաշտպանության, հայտնաբերման և արձագանքման այն կարողություններն ու միջոցներն են կամ դրանց համախումբը, որոնք գաղտնիության, ամբողջականության, հասանելիության, իսկության և անհերքելիության* ապահովման շնորհիվ ծառայում են տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի պաշտպանությանը[3]: Տեղեկատվության հավաստիությունը նույն կերպ է սահմանվում նաև ԱՄՆ-ի Ստանդարտների և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի տեղեկատվական անվտանգության հիմնական տերմինների բառարանում (ՏԱՀՏԲ)[4]: Այովայի պետական համալսարանի Տեղեկատվության հավաստիության ոլորտում գերազանցության ապահովման կենտրոնը տեղեկատվության հավաստիության ապահովումը սահմանում է որպես տեղեկատվական ռիսկերի կառավարում, տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի պաշտպանություն՝ գաղտնիության, ամբողջականության, հասանելիության, իսկության և անհերքելիության պահպանմամբ[5]:

Շարադրվածի հաշվառմամբ կարելի է պնդել, որ տեղեկատվության հավաստիությունը համընդգրկուն հասկացություն է, որը խարսխվում է մարդկանց, գործընթացների և տեխնոլոգիաների համախմբի հարացույցի վրա: Այն կարելի է սահմանել որպես վիճակ, որի դեպքում ապահովվում են տեղեկատվության բնագավառում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումը, տեղեկատվության, տեղեկատվական համակարգերի, միջոցների ու կապուղիների պաշտպանվածությունը, ինչպես նաև տեղեկատվական աղբյուրների մատչելությունը՝ գաղտնիության, ամբողջականության և հասանելիության պահպանմամբ (տես նկ. 1):

“**information security**” – «**информационная безопасность**» – «**տեղեկատվական անվտանգություն**»

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի՝ արևմտյան ու ռուսաստանյան պաշտպանական-անվտանգային տերմինաբանական-հասկացութային համակարգերի համադրմամբ կազմ-

* Տվյալ տերմինը նշանակում է, որ հասցեագրողի և հասցեատիրոջ միջև տեղեկույթի փոխանցման հավաստիությունը երաշխավորված է, և կողմերը չեն կարող հերքել տեղեկույթի ուղարկման և ստացման փաստը:

[3] Տես «Cybersecurity/Information Assurance (IA) Instruction» (DCMA-INST 815) (http://www.dcma.mil/policy/815/DCMA-INST-815.pdf):

[4] Տես «Information Assurance (IA)». «Glossary of Key Information Security Terms» (NISTIR 7298). Revision 2. Ed. by Richard Kissel, May 2013, P. 93 (http://nvlpubs.nist.gov/nistpubs/ir/2013/NIST.IR.7298r2.pdf):

[5] Տես «What is Information Assurance?». «Iowa State University Information Assurance Center» (http://www.iac.iastate.edu/):

ված եռալեզու բացատրական բառարանում տեղեկատվական անվտանգությունը սահմանվում է որպես «սուբյեկտի (անհատի, հասարակության) այն վիճակը, որի դեպքում տեղեկույթի և սուբյեկտի փոխազդեցության հետևանքով սուբյեկտի մեջ առաջացած փոփոխությունը սպառնալիք չի հարուցում նրա ֆիզիկական ու հոգեկան առողջության, ինչպես նաև հասարակության ու պետության համար»[6]:

Բառարանում բերված է նաև «տեղեկութային անվտանգություն» տերմինը, որը սահմանվում է որպես «ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է այն վիճակը, որի դեպքում ապահովվում են տեղեկատվության բնագավառում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումը, տեղեկատվական միջոցների ու կապուղիների պաշտպանվածությունը, ինչպես նաև տեղեկատվական աղբյուրների մատչելիությունը: Այն նախատեսում է բնակչության բարոյահայրենասիրական ոգու բարձրացման ուղղությամբ տեղեկատվական միջոցառումներ, ինչպես նաև համալիր միջոցներ հավանական հակառակորդի տեղեկատվական ձեռնարկումներին հակազդեցության կարողությունն ապահովելու նպատակով»[7]: Ըստ ՏԱՀՏԲ-ի՝ «տեղեկատվական անվտանգությունը» գաղտնիության, ամբողջականության և հասանելիության ապահովման նպատակով տեղեկույթի, տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի պաշտպանությունն է չթույլատրված մուտքից, օգտագործումից, հրապարակումից, խեղաթյուրումից, փոփոխումից և ոչնչացումից[8]: Ըստ ISO/IEC 27000 միջազգային ստանդարտի՝ տեղեկատվական անվտանգությունը տեղեկույթի և տեղեկատվության գաղտնիության, ամբողջականության և հասանելիության պահպանումն է[9]: Վիտմանն ու Մետորդն իրենց աշխատությունում տեղեկատվական անվտանգությունը սահմանում են որպես տեղեկույթի և դրա փոխանակման համար կարևոր բաղադրիչների (ներառյալ՝ այն համակարգերն ու սարքերը, որոնց միջոցով հիշապահվում, օգտագործվում և փոխանցվում է տեղեկույթը) պաշտպանությունը՝ գաղտնիության, ամբողջականության, հասանելիության, ստուգության և հավաստիության ապահովմամբ[10]:



Նկ. 1. Անվտանգության բաղադրիչների համադրման հարացույց

[6] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Նշ. աշխ., էջ 76:

[7] Տես նույն տեղում:

[8] Տես «Information Security». «Glossary of Key Information Security Terms» (NISTIR 7298), P. 94 (http://nvlpubs.nist.gov/nistpubs/ir/2013/NIST.IR.7298r2.pdf):

[9] Տես «International Standard ISO/IEC 27000:2014(E). Information technology – Security techniques – Information security management systems – Overview and vocabulary». Ed. 3, 2014 (http://c.ymcdn.com/sites/www.casro.org/resource/resmgr/Code/c063411_ISO_IEC_27000_2014.pdf):

[10] Տես *M. E. Whitman, H. J. Mattord.* Principles of information security. Ed. 3. Thomson Course Technology, 2009:

Ասվածի հաշվառմամբ տեղեկատվական անվտանգությունը կարելի է սահմանել որպես չթույլատրված ծանոթացումից, օգտագործումից, մշակումից և/կամ հրապարակումից տպածո, գրածո, թվային կրիչների վրա պահվող կամ թվային միջոցներով փոխանցվող տեղեկույթի, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի ու այլ ակտիվների պաշտպանվածության վիճակը՝ տեղեկույթի գաղտնիության, ամբողջականության և հասանելիության ապահովմամբ:

"**cybersecurity**" – «**кибербезопасность**» – «**կիբեռանվտանգություն**»

ՏԱՀՏԲ-ում կիբեռանվտանգությունը սահմանվում է որպես կիբեռհարձակումներից կիբեռտարածությունը պաշտպանելու կարողություն[11]: Ըստ ՄԱԿ-ի Հեռահաղորդակցության միջազգային միության *(ITU)*՝ կիբեռանվտանգությունը այն միջոցների, ռազմավարությունների, անվտանգության սկզբունքների, անվտանգության երաշխիքների, ռիսկերի կառավարման նկատմամբ մոտեցումների, գործողությունների, մասնագիտական պատրաստման, առաջավոր փորձի, հավաստիության և տեխնոլոգիաների հավաքածուն է, որոնք կարող են օգտագործված լինել կիբեռմիջավայրի և կազմակերպության ու օգտագործողի ռեսուրսների պաշտպանության նպատակով[12]: Կիբեռանվտանգության և տեղեկատվության հավաստիության վերաբերյալ ԱՄՆ-ի Պաշտպանության դեպարտամենտի Պաշտպանության պայմանագրերի կառավարման գործակալության *(US DOD DCMA)* հրահանգների համաձայն՝ կիբեռանվտանգությունը համակարգիչների, էլեկտրոնային հաղորդակցության համակարգերի և ծառայությունների, ռադիոկապի ու հեռահաղորդակցության, ինչպես նաև դրանցում եղած տեղեկույթի պաշտպանությունը, վնասների կանխումն ու վերացումն է՝ գաղտնիության, ամբողջականության, հասանելիության, իսկության և անհերքելիության ապահովմամբ[13]:

Այս տեսանկյունից կարևոր է նաև տեղեկույթի տեխնոլոգիական անվտանգությունը, որը կարելի է սահմանել որպես վիճակ, որի դեպքում անհրաժեշտ միջոցների, եղանակների և համակարգերի կիրառման շնորհիվ ապահովված է տարբեր տեխնոլոգիաների կիրառմամբ պահվող, մշակվող, փոխանցվող և/կամ հաղորդվող տեղեկույթի անվտանգությունը[14]:

Ասվածի հաշվառմամբ կիբեռանվտանգությունը կարելի է սահմանել որպես վիճակ, որի դեպքում կիբեռտարածությունը և դրանում եղած տեղեկույթը, տեղեկատվական համակարգերը և ենթակառուցվածքները, կատարվող տեղեկատվութ-

[11] Տես «Cybersecurity». «Glossary of Key Information Security Terms» (NISTIR 7298), P. 58 (http://nvlpubs.nist.gov/nistpubs/ir/2013/NIST.IR.7298r2.pdf):

[12] Տես «ITU-T X.1205: series X: data networks, open system communications and security: telecommunication security: overview of cybersecurity». International Telecommunications Union (ITU), 2008 (https://ccdcoe.org/sites/default/files/documents/ITU-080418-Recom OverviewOfCS.pdf), նաև՝ *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Նշ. աշխ., էջ 74:

[13] Տես «Cybersecurity/Information Assurance (IA) Instruction» (DCMA-INST 815) (http://www.dcma.mil/policy/815/DCMA-INST-815.pdf):

[14] Տես «Information technology–security techniques–management of information and communications technology security». Part 1: «Concepts and models for information and communications technology security management» (ISO/IEC. ISO/IEC TR 13335-1:2004) (https://law.resource.org/pub/in/bis/S04/is.iso.iec.13335.1.2004.pdf):

յունը, տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաներն ու դրանք օգտագործող սուբյեկտները, այլ տեղեկութահենք ու ոչ տեղեկութահենք ակտիվները պաշտպանված են կիբեռհարձակումներից:

Տվյալ հասկացությունների շարքի ձևավորումն սկսվել է տեղեկույթի տեխնոլոգիական անվտանգության հասկացության ստեղծմամբ, քանի որ անհրաժեշտ էր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համեմատ ապահովել տեղեկատվական համակարգերի, սարքավորանքի և տեխնոլոգիաների անվտանգությունը: Այնուհետև հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներ տեղեկատվական տեխնոլոգիաների արագ ներթափանցման հետևանքով աճեց տեղեկույթի և դրա անվտանգ փոխանակման կարևորությունը: Հարկ է նշել, որ



Նկ. 2. Անվտանգային հասկացությունների փոխհարաբերությունը

տեղեկատվական անվտանգությունն ունի ինչպես բովանդակային, այնպես էլ տեխնիկատեխնոլոգիական կողմ, ինչը ևս փաստում է, որ դա համընդգրկուն հասկացություն է, որում ներառված են ոչ միայն տեղեկույթի (թվային և ոչ թվային) պաշտպանության և փոխանակման ընթացքում նրա անվտանգ պահպանման, այլև տեղեկույթի բովանդակային (իմաստային) անվտանգության ապահովման մեխանիզմների մասին պատկերացումները:

Ի տարբերություն տեղեկատվական անվտանգությունից և կիբեռանվտանգությունից՝ տեղեկատվության հավաստիությունը վերաբերում է ավելի լայն շրջանով տեղեկույթի (թվային և ոչ թվային), տեղեկատվական ակտիվների կառավարմանն ու պաշտպանությանը, ավելի շատ կենտրոնանում է հայեցակարգային, ռազմավարական և քաղաքական տեսանկյունից խնդիրների լուծման վրա, ներառում է տեղեկատվական ռիսկերի կառավարումը (նվազեցումը) և այլն: Մինչդեռ տեղեկատվական անվտանգությունն ու կիբեռանվտանգությունը ավելի շատ կենտրոնանում են մարտավարական, գործառական և գործիքային տեսանկյունից խնդիրների լուծման վրա, ավելի շատ ուղղված են անվտանգության ապահովման տեխնոլոգիական և կիրառական լուծումներին:

Քանի որ թվային տեղեկույթի պաշտպանությունն ու տեղեկատվության ապահովումը կատարվում է տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների միջոցով, ապա վերը շարադրվածի հաշվառմամբ կարելի է պնդել, որ տեղեկույթի տեխնոլոգիական անվտանգությունը տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության մաս է[15]:

Անվտանգության ապահովման գործում էական նշանակություն ունի ռիսկի կառավարումը: Պետության անվտանգային համակարգում, ֆիզիկական, տնտեսական, ֆինանսական, բնապահպանական (այդ թվում՝ շրջակա միջավայրի), առողջապահական, գործառական և այլ ռիսկերից բացի, առանցքային կարևորություն ունեն տեղեկատվական ռիսկերը:

Ռիսկը անվտանգության ապահովման հակադիր առանցքային գործոնն է, որը հնարավոր չէ լիովին շրջանցել կամ ամբողջությամբ չեզոքացնել: Այն պայմանավորված է անվտանգության համակարգի կամ ակտիվների դեմ ուղղված հնարավոր սպառնալիքներով, համակարգի խոցելիությամբ, դրանց չեզոքացմանն ուղղված հակամիջոցներով և համակարգի վրա վերջիններիս ազդեցությամբ: Ընդհանուր առմամբ ռիսկը կարելի է նկարագրել հետևյալ բանաձևով[16].

$$\text{ՌԻՍԿ} = \frac{\text{Սպառնալիք} \times \text{Խոցելիություն}}{\text{Հակամիջոց}} \times \text{Ազդեցություն},$$

որում հակամիջոցների չկիրառման դեպքում նախնական ռիսկը կունենա հետևյալ տեսքը.

$$\text{ՆԱԽՆԱԿԱՆ ՌԻՍԿ} = \text{Սպառնալիք} \times \text{Խոցելիություն} \times \text{Ազդեցություն}:$$

Ռիսկերով պայմանավորված կորուստների հաշվառման համար էական նշանակություն ունեն տեղեկատվական անվտանգության (կիբեռանվտանգության) ոլորտում ռիսկի ընդունելի մակարդակի ու մնացորդային ռիսկի* գնահատումը և ռիսկերի նվազեցման միջոցների զարգացման գործում արդյունավետ ներդրումների կազմակերպումը: Այս տեսանկյունից Գորդոնի ու Լոեբի առաջարկած մոդելը հնարավորություն է տալիս գնահատելու տեղեկատվական ակտիվների պաշտպանության համար ներդրման ընդունելի չափը և սպառնալիքների բացասական ազդեցությամբ պայմանավորված հնարավոր կորուստները[17]:

$$E_0 - E_1 - I = [\rho_0 \times v(t)] - [\rho_1 \times v(t)] - I = [\rho_0 - \rho_1] \times v(t) - I, \quad (1)$$

որտեղ՝ E_0-ն և E_1-ը, համապատասխանաբար, սպասվելիք կորուստներն են ներդրումից առաջ և հետո, I-ն ներդրման արժեքն է, ρ_0-ն և ρ_1-ը, համապատասխանաբար, հաջողված հարձակման հավանականություններն են ներդրումից առաջ

[15] Տես *Rossouw von Solms, Johan van Niekerk.* From Information Security to Cybersecurity. «Computers & Security, Cybercrime in the Digital Economy», 2013, Vol. 38, PP. 97–102 (http://www.sciencedirect.com/science/article/pii/S0167404813000801):

[16] Տես *D. Ryan, P. Proctor.* Risk Management and Information Security. «Proceedings: 11th Annual Computer Security Applications Conference». New Orleans, 1995:

* Ռիսկի նվազեցման համար հակամիջոցների կիրառումից հետո մնացած ռիսկը:

և հետո, իսկ *v(t)*-ն հաջողված հարձակման ընդհանուր տնտեսական հետևանքների արժեքի ֆունկցիան է:

Տվյալ ոլորտում ռիսկերի կառավարման համապատասխան մեխանիզմների մշակումն ու արդյունավետ ներդրումների կատարումը առանցքային նշանակություն ունեն ոլորտի կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացման համար: ՈՒստի հիմքային մոտեցումների հենքի վրա կարելի է մշակել ռիսկերի կառավարման և ներդրումների արդյունավետության գնահատման ավելի բարդ և համընդգրկուն մեխանիզմներ:

Ամփոփելով ասվածը՝ ևս մեկ անգամ նշենք, որ տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների և դրանց անվտանգության ոլորտներում էական նշանակություն ունեն հասկացությունների և տերմինների հստակ տարանջատումն ու սահմանումը: Հասկացութատերմինաբանական համակարգերի՝ սույն հոդվածում կատարված համառոտ վերլուծությունն անգամ ցույց է տալիս, որ այդ տերմինները թեև ունեն որոշ իմաստային ու կիրառական նմանություններ և հաճախ մեկը մյուսի հետ շփոթվում են, սակայն դրանց միջև կան նաև էական տարբերություններ, ինչի հետևանքով ոլորտային ուսումնասիրություններում հաճախ տիրում է խառնաշփոթ: ՈՒստի տվյալ ոլորտը նկարագրող ամբողջական և համակարգային հասկացութատերմինաբանական հենքի մշակումը մեծապես կնպաստի ոլորտում առկա խնդիրների արդյունավետ լուծմանը:

Այս բնագավառում ՀՀ-ում ուրույն դեր ունի ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում գործող կիբեռանվտանգության խումբը: Մասնավորապես, նա մշակել և ոլորտի միջազգային փորձագետների հետ փորձաքննել է ՀՀ ազգային կիբեռանվտանգության ռազմավարության ճեպագիրը: Խումբը նաև մշակել է կիբեռանվտանգության հանգուցային հասկացությունների և տերմինների բառարանի նախագիծ, որը կարող է դառնալ տվյալ ոլորտի հայերեն–ռուսերեն–անգլերեն բացատրական բառարանի հիմք:

Խմբի հիման վրա ստեղծվել է Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոն: Կենտրոնի առաքելությունն է ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության վրա տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների և կիբեռանվտանգության ոլորտներում տեղի ունեցող զարգացումների ազդեցության հետազոտությունը և համապատասխան առաջարկությունների մշակումը: ՀՀ-ում ազգային անվտանգության ապահովման «խելացի ուժի» ձևավորման ընդհանուր տրամաբանության շրջանակներում նախատեսվում է տվյալ Կենտրոնի ակադեմիական հիմքի վրա որպես ՏՀՏ-ների, կիբեռանվտանգության և ազգային ռեսուրսների կառավարման ոլորտներում ՀՀ միջազգային գերազանցության ապահովման գործիք ստեղծել ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի կիբեռանվտանգության ռազմավարական հետազոտությունների և ռեսուրսների կառավարման ազգային ինստիտուտ:

[17] Տես *Lawrence A. Gordon, Martin P. Loeb.* The Economics of Information Security Investment. «ACM Transactions on Information and System Security», November 2002, Vol. 5, N 4:

МЕСТО И РОЛЬ КИБЕРБЕЗОПАСНОСТИ В СИСТЕМЕ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ

А. Г. ГРИГОРЯН, начальник Группы кибербезопасности ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

В зарубежной и отечественной специальной литературе термины, обозначающие такие системообразующие понятия, как “information security” («информационная безопасность»), “information assurance” («достоверность информации»), “information technology security” («безопасность информационных технологий»), “cybersecurity” («кибербезопасность»), подчас употребляются как синонимы. Между тем анализ дефиниций, приводимых в различных официальных документах, руководствах и словарях США, НАТО и РФ, показывает, что, несмотря на некоторое сходство значений, они в значительной мере отличаются по смыслу и между ними существует корреляционная связь, позволяющая систематизировать их в едином информационно-коммуникационном пространстве.

При этом важными факторами обеспечения безопасности государства в информационно-коммуникационной сфере являются: разработка механизмов управления информационными рисками, нейтрализация рисков и угроз, определение приемлемого уровня рисков, оценка остаточных рисков, осуществление эффективных инвестиций в сферу информационно-коммуникационных технологий.

THE PLACE AND ROLE OF CYBERSECURITY IN THE SYSTEM OF INFORMATION SECURITY

A. H. GRIGORYAN, Head, Cybersecurity Group, INSS, MOD, RA

SUMMARY

The terms denoting such backbone concepts as “information security”, “information assurance”, “information technology security”, and “cybersecurity” are at times used as synonyms in the professional foreign and domestic literature. Meanwhile, the analysis of definitions given in various official documents, manuals and glossaries of the USA, NATO and RF shows that despite some similarity of definitions, they greatly differ in meaning and there is a correlation between them, which makes it possible to systematize them in a single information and communication space.

Simultaneously, the key factors of ensuring state security in the information and communication sphere are: the development of mechanisms for information risks management; mitigation of risks and threats; determination of an acceptable level of risks; assessment of residual risks; implementation of efficient investments in the sphere of information and communication technology.

ԲԱՑԱՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի՝ ուսումնական մասի գծով տեղակալ

Ներկայումս հասարակության զարգացումը հնարավոր չէ պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների: Դրանք հասարակության համակողմանի զարգացումն ապահովող կարևոր ռեսուրսն են և այն գործիքը, որը կիրառվում է գիտատեխնիկական, տեխնոլոգիական և սոցիալական առաջընթացի նպատակով: Սակայն տեղեկութային պատերազմի տիրույթում տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործվում են միանգամայն այլ նկատառումներով, ինչպիսին է, օրինակ, անհատական, խմբային և զանգվածային գիտակցության, ինչպես նաև կոնկրետ մարդկանց հոգեվիճակների վրա քողարկված բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունը:

Նշենք, որ հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում, առաջին հերթին՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, ռազմական, իրավական ու հոգևոր կյանքում, տեղի ունեցող փոփոխությունները, համընդհանրացմամբ պայմանավորված ազգային սոցիալական և մշակութային համակարգերի ձևախախտման միտումները նպաստավոր են ազգային գաղափարական արժեքային վակուումի առաջացման, համընդհանուր կարծրատիպային մտածելակերպի տարածման համար: Դա էապես բարդացնում է բացասական տեղեկութահոգեբանական ներգործություններից անհատի, խմբի ու հասարակության հոգեբանության (զանգվածային գիտակցության) և ինքնության պաշտպանությունը, մեծ հնարավորություններ է ստեղծում հակառակորդի կողմից ձեռնածվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման համար:

ՀՀ-ի դեպքում դրան գումարվում է նաև այն, որ տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական զարգացումներով, այդ թվում նաև սոցիալական բևեռացմամբ, ժողովրդագրական խնդիրներով, մասնավորապես՝ արտագաղթով, պայմանավորված՝ հասարակության մեջ առայժմ ոչ ցայտուն կերպով արտահայտված հոգեկան լարվածությունը նպաստավոր է այնպիսի հոգեբանական հակազդում դրսևորելու համար, ինչպիսին է արտաքին ներգործությանը հասարակության նախատրամադիր լինելը: Այս համատեքստում, եթե հաշվի առնենք նաև ապակողմնորոշիչ քարոզչական ու ձեռնածվական տեխնոլոգիաների կիրառմամբ ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի վարած ակտիվ հոգեբանական պատերազմը, առաջնա-

յին պլան է մղվում ինչպես անձնավորության, այնպես էլ հասարակության հոգեբանական անվտանգության ապահովման խնդիրը:

Ըստ գիտնականների կանխատեսումների՝ 21-րդ դարում մարդու, հասարակական կարծիքի և զանգվածային գիտակցության ապակառուցողական ձեռնածվությունները կարող են ազգային հակամարտությունների, բնապահպանական, ժողովրդագրական աղետների հետ մեկտեղ վերածվել մեծ համաշխարհային պրոբլեմի[1]: Այդ կանխատեսումները հիրավի կարող են իրողություն դառնալ, քանի որ տեղեկութահոգեբանական ներգործությունները, այլ տեսակի ներգործությունների համեմատությամբ, ունեն մի շարք էական առավելություններ (ծախսատար չեն, օժտված են ներգործության օբյեկտի լայն ու համակողմանի ընդգրկման կարողությամբ, կապված չեն մեծ ռիսկերի հետ և այլն):

Տեղեկութահոգեբանական ներգործություն* ասելով նկատի ունենք տեղեկույթի միջոցով իրականացվող այն ներգործությունը, որն ուղղված է անձնավորության հայացքների, պատկերացումների և համոզմունքների վերաձևավորմանը: Իսկ անձնավորության հոգեբանական անվտանգություն ասելով նկատի ունենք տեղեկատվական ոլորտում նրա գիտակցության պաշտպանվածությունը այն տեղեկութային ներգործություններից, որոնք մարդու կամքին և ցանկությանը հակառակ փոփոխման են ենթարկում նրա հոգեբանական բնութագրիչները. կենսականորեն կարևոր հետաքրքրությունները, վճռականությունը, պատասխանատվությունը, ակտիվությունը, ինքնագնահատականը, կամային հատկանիշները, ստրեսածին գործոնների նկատմամբ դիմադրողականությունը, հուզական զգայունակությունը, տրամադրությունը և այլն, հետևաբար և վարքն ու կենսագործունեության էությունը[2]:

---

[1] Տես *Ю. В. Пую.* Влияние информационно-психологической безопасности на конструктивное развитие России. «Известия Российского государственного педагогического университета им. А. И. Герцена», 2009, № 104, с. 58:

* Գոյություն ունեն հոգեբանական ներգործության մի շարք այլ տեսակներ ևս, ինչպիսիք են. *հոգեծին ներգործությունը*՝ մարդու գիտակցության վրա շրջակա միջավայրի գործոնների, պայմանների կամ իրադարձությունների շոկային ներգործությունը, *հոգեվերլուծական* կամ հոգեշտկողական *ներգործությունը*՝ անհատի ենթագիտակցության վրա թերապևտիկ կամ այլ միջոցներով կատարվող ներգործությունը, *նյարդալեզվաբանական ներգործությունը*՝ հատուկ ընտրված խոսքային և ոչ խոսքային լեզվաբանական ծրագրերի կիրառմամբ իրականացվող ներգործությունը, որի դեպքում ներգործողը իրեն նպատակահարմար ուղղությամբ փոփոխության է ենթարկում ներգործության օբյեկտի (անհատ, մարդկանց խումբ) գործունեության շարժառիթները, համոզմունքներն ու հայացքները, հետաքրքրությունները, պահանջմունքները և այլն, *հոգեֆիզիկական ներգործությունը* (психотронное воздействие)՝ ներգործություն, որը կատարվում է չգիտակցված ընկալման միջոցով տեղեկույթի փոխանցմամբ: Այդ տեսակի ներգործությունը առավելապես կողմնորոշված է դեպի այն մեթոդները, որոնք կապված են գիտակցության վրա տեխնիկական միջոցների կիրառմամբ ներգործության հետ (տես *Վ. Գ. Крысько.* Секреты психологической войны (цели, задачи, методы, формы, опыт. Минск, 1999, с. 6):

[2] Տես *Г.В. Грачев.* Информационно-психологическая безопасность личности: состояние и возможности психологической защиты. М., 1998, с. 14; նաև՝ *А. А. Акмасова.* Информационно-психологическая безопасность личности (http://www.bla.by/public/conf2/l2003.pdf):

Անձնավորության հոգեբանական անվտանգությունն ապահովվում է պաշտպանական հոգեբանական մեխանիզմներով, որոնք հնարավորություն են տալիս հարմարվելու շրջակա միջավայրին: Դրանց էությունն այն է, որ մարդը առանց գիտակցելու կատարում է գործողություններ, որոնք նպատակաուղղված են արտաքին միջավայրի բացասական ներգործություններից իր պաշտպանվելուն:

Պաշտպանական հոգեբանական մեխանիզմները բավական վաղուց հետազոտել են մեծ թվով գիտնականներ*: Հոգեբանական պաշտպանությունը մարդու բնական հակազդումն է շրջակա միջավայրին, ինչը նրան հնարավորություն է տալիս բնազդաբար պաշտպանվելու բացասական հուզական ծանրաբեռնվածությունից: Ընդ որում, պաշտպանական մեխանիզմները ձևավորվում և վերափոխվում են մարդու սոցիալականացման ընթացքում: Բոլոր պաշտպանական մեխանիզմներն ունեն երկու ընդհանուր բնութագիր. 1) գործում են անգիտակցականի մակարդակում, հետևաբար և ինքնախաբեության միջոց են, 2) խեղաթյուրում, բացասում, կերպափոխում կամ կեղծում են իրականության ընկալումը՝ անհատի տագնապը հնարավորինս մեղմելու նպատակով[3]:

Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն չունի բոլորի կողմից ընդունված ինչպես «հոգեբանական պաշտպանություն» հասկացության սահմանում, այնպես էլ՝ դրա տեսակների դասակարգում: Հոգեբանական պաշտպանության ընդգրկույթը բավականին մեծ է: Հոգեբանական պաշտպանության ավանդական մեխանիզմները, ինչպես արդեն նշել ենք, առանձնացրել է Զիգմունդ Ֆրոյդը, ապա Աննա Ֆրոյդն ընդլայնել է դրանց շրջանը՝ առաջինը տալով պաշտպանական մեխանիզմների առավել մանրամասն նկարագրությունը և ընդգծելով, որ դրանք «Ես»-ի գործունեությունն են, որը մեկնարկում է, երբ «Ես»-ը վտանգված է[4]: Ա. Ֆրոյդը նշում է նաև, որ այդ մեխանիզմները գործառում են ավտոմատ կերպով՝ առանց գիտակցության հետ համաձայնեցվածության, այսինքն՝ նա պաշտպանությունը դասում է այն չգիտակցված երևույթների շարքը, որոնք մասնագետները անվանում են ավտոմատիզմներ (սովորությունների իներցիան և ուժը, որևէ աշխատանքի կատարման հմտությունը և այլն):

Ե. Լ. Դոցենկոյի սահմանմամբ՝ սուբյեկտի հոգեբանական պաշտպանութ-

---

* «Հոգեբանական պաշտպանություն» և «պաշտպանական մեխանիզմներ» տերմինները հոգեբանական գիտության բնագավառում շրջանառության մեջ է դրել Զ. Ֆրոյդը, ապա դրանք կատարելագործել են տարբեր հոգեբանական ուղղությունների ներկայացուցիչներ:

[3] Տես *Л. Д. Демина, И. А. Ральникова.* Психическое здоровье и защитные механизмы личности. Алтайский государственный университет, 2000, с. 62:

[4] Տես *В. В. Соложенкин.* Психологические основы врачебной деятельности. М., 2003, сс. 80–97, նաև՝ *Լ. Դ. Դեմինա, Ի. Ա. Ռալնիկովա,* Նշ. աշխ., էջ 86: Ա. Ֆրոյդն առանձնացնում է 15 պաշտպանական մեխանիզմներ, մասնավորապես՝ արտամղում, ներգցողություն (ինտրովերսիա), սուբլիմացում, համակշռում (կոմպենսացում), բացասում, ագրեսորի հետ նույնականացում, ռացիոնալացում, պրոյեկցում, ռեգրեսիա, հակազդումների ձևավորում, մեկուսացում, «ոչնչացում», դարձում, փոխարինում, խուսափում: Այլ հեղինակներ ներկայացնում են մինչև 23 պաշտպանական մեխանիզմներ (տես *Е. Б. Ковалева.* Психологическая защита: понятия, средства, генезис (http://www.superinf.ru/view_helpstud.php?id=5704)):

յունը հոգեբանական միջոցների կիրառում է այն վնասի վերացման կամ ազդեցության թուլացման նպատակով, որը մեկ այլ սուբյեկտի բացասական ներգործության հետևանք է[5]:

Դոցենկոն առաջարկում է հետևյալ բաղադրիչների համախումբը.

ա) պաշտպանության առարկա (ինչն է պաշտպանվում. պաշտպանվում է ներգործության օբյեկտի կառուցվածքային ամբողջականությունը կամ դրա որևէ մի բաղադրիչ),

բ) սպառնալիք (ինչից է պաշտպանվում. պաշտպանվում է այն գործոնից, որը կարող է վնասել իր կառուցվածքային ամբողջականությունը),

գ) վնաս (պաշտպանվում է ի խուսափում ինչից կամ հանուն ինչի. պաշտպանվում է տարանջատումից, քայքայումից, այսինքն՝ այնպիսի ներգործություններից, որոնց դեպքում խախտվում է ներգործության ենթարկվող օբյեկտի կառուցվածքային ամբողջականությունը),

դ) պաշտպանության միջոցներ (ինչպես է պաշտպանվում. պաշտպանվում է այն միջոցներով, որոնց կիրառման դեպքում հաշվի են առնվում ինչպես պաշտպանության առարկայի առանձնահատկությունները և հնարավորությունները, այնպես էլ սպառնացող գործոնի բնույթը):

Ըստ նրա՝ հոգեբանական պաշտպանության առարկա կարող են դառնալ պետությունը, սոցիալական խմբերը, ընտանիքը, մարդը, նրա հոգեկանը, ինչպես նաև անձնավորության շարժառիթային նորագոյացությունները (ցանկություններ, նախընտրություններ, ճաշակ), իմացական կառուցվածքը (գիտելիքներ, կարծիքներ, աշխարհայացք), վարքը (գործունեության ոճ, սովորություններ, կարողություններ):

Որպես սպառնալից գործոն Դոցենկոն դիտում է տագնապը, որը կարող է պայմանավորված լինել ներքին գժտությամբ, որևէ պահանջմունքի հետ կապված հուսալքությամբ, իրավիճակի անորոշությամբ և, որպես շրջակա միջավայրի սպառնալից գործոններ, պետությունների, կազմակերպությունների՝ սպառնալիք ներկայացնող գործողությունները:

Երրորդ բաղադրիչը վնասի բնույթն է, որի տարատեսակումը պայմանավորված է պաշտպանության առարկայով և սպառնալիքի բնույթով: Սպառնալից իրավիճակը կարող է հանգեցնել ինքնագնահատականի խաթարման, վստահության նվազեցման, անհատական յուրօրինակության կորստի, մտադրությունների, պլանների ձախողման:

Չորրորդ բաղադրիչն է հոգեբանական պաշտպանության միջոցների համախումբը: Հոգեբանական պաշտպանության երևույթը ի հայտ է գալիս միայն սուբյեկտների փոխգործության պարագայում: Սակայն հարկ է նկատել, որ, օրինակ, ծեծկռտոցի դեպքում չի կարող խոսք լինել հոգեբանական պաշտպանության մասին, այլ դրա մասին կարելի է խոսել, երբ կիրառվում են այնպիսի հոգեբանական միջոցներ, ինչպիսիք են, օրինակ, գթություն հայցելը, սպառնա-

[5] Տես *Е. Л. Доценко.* Психология манипуляции: феномены, механизмы и защита. М., 1997, с. 194:

լիքին սպառնալիքով պատասխանելը, պատասխան ձեռնածվության ենթարկելը և այլն[6]:

Այսպիսով՝ հոգեբանական պաշտպանությունը սուբյեկտի հոգեկան գործունեության խաթարմանն ուղղված ներգործություններին պատասխան հակազդում է:

Ստորև ներկայացնենք հոգեբանական պաշտպանության դասակարգումը.

1. ըստ պաշտպանության սուբյեկտի՝ – արտաքին, – ներքին,

2. ըստ պաշտպանական գործողությունների ուղղվածության և բովանդակության՝ – ակտիվ, – պասիվ,

3. ըստ սպառնալիքի բնույթին միջոցների համապատասխանության աստիճանի՝ – յուրահատուկ, – ոչ յուրահատուկ:

Ինչ վերաբերում է ներքին պաշտպանությանը, ապա այն առաջանում է ներանձնային պայքարի պայմաններում: Խոսքը վերաբերում է հարաբերակցորեն ինքնուրույն անձնային ենթակառուցվածքների միջև պայքարին: Անձնային ենթակառուցվածքներն են. 1) բացառապես սոցիալական գործոններով պայմանավորված անձնային հատկությունները (գործունեության ուղղվածություն, հարաբերությունների համակարգ, բարոյական հատկություններ), 2) փորձը (գիտելիքներ, հմտություններ, կարողություններ, սովորություններ), 3) հոգեկան պրոցեսների և մարդկային հատկությունների (զգայություններ, մտածողություն, ընկալում, հույզեր և զգացմունքներ, կամք, հիշողություն) անհատական առանձնահատկությունները, 4) կենսաբանական հատկությունները (խառնվածք, օրգանական ախտաբանական առանձնահատկություններ)[7]:

Թվարկված ենթակառուցվածքներից յուրաքանչյուրը առանձնանում է իր յուրօրինակ մղումներով, որոնք երբեմն չեն համընկնում, իսկ որոշ դեպքերում էլ խիստ հակասում են միմյանց, հետևաբար և դրանցից յուրաքանչյուրը իր դերն ունի ինչպես մարդու արտաքին վարքի, այնպես էլ նրա ներաշխարհի ձևավորման գործում: Այդ ենթակառուցվածքների միջև պայքարը վերածվում է ներանձնային պայքարի: Նման դեպքում առաջանում է հոգեբանական պաշտպանության անհրաժեշտություն: Դրա նպատակն է ներհոգեկան նորագոյացությունների մի համախումբը պաշտպանել մյուս անձնային ենթակառուցվածքների գործառմամբ պայմանավորված վնասից: Ինչ վերաբերում է հաղորդակցվող սուբյեկտների չհամընկնող հետաքրքրություններին, շարժառիթներին ու նպատակներին, ապա դրանք այն հակասությունների ծագման նախադրյալներն են, որոնք կարող են վերածվել հակամարտությունների, եթե դրանց վերացման ուղղությամբ համարժեք ճիգեր չգործադրվեն: Տվյալ դեպքում էլ է առաջանում արտաքին պաշտպանության անհրաժեշտություն, քանի որ վտանգված են մարդու անհատական ամբողջականությունը, նրա ինքնությունն ու անհատականությունը:

Դոցենկոն, ինչպես և մի շարք այլ հետազոտողներ, հանգում է այն եզրա-

[6] Տես նույն տեղում, էջ 193:

[7] Տես *Н. В. Бордовская, С. И. Розум.* Психология и педагогика. СПб., 2001, сс. 84–85:

կացության, որ ներքին և արտաքին պաշտպանությունների համար առավել ընդհանուրն այն է, որ ի վերջո պաշտպանվում է անհատականությունը, այն է՝ մի անհատին մյուսից տարբերող այն առանձնահատկությունների համախումբը, որոնք դրսևորվում են մարդու խառնվածքում, բնավորության գծերում, հետաքրքրություններում, զգայական պրոցեսների որակական բնութագրիչներում:

Ներքին պաշտպանությունը պատկերացնելու համար անհրաժեշտ է պարզել հոգեբանական պաշտպանության նախատիպերը, այսինքն՝ այն գործողությունների համախումբը, որոնց ինտերիորիզացումը հանգեցնում է ներքին պաշտպանությունների արդիականացմանը: Տվյալ առումով նպատակահարմար է դիտարկել ակտիվ և պասիվ պաշտպանության այն վեց ձևերը, որոնք ներկայացվում են միմյանց փոխլրացնող զույգերով. փախչել-հարձակվել, թաքնվել-վերահսկել, քողարկվել-անտեսել: Յուրաքանչյուր զույգին բնորոշ է պաշտպանության իր պարամետրը. ագրեսորի նկատմամբ անվտանգ հեռավորության վրա գտնվելը, ներգործության հոսքերի կառավարումը, տեղեկատվական կապուղիների կառավարումը: Այդ գործողությունները հոգեբանական գիտության մեջ կոչվում են հիմքային պաշտպանական դիրքորոշումներ[8] (տես աղյուսակը):

Աղյուսակ

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փոփոխականներ	Պասիվ ձև	Ակտիվ ձև
ագրեսորի հետ միջ-սուբյեկտային հեռավորության մեծացում	իրեն հեռացնելը՝ խուսափում. փախուստի դիմելը, հեռանալը	ագրեսորին հեռացնելը. արտաքսում, վերացում, ագրեսիա
ներգործության բնույթի վերահսկում	մեկուսականխում. խոչընդոտների՝ պատնեշի, «վահանի» ստեղծում, թաքստոցի որոնում	հակազդեցության ցուցաբերում. ագրեսորի վերահսկում, ենթարկում, կառավարում
տեղեկատվության մեկուսականխում	իր մասին. քողարկում (անշարժացում)	ագրեսորի մասին. սպառնալիքի անտեսում կամ բացասում

1) *Խուսափում.* հեռավորության մեծացում, շփման դադարեցում, անցում ագրեսորի ներգործության սահմաններից դուրս: Այս տեսակի պաշտպանությունը դրսևորվում է հետևյալ ձևերով՝ զրույցի թեմայի փոփոխում, խուսափում հարաբերությունների սրումից՝ զրույցի ընթացքում սուր անկյունների շրջանցմամբ, այն մարդկանց հետ հանդիպումներից հրաժարման ձգտում, որոնք տհաճ ապրումների աղբյուր են, խուսափում հոգեխոցիչ իրավիճակներից: Սահմանային դրսևորումներն են՝ լիարժեք ինքնամփոփությունը, օտարացածությունը, մարդկանց հետ շփումներից հրաժարումը,

2) *ագրեսորին հեռացնելը.* ագրեսորի ոչնչացում, քննադատում, ծաղրուծանակի ենթարկում, նվաստացում, խայթող դիտողություններ, ինչի նպատակն է մասնակիորեն վերացնել (կերպափոխել) մարդու բնավորության գծերը, սովորությունները, մտադրությունները, հակումները և այլն: Սահմանային դրսևորումը սպանությունն է,

[8] Տես *Ե. Լ. Դոցենկո*, Նշ. աշխ., էջ 202:

3) *մեկուսականխում*[*]. պաշտպանության սուբյեկտի վրա անմիջականորեն ներգործող ազդեցության վերահսկում, իմաստային պատնեշների («ես դժվարանում եմ հասկանալ, թե խոսքը ինչի մասին է»), դերային նկարների («ես աշխատանքի վայրում եմ») կիրառում, որոնք իրենց են գամում հիմնական «հարվածը»: Սահմանային դրսևորումներն են՝ պարսպվելը, խոր պաշտպանության անցնելու միջոցով լիակատար ինքնամեկուսացումը,

4) *հակազդեցության ցուցաբերում.* ագրեսորի վրա պատասխան ներգործություն՝ այդ ներգործության բաղադրիչները փոփոխելու նպատակով. լաց, նվնվոց, խոր հոգոց (գութ շարժելու ձգտում), կաշառում կամ մեղմացնելու ձգտում, մտերմանալու ձգտում («յուրայիններին չեն խփում»), ակտիվության թուլացում կամ ապակայունացում, ցանկալի վարքագծի հրահրում, ձեռնածվության ենթարկում: Սահմանային դրսևորումներն են՝ այլ անձի իրեն ենթարկելը, նրա հանդեպ բռնի վերաբերմունքը,

5) *քողարկում.* պաշտպանության սուբյեկտի վերաբերյալ տեղեկույթի վերահսկում, տեղեկատվության խեղաթյուրում կամ ծավալների կրճատում: Դրսևորվում է քողարկման, խաբեության, զգացմունքների թաքցման, իր գլխին դժբախտություն չբերելու նպատակով որոշակի գործողություններից հրաժարման ձևով: Ծայրահեղ դրսևորումներն են՝ ընդարմացումը, տագնապային ճնշվածությունը,

6) *սպառնալիքի անտեսում կամ բացատրում.* ագրեսորի վերաբերյալ տեղեկույթի վերահսկում, ընկալման աղճատում, օրինակ՝ կարծրատիպացում («նա պարզապես խուլիգանություն է անում»), սպառնալիքի աստիճանի նվազեցում, իրադարձությունն իր համար դրական մտադրություններով բացատրում («նա ինձ բարին է ցանկանում»): Ծայրահեղ դրսևորումներն են՝ իրողության ընկալման կորուստը, ընկալման աղճատումը, պատրանքները:

Յուրահատուկ և ոչ յուրահատուկ հոգեբանական պաշտպանություն: Յուրահատուկ է համարվում այն հոգեբանական պաշտպանությունը, որը համապատասխանում է սպառնալիքի բնույթին և հաշվի է առնում դրա բովանդակային բնութագրիչները: Ոչ յուրահատուկ է համարվում այն հոգեբանական պաշտպանությունը, որն արձագանք է զուտ սպառնալիքի առկայությանը[9]:

Ոչ յուրահատուկ հոգեբանական պաշտպանությունը կարող է ընդհանրացվել՝ հանգեցնելով հիմքային պաշտպանական դիրքորոշումների սահմանային դրսևորման. հեռանալը հասցնել խուճապային փախուստի, ագրեսորի հեռացումը՝ նրա վերացման, մեկուսականխումը՝ լիակատար ինքնամեկուսացման, հակազդեցության ցուցաբերումը՝ բռնակալի վարքի, քողարկումը՝ ինքնասպանության, անտեսումը՝ ֆունկցիոնալ կուրության, և այլն:

Յուրահատուկ պաշտպանությունը սպառնալիքի բնույթի հաշվառմամբ պրոբլեմի լուծմանն ուղղված փնտրողական գործողությունների համախումբ է:

---

[*] Մեկուսականխում՝ блокирование, блокировка; blockade, block (տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 406):

[9] Տես *Л. А. Михайлова*. Психологическая защита в чрезвычайных ситуациях. СПб., 2009, с. 64:

Յուրահատուկ պաշտպանական գործողությունները, որոնք կողմնորոշված են դեպի ստանդարտ, հաճախ տվյալ սուբյեկտի համար կրկնվող սպառնալիք, ինչպես և ոչ յուրահատուկ պաշտպանությունը, կարող են վերածվել ինքնաբերական պաշտպանության: Այս դեպքում դրանք վերածվում են սովորության, երբեմն էլ՝ սևեռուն համախտանիշի:

Ձեռնածվական ներգործություններին որպես պատասխան առաջացող հոգեբանական պաշտպանության էությունը հասկանալու համար անհրաժեշտ է վերլուծել այդ ներգործությունների նկատմամբ դրսևորվող ոչ յուրահատուկ պաշտպանական գործողությունների առանձնահատկությունը:

Ինչպես արդեն նշել ենք, ոչ յուրահատուկ պաշտպանությունը այն հոգեբանական պաշտպանությունն է, որն առաջանում է որպես սպառնալիքի առկայության պատասխան՝ առանց սպառնալիքի բնույթի հաշվառման: Ձեռնածվական ներգործություններով պայմանավորված սպառնալիքների առկայությունը դրանց թիրախը հիմնականում ընկալում է չգիտակցված կերպով, քանի որ ձեռնածվական ներգործությունն ունի առավելապես քողարկված բնույթ: Դոցենկոն տվյալ հանգամանքով է բացատրում այն, որ ըստ ծագման՝ արտաքին պաշտպանությունն իր դրսևորումներով միանգամայն նման է ներանձնային քրեստոմատիական պաշտպանության օրինակներին:

Ինչ վերաբերում է յուրահատուկ պաշտպանությանը, ապա այն ենթատեսակավորվում է ըստ իր տեղայնացման մակարդակների, մասնավորապես. ա) պաշտպանություն, որը համապատասխանում է ձեռնածվական ներգործությամբ պայմանավորված սպառնալիքի առանձնահատկություններին և տեղայնացած է տվյալ անձնավորության շարժառիթային կառուցվածքներում, բ) պաշտպանություն, որը համապատասխանում է ինքնաբերականություններին, գ) պաշտպանություն, որը հարաբերակցվում է ձեռնածվական ներգործություններ իրականացնողի կիրառած միջոցների հետ[10]:

Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ ձեռնածվական ներգործության թիրախներն են անձնային ենթակառուցվածքները, իսկ նպատակը՝ դրանց քայքայումը: ՈՒստի որպես կարևոր խնդիր պետք է դիտվի տվյալ անձի մեջ տեղեկույթի ընկալման և վերլուծության մշակույթի ձևավորումը, ինչի շնորհիվ մարդը պետք է տեղեկույթի ընկալման գործում դրսևորի զգուշավորություն, հստակ պատկերացում ունենա բացասական տեղեկութահոգեբանական ներգործությամբ պայմանավորված այն զարգացումների մասին, որոնք տեղի են ունենում իր հոգեկանում, աշխատի ոչ միայն տեղեկույթի քողարկված իմաստը քննադատական վերլուծությամբ պարզորոշելու կարողություն ձեռք բերելու, այլև բացասական ներգործությանը հակազդեցության մեխանիզմները յուրացնելու ուղղությամբ:

Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ձեռնածվական ներգործությունը չի կարող արդյունավետ լինել, եթե ներգործողը թիրախի հոգևոր աշխարհում չի գտել այն «չկողպված դուռը», որով կարելի է ազատ մուտք գործել և այնտեղ գտնել ներգործության արդյունավետությանը

[10] Տես *Ե. Լ. Դոցենկո,* Նշ. աշխ., էջ 208–209:

նպաստող դաշնակիցների: Ներանձնային դաշնակցի ձեռքբերման սկիզբ է համարվում այն շարժառիթի ակտուալացումը, որը տվյալ պահին մրցակցում է ներգործության ենթարկվող սուբյեկտի շարժառիթների հետ, ինչը հանգեցնում է ներանձնային գժտության ծագմանը: Ձեռնածվության ենթարկողի հաջորդ քայլերը պետք է նպատակաուղղված լինեն իր դաշնակցի դիրքերի ամրապնդմանը և այդ դաշնակցին դիմակայող շարժառիթների թուլացմանը: Այդ աշխատանքը հանգեցնում է թիրախի անձնային կառուցվածքների քայքայմանը[11]:

Հարկ է նշել, որ ձեռնածվական ներգործությամբ ոչ միայն ակտուալացվում են գիտակցության մեջ եղած գաղափարները, շարժառիթները, այլև պարտադրվում են նորերը, փոփոխության են ենթարկվում այս կամ այն իրադարձությունների վերաբերյալ տեսակետները, հետևաբար և մարդու կենսական դիրքորոշումները:

Բացասական տեղեկութահոգեբանական ներգործության հիմնական մեխանիզմն այն է, որ որքան մարդը այս կամ այն երևույթի, իրադարձության վերաբերյալ վատ է տեղեկացված, այնքան հեշտ է նրան ենթարկել նման ներգործության: ՈՒստի հոգեբանական ներգործության օբյեկտներին սնելով կցկտուր, ոչ լիարժեք, նույնիսկ աղավաղված բովանդակությամբ տեղեկույթով, հնարավոր է ձևավորել այնպիսի սոցիալ-հոգեբանական կարծրատիպեր, որոնք առաջացնեն բացասական ներգործության նպատակներին ծառայող անհրաժեշտ հակազդումներ, հանգեցնեն կոնկրետ, կանխամտածված վարքագծի: Նման ներգործության զոհ են դառնում այն անձինք, որոնք առավել շատ են հավատում ասեկոսեներին, հորինվածներին:

Այսպիսով՝ հոգեբանական պաշտպանությունն իրագործվում է մարդու հոգեկանը կարգավորող համակարգի և պաշտպանական մեխանիզմների ու վարքի ալգորիթմների միջոցով: Քանի որ պաշտպանական հոգեբանական մեխանիզմների ձևավորումը բավական տևական և աշխատատար գործ է[12], առաջնային պլան է մղվում պետության ձեռնարկած այն միջոցառումների համալիրը, որոնք հնարավորություն կստեղծեն արդյունավետ կերպով ապահովելու տարբեր բացասական տեղեկութահոգեբանական ներգործություններից ամբողջ հասարակության պաշտպանվածությունը: Խոսքը վերաբերում է ՀՀ և ԼՂՀ բնակչության «իմունացմանն»[13] ուղղված միջոցառումներին: Այս մակարդակում որպես անձնավորության հոգեբանական պաշտպանության սուբյեկտ հանդես են գալիս պետությունն ու հասարակությունը՝ կրթական համակարգի, սոցիալական նորմերի (արժեքներ, ավանդույթներ) տարածման համակարգի և այլ սոցիալական

[11] Տես *А. В. Манойло.* Государственная информационная политика в особых условиях: Монография. М., 2003, с. 104:

[12] Տես *С. Пудич.* Проблема защиты личности от информационно-психологического воздействия в условиях трансформационных изменений в обществе. «Психологические науки», 2015, № 5, с. 16:

[13] Ավելի հանգամանորեն տես *Վ. Հ. Մարգարյան,* Հավանական հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից պաշտպանվելու հարցի շուրջ: «ՀԲ», 2007, հմ. 4, էջ 82:

հաստատությունների գործունեության միջոցով: Նկատելի է, որ ուշադրության կենտրոնից դուրս են մնում այնպիսի սոցիալական խմբեր, ինչպիսիք են ընտանիքը, հասարակական և քաղաքական կազմակերպությունները, արտադրական կառույցները և այլն: Սոցիալական խմբերի մակարդակում հոգեբանական պաշտպանությունը ենթադրում է ոչ միայն ներխմբային տեղեկութային հոսքերի, այլև վերը նշված խմբերի համար սոցիալական փոխգործության, տեղեկույթի մշակման և գնահատման հատուկ միջոցների կիրառում: Հատուկ միջոցներ ասելով նկատի ունենք այն միջոցները, որոնք, կասեցնելով կամ չեզոքացնելով տեղեկութային միջավայրի հետ փոխգործությամբ, ինչպես նաև հոգեբանական օպերացիաների կամ ձեռնածվական տեղեկութահոգեբանական ներգործությամբ պայմանավորված սպառնալից գործոնները, կապահովեն անհատի և հասարակության հոգեբանական անվտանգությունը:

К ВОПРОСУ О ПСИХОЛОГИЧЕСКОМ ПРОТИВОДЕЙСТВИИ ОТРИЦАТЕЛЬНЫМ ИНФОРМАЦИОННО-ПСИХОЛОГИЧЕСКИМ ВОЗДЕЙСТВИЯМ

В. Г. МАРГАРЯН, полковник, доктор психологических наук, доцент,
заместитель Начальника ИНСИ МО РА по учебной части

РЕЗЮМЕ

Рассмотрен процесс психологической защиты в контексте нейтрализации психологических манипуляций в межсубъектном взаимодействии с целью обеспечения безопасности жизнедеятельности человека и повышения уровня его индивидуальной защищенности. Данная цель достигается путем формирования соответствующих механизмов противодействия отрицательным информационно-психологическим воздействиям в аспекте обеспечения более безопасного поведения.

В качестве основной функции психологической защиты рассмотрены предотвращение нарушения внутренней устойчивости личности, оптимальное функционирование ее психики под влиянием нежелательных межсубъектных воздействий. В связи с этим психологическая защита анализируется как сложная структурно-функциональная система личности, включающая в себя представления, убеждения, взгляды, интересы, потребности, сомнения, недоверие, страх, волевые качества и т. д. Показана автономность регулятивных систем человека, которая способствует его психологической защите как от внутреннего конфликта, так и от внешнего отрицательного психологического воздействия с актуализацией совокупности психологических механизмов.

ON THE ISSUE OF PSYCHOLOGICAL COUNTERACTION TO THE NEGATIVE INFORMATION PSYCHOLOGICAL IMPACTS

V. H. MARGARYAN, Colonel, Doctor in Psychology, Associate Professor,
Deputy Head for Education, INSS, MOD, RA

SUMMARY

The process of psychological defense in the context of neutralization of psychological manipulations in the intersubjective interaction to ensure personal and social safety and increase the level of individuals' security has been studied. This purpose is achieved by forming appropriate mechanisms to counteract the negative information psychological impacts in the aspect of ensuring safer behavior.

Preventing disturbance of internal stability of the individual, and optimal functioning of his or her psyche under the influence of adverse intersubjective effects have been studied as the main function of psychological defense. In these terms, psychological defense is analyzed as a complex structural and functional system of the individual, which includes the ideas, beliefs, views, interests, needs, doubts, distrust, fear, volitional qualities, etc. The autonomy of the person's regulatory systems has been shown, which contributes to his psychological defense against both the internal conflict and the external negative psychological impact together with the actualization of the complex of psychological mechanisms.

ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ա. Գ. ՎԱՂԱՐՇՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ



Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման և միջազգային ճանաչման յուրօրինակ ընթացքը, անկախության անսպասելիության հանգամանքը պայմանավորեցին նաև նորաստեղծ պետության կառավարման յուրահատուկ ձևերը: Պետական իշխանության ներկայացուցչական, կամ օրենսդիր, իշխանության համակարգի կայացման և զարգացման տեսանկյունից հանրապետության պետական կառավարման պատմությունը կազմակերպական առումով կարելի է բաժանել երեք փուլի.

ա) հայոց ազգային ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում (1918 թ. մայիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ը), երբ պետական իշխանության բարձրագույն մարմինն էր **Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը,**

բ) հանրապետության բնակչության և քաղաքական հիմնական ուժերի (կուսակցությունների) նշանակովի-ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում (1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. օգոստոսի 1-ը), երբ օրենսդիր իշխանությունը մարմնավորում էր **Հայաստանի խորհուրդը**: Դա նշանակովի մարմին էր՝ կազմված քաղաքական կուսակցությունների և ազգային ընդհանրությունների ներկայացուցիչներից: Նրա կազմում կային ութ խմբակցություններ, որոնք կարելի է բաժանել երեք խմբի. 1) կուսակցական խմբակցություններ՝ Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՀԴ՝ 18 պատգամավոր), Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն (ՍԴԲԿ՝ 6 պատգամավոր), Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցություն՝ (էսէռներ (ՍՀԿ)՝ 6 պատգամավոր), Հայ ժողովրդական կուսակցություն (ՀԺԿ՝ 6 պատգամավոր), 2) ազգային խմբակցություններ՝ մահմեդական (6 պատգամավոր), ռուսական (1 պատգամավոր), եզդիական (1 քուրդ պատգամավոր), 3) անկուսակցականների խմբակցություն (2 պատգամավոր): Խորհրդարանի կազմը 1919 թ. մայիսի 27-ին համալրվեց 12 արևմտահայ պատգամավորներով, և ավելացավ նոր՝ արևմտահայերի խմբակցությունը,

գ) քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգով ձևավորված խորհրդարանական կառավարում (1919 թ. օգոս-

տոսի 1-ից մինչև Հանրապետության անկումը): Այս փուլում օբյեկտիվ ընտրական իրավունքը այսպես կոչված քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգ էր, ըստ որի՝ ամեն մի կուսակցություն խորհրդարանական մանդատն ստացել էր իրեն տրված ձայների համամասնությամբ: Օրենսդիր իշխանությունը մարմնավորում էր **Հայաստանի Պառլամենտը** (Խորհրդարանը):

Եթե գործադիր իշխանության կազմակերպական առանձնահատկություններն այն ժամանակի իրողությունների պայմաններում հնարավորություն էին տալիս գոնե արտաքուստ պահպանելու պետական գաղտնիք կազմող տեղեկույթը, ապա օրենսդիր իշխանության դեպքում դրա համար անհրաժեշտ էին լրացուցիչ երաշխիքներ: Օրենսդիր իշխանության գործունեությունը կառուցված էր հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներով: Հանրության ներկայացուցիչները կարող էին այցելել խորհրդարան ու ներկա լինել նիստերին: Մյուս կողմից՝ խորհրդարաններում ռազմական և դիվանագիտական գաղտնիքի պահպանմանն սպառնում էին լրացուցիչ վտանգներ՝ պայմանավորված մի քանի հանգամանքներով: Առաջին հերթին այդպիսի վտանգ էր ներկայացնում ինչպես Հայաստանի խորհրդի, այնպես էլ Հայաստանի Խորհրդարանի կազմում եղած մահմեդական խմբակցությունը: Մյուս վտանգը պայմանավորված էր խորհրդարանի որոշ կուսակցական խմբակցությունների՝ հանրապետության նկատմամբ թշնամական դիրքորոշմամբ: Այդ կապակցությամբ հետաքրքիր դիտարկումներ է հրապարակել ՀԺԿ օրգան «Ժողովուրդ» թերթը 1918 թ. սեպտեմբերին. «Հայկական պառլամենտը, եթե նա ցանկանում է ստեղծել պետական մեխանիզմ և նրան կարգի բերել, պետք է հենց սկզբից օգտվի բոլոր այն նորմաներով, որոնք կիրառում են բոլոր պառլամենտական երկրներում: Առանձնահատուկ «հայկական» պառլամենտարիզմը միայն վնասակար հետևանքներ կարող է տալ: ... Եթե պառլամենտական կյանքը շեղվում է այն ուղուց, որով պիտի գնա, դրան մեծապես նպաստում է և այն, որ խորհրդի նախագահը, ավելի շուտ՝ նախագահությունը չի աշխատում հետևել գիտության և պրակտիկայի մշակած նորմաներին խորհրդի աշխատանքները ղեկավարելիս: Հենց դրա համար էսէռ պատգամավորը թույլ է տալիս իրեն ասելու, որ իր ֆրակցիան եկել է կռվելու Հայաստանի Հանրապետության դեմ, որպես մի վնասակար երևույթի, հենց դրա համար էլ հասարակությունը շարունակ իր ծափերով և աղմուկով խառնվում է պառլամենտի աշխատանքին»[1]:

Պետական գաղտնիքի հրապարակման վտանգը կարող էր բխել նաև գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմներից, որոնք բնորոշ էին «խորհրդարանական հանրապետություն» ձևի պետական կառավարմանը: Պետական կառավարման խորհրդարանական պրակտիկայում հայտնի են գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության հետևյալ ձևերը՝ կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունների քննարկում, բյուջեի հաստատում և դրա կատարման նկատմամբ վերահսկողություն, խորհրդարանական հարցապնդումներ, հարցեր և քննարկման վեճեր,

[1] Տես «Մեր պառլամենտական կարգերից»: «Ժողովուրդ» թերթ, 1918 թ. սեպտեմբեր, հմ. 8:

անվստահություն հայտնելու ընթացակարգ (ինտերպելյացիա), խորհրդարանի մշտական հանձնաժողովների և հատուկ քննիչ հանձնաժողովների վերահսկողական գործունեություն, խորհրդարանական լսումներ և խորհրդարանական քննություն, կառավարության (վարչապետի և նախարարների) զեկուցումներ և հաշվետվություններ[2]: Առաջին հանրապետությունում սահմանվել և գործել են խորհրդարանական վերահսկողության թվարկված բոլոր ձևերը՝ բացառությամբ կառավարությանն ուղղակիորեն անվստահություն հայտնելու ընթացակարգից[3]:

Նշված ձևերի խորհրդարանական վերահսկողությունը կարող էր ռազմական կամ դիվանագիտական գաղտնիքի հրապարակման պատճառ դառնալ: Հայաստանի խորհրդում ընդդիմությունը ցանկացած հարց կարող էր դարձնել խորհրդարանական վերահսկողության առարկա: Նա կարող էր նաև խորհրդարանական հաստատությունները օգտագործել հետախուզական-քաղաքական խնդիրներ լուծելու համար: Այս պատճառով խորհրդարանի ներքին կառուցվածքում և գործունեությունում անհրաժեշտ էր կատարել որոշակի կազմակերպահրավական նորամուծություններ, որոնք կանխեին գաղտնի տեղեկույթի հնարավոր սորակորուստը կամ կորզումը:

Հայաստանի խորհրդի ղեկավար մարմինը նախագահությունն էր՝ Հայաստանի խորհրդի նախագահը, երկու փոխնախագահները և քարտուղարը: Հայաստանի խորհրդի նախագահության բոլոր անդամներն ընտրվում էին մեկ տարի ժամկետով: Նրանք ժամանակի ընթացքում ստուգված հայազգի պատգամավորներ էին: Եթե նախագահության դեպքում որոշ երաշխիքներ կային, ապա հանձնաժողովների հարցում՝ ոչ, որովհետև հանձնաժողովներն արդեն կազմվում էին խմբակցային սկզբունքով: Դիվանագիտական և ռազմական հարցերի բացահայտ քննարկումներից խուսափելու համար Հայաստանի խորհուրդը դիմեց Ավագների խորհրդի կազմավորմանը, ինչը խորհրդարանական հանձնաժողովները կամ լիագումար նիստերը շրջանցելու միջոց էր: Ընդհանրապես, խորհրդարանական կառավարման համաշխարհային պրակտիկայում խորհրդարանի նախագահին կամ նախագահությանն օգնելու նպատակով ստեղծվում են ավագների խորհուրդ կամ նախագահին կից խորհրդակցություն: Դրանցում, բացի նախագահից, ընդգրկվում են փոխնախագահներ, խորհրդարանական խմբակցությունների ներկայացուցիչներ, երբեմն նաև խորհրդարանի մշտական հանձնաժողովների նախագահներ[4]:

Հայաստանի խորհրդի կանոնակարգը չէր սահմանում այդպիսի մարմնի ստեղծման կարգը, կազմը, լիազորությունները: Սակայն Հայաստանի խորհրդի

[2] Տես *В. Е. Чиркин*. Парламенты в зарубежных государствах. М., 2006, сс. 27–31; «Конституционное право зарубежных стран». Под общей ред. М. В. Баглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина. М., 2005, сс. 315–318; *Р. В. Енгибарян.* Сравнительное конституционное право. М., 2005, сс. 316–322:

[3] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Ա. Գ. Վաղարշյան*, Հայաստանի Առաջին Հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Ե., էջ 193–238:

[4] Տես «Конституционное право зарубежных стран», с. 306:

կցկտուր արձանագրությունների ուսումնասիրությունից երևում է, որ նրա կառուցվածքում գործել է Ավագների խորհուրդ[5]: Հիմա հնարավոր չէ պարզել, թե ինչ կառուցվածք և իրավասություն ուներ Ավագների խորհուրդը, սակայն այն, ըստ ամենայնի, խորհրդարանի նախագահությունից հետո երկրորդ ղեկավար մարմինն էր: Դա երևում է խորհրդարանի մի շարք որոշումներից: Օրինակ՝ 1918 թ. նոյեմբերի 8-ին խորհրդարանը, քննարկելով արտաքին գործերի հանձնաժողովի ստեղծման հարցը, քվեարկությամբ մերժել է այդ առաջարկությունը և ընդունել է հետևյալ որոշումը. «Առանձին կարևորություն ունեցող խնդիրների քննության համար արտաքին գործերի նախարարը խորհրդակցում է Ավագների խորհրդի հետ՝ պարբերաբար նիստ նշանակելով»:

Հայաստանի խորհուրդը կարող էր ստեղծել երկու կարգի հանձնաժողովներ՝ ա) մշտական, որոնց վրա դրվում էին հատուկ պարտականություններ կամ հանձնարարվում էր համապատասխան ոլորտներում օրինագծերի կամ հարցերի քննարկում, բ) ժամանակավոր հանձնաժողովներ՝ կոնկրետ օրինագծեր կամ հարցեր քննարկելու կամ քննելու համար:

Հայաստանի խորհուրդն իր գործունեության սկզբում ձևավորել էր մեծ թվով մշտական հանձնաժողովներ, որոնց կազմավորման նպատակը հասարակական կյանքի կարևոր ոլորտներին առնչվող հրատապ հարցերի քննարկումն էր: Սակայն ուշագրավ է, որ չկային զինվորական (պաշտպանական) և արտաքին հարաբերությունների ոլորտների հարցերով հանձնաժողովներ: Կառավարությունն ի սկզբանե հակված չէր դրանց ստեղծմանը, քանի որ խորհրդարանի որոշման համաձայն՝ հանձնաժողովները կազմվում էին խմբակցային սկզբունքով և, հետևաբար, իրենց կազմում ունեին ՀՀԴ խմբակցությունից երեք և մյուս խմբակցություններից՝ մեկական պատգամավորներ: Խնդիրը տեղեկույթի հնարավոր արտահոսքն էր, որովհետև հանձնաժողովներն իրենց գործունեության բերումով կարող էին ծանոթանալ կառավարության անդամների և այլ պաշտոնատար անձանց բացատրություններին: Քանի որ Հայաստանի խորհրդի որոշ խմբակցություններ հայկական պետականության հանդեպ ունեին բացասական տրամադրվածություն, ապա առաջ էր գալիս որոշակի ոլորտներում ձեռնարկվելիք քայլերի գաղտնիությունը պահպանելու խնդիր:

Չնայած կառավարության դիմադրությանը՝ 1918 թ. սեպտեմբերին խորհրդարանում ստեղծվեց զինվորական հանձնաժողով: Սակայն այդ հանձնաժողովի կազմավորման հիմքում, որպես մյուս հանձնաժողովների ձևավորման կարգից շեղում, դրվում էր ոչ թե խմբակցային, այլ անհատական կարգով ընտրությունը: Հայաստանի խորհուրդը նախ հաստատեց այդ շեղումը, այնուհետև ընտրեց հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի կազմավորման նման կարգը կառավարությունը պատճառաբանեց ռազմական գաղտնիք համարվող տեղեկությունների պահպանման անհրաժեշտությամբ: Սովորական ընթացակարգից դուրս էր նաև զինվորական հանձնաժողովի գործունեության կարգը: Դրան վերաբերող

[5] Տես «Հայաստանի խորհրդի 1918 թ. նոյեմբերի 8-ի նիստը»: «Զանգ» թերթ, 1918 թ. դեկտեմբեր, հմ. 75:

կցկտուր նյութերը հիմք են տալիս ենթադրելու, որ այս հանձնաժողովն օժտված էր արտակարգ լիազորություններով: Այսպես. պաշտպանական ոլորտի ֆինանսական օրինագիծը, կառավարության 1918 թ. հոկտեմբերի 12-ի նիստում ստանալով հավանություն, ներկայացվեց Հայաստանի խորհրդի զինվորական հանձնաժողովի և կառավարության խառը նիստի քննությանը[6]: Որոշումից բխում է, որ խառը նիստում հավանություն ստանալուց հետո օրինագիծը ձեռք էր բերելու օրենքի ուժ՝ խորհրդարանի շրջանցմամբ:

Դրա հետ մեկտեղ դեռ բաց էր մնում արտաքին գործերի հանձնաժողովի հարցը: Այդ խնդիրն անընդհատ հարուցում էր ընդդիմադիր պատգամավորների բողոքը. նրանք կառավարությանը, մասնավորապես՝ արտաքին գործերի նախարարին, մեղադրում էին ինքնագլուխ, խորհրդարանից գաղտնի գործունեության մեջ: Ի վերջո, նրանք հասան այն բանին, որ խորհրդարանի օրակարգում ներառվեց արտաքին գործերի հանձնաժողովի ստեղծման հարցը: Սակայն 1918 թ. նոյեմբերի 8-ին խորհրդարանը, քննարկելով արտաքին գործերի հանձնաժողովի ստեղծման հարցը, քվեարկությամբ մերժեց այդ առաջարկությունը և ընդունեց ՀՀԴ խմբակցության ներկայացրած հետևյալ բանաձևը, ըստ որի. *«Առանձին կարևորություն ունեցող խնդիրների քննության համար արտաքին գործերի նախարարը խորհրդակցում է ավագների խորհրդի հետ՝ պարբերաբար նիստ նշանակելով»*[7]: Խորհրդարանի նիստի ընթացքում խմբակցությունների արտահայտած տեսակետներն այդ հարցի վերաբերյալ հետևյալն էին. «**Մ. Հարությունյան** (դաշն.) – Սկզբունքով դեմ ենք, բայց իբրև մի կողմնակի միջոցի, համաձայն ենք: Միշտ էլ հնարավոր չի լինի, որ հանձնաժողովի հետ խորհրդակցելով մինիստրն անե այս կամ այն քայլը: Բոլոր դեպքերում էլ չի կարելի պահանջել, որ գործերը գաղտնի չտարվեն, առաջարկում ենք ավագների խորհուրդն ընդունել իբրև խորհրդակցող մարմին: **Ա. Խոնդկարյան** (էսէռ) - Արտաքին քաղաքականության խնդիրները պիտի որոշե Խորհրդարանը, սակայն երբ հնարավոր չէ հանկարծակի դեպքերում այդ անել, այն ժամանակ պիտի հավաքվի այդ բանի համար կազմված հանձնաժողովը: Գտնում ենք անհրաժեշտ այդ հանձնաժողովը: **Հ. Ազատյան** (սոց.-դեմ.) – Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կարծիքով՝ լինի ընտրված հանձնաժողով, թե ավագների խորհուրդը, այդ միևնույն է, միայն թե որոշ պիտի լինեն ֆունկցիաներն ու փոխհարաբերությունները և բացի այդ, լիազորված մարմինը պիտի իր աշխատանքը դնի Խորհրդարանի և ոչ թե մինիստրի առաջ: **Մ. Հարությունյան** – Ավագների խորհուրդը միայն խորհրդակցական նշանակություն պիտի ունենա և ոչ վճռական, այն էլ շատ կարևոր դեպքերում: **Ս. Մամիկոնյան** (անկուսակցական) – ԱԳ-ն մեր պետության ամենակարևոր կողմն են, վերին և որոշող մարմինը խորհրդարանն է: Խորհրդակցական բառն այս խնդրում չեմ հասկանում. Խորհրդարանը չի կարող խորհրդակցել կառավարության հետ,

[6] Տես «ՆԽ-ի 1918 թ. հոկ. 12-ի նիստի թիվ 55 օրագիրը»: «Կառավարության լրաբեր» թերթ, 1918 թ., հմ. 8:

[7] Տես «Հայաստանի խորհրդի 1918 թ. նոյեմբերի 8-ի նիստը»: «Զանգ» թերթ, 1918 թ. դեկտեմբեր, հմ. 75:

այլ միշտ խնդիրները քննում, վճռում է և նոր հանձնում կառավարությանն ի կատարումն: Առաջարկում եմ անպայման կազմել հանձնաժողով և ոչ թե հանձնել ավագների խորհրդին: **ԱԳ նախարար** – ԱԳ վարումը պիտի հանձնվի մինիստրին, նրա պատասխանատվությամբ: Գաղտնապահությունը կարող է լինել, բայց ոչ այն մտքով, ինչ որ հասկացվում է գաղտնի դիպլոմատիկական ձև, այլ հենց իբրև տեխնիկական հարմարություն: Ինչ հանձնաժողով էլ որ լինի, նա չպիտի կաշկանդե մինիստրին և դժվար պայմանների մեջ դնե նրան՝ խառնվելով նրա ակտիվ քայլերին: **Հ. Ազատյան** (սոց.-դեմ.) – Նոր հանձնաժողովը պիտի ընտրվի և ունենա բոլոր այն ֆունկցիաները, ինչ որ պառլամենտական մյուս բոլոր հանձնաժողովները: Ավագների խորհրդի անդամները խորհրդարանի պատասխանատվությունն իրենց վրա չեն վերցնի: Առաջարկում ենք այսօր որոշել հանձնաժողովի խնդիրը, ընտրել այն, իսկ գաղտնիքի խնդիրը թողնել հետագա ժողովներին: **Գ. Տեր-Խաչատրյան** (ՀԺԿ) – Ավագների խորհուրդը կառավարության հետ պիտի շաբաթն առնվազն մեկ անգամ ունենա խորհրդակցություն, որպեսզի միշտ տեղյակ լինի անց ու դարձին և պատասխանատու զգա իրեն»[8]:

Հայաստանի խորհրդի կառուցվածքում, բացի վերը նշված «սովորական» հանձնաժողովներից, ստեղծվել են երկու հատուկ մարմիններ, որոնք իրենց բնույթով նման էին հանձնաժողովներին, սակայն լիազորությունների առումով էապես տարբերվում էին դրանցից: Այդ մարմինների ստեղծումը ևս պայմանավորված էր ռազմական և դիվանագիտական գաղտնիքների պաշտպանության անհրաժեշտությամբ: Ինչպես վերը նշվեց, Հայաստանի խորհրդի որոշ խմբակցություններ, մեղմ ասած, բարեկամաբար չէին տրամադրված հայկական պետականության նկատմամբ: Այստեղից էլ առաջանում էր որոշակի ոլորտներում ձեռնարկվելիք քայլերի գաղտնիությունը պահպանելու հիմնախնդիրը: Որպեսզի երաշխավորվեր այդ գաղտնիությունը, Հայաստանի խորհրդի նախագահը կառավարությանն առաջարկում է ստեղծել խորհրդի անդամներից կազմված հատուկ մարմին, որը կառավարության հետ համատեղ պետք է լուծեր ռազմական գերատեսչության և արտաքին քաղաքականության հարցերը[9]:

Կառավարությունը, 1918 թ. օգոստոսի 8-ին քննարկելով այդ առաջարկությունը, համաձայնվեց դրան: Նույն օրը տեղի ունեցավ կառավարության անդամների և Հայաստանի խորհրդի խմբակցությունների ներկայացուցիչների համատեղ նիստը[*], որը, քննարկելով խորհրդարանի հատուկ ընտրովի մարմին ստեղծելու վերաբերյալ խորհրդարանի անդամների առաջարկությունը, հավանություն տվեց դրան: Այդ մարմնի անդամներին առաջադրելու էին խորհրդի հայազգի պատգամավորական կազմ ունեցող խմբակցությունները: Քննարկումների արդյունքներով խորհրդի ներկայացուցիչների և կառավարության անդամների համա-

[8] Տես «ՀԽ-ի 1918 թ. նոյ. 8-ի նիստը»: «Զանգ» թերթ, 1918 թ. դեկտեմբեր, հմ. 75:

[9] Տես Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 5:

[*] Խորհրդի ներկայացուցիչներն էին՝ Հայաստանի խորհրդի նախագահ Ա. Սահակյանը, պատգամավորներ Հակոբ Տեր-Հակոբյանը, Արշամ Խոնդկարյանը, Հայկ Ազատյանը, Արշալույս Մխիթարյանը և Սմբատ Խաչատրյանը:

տեղ նիստը որոշեց ստեղծել երկու հանձնաժողով, որոնք կառավարության հետ համատեղ լուծելու էին ռազմական գերատեսչության և արտաքին քաղաքականության առավել կարևոր հարցերը: Հանձնաժողովները բաղկացած էին Հայաստանի խորհրդի անդամներից՝ խորհրդի ընտրությամբ[10]:

Հետագայում բանավեճերից խուսափելու համար համատեղ նիստում կառավարության առաջարկությամբ ուրվագծվեց կարևոր հարցերի շրջանը. 1) հարցեր, որոնք խորհրդում ենթակա են քննարկման օրենսդրական կարգով, 2) հարցեր, որոնք ռազմական և արտաքին գործերի նախարարները կճանաչեն որպես կարևոր[11]: Այսպիսով՝ ստացվում էր, որ վերը նշված կարևոր հարցերը, թեկուզև օրենսդրական բնույթի, շրջանցելու էին Հայաստանի խորհրդի նիստերը, չէին անցնելու ընդհանուր հիմունքներով քննարկման և ընդունման ընթացակարգերը: Երկու արտակարգ հանձնաժողովների հաստատումից հետո այդ հարցերով կայացված որոշումները ձեռք էին բերում օրենքի ուժ: Այս երկու արտակարգ հանձնաժողովների գործունեության մասին մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել, բայց այն, որ դրանք գործել են, հաստատվում է հետևյալով. նախ, Հայաստանի խորհրդի օրենքների և որոշումների շարքում քիչ են այդ երկու ոլորտներին վերաբերող հարցերը: Դա նշանակում է, որ այդ հարցերը լուծվում էին խորհրդի նիստերից դուրս և չէին հրապարակվում: Երկրորդ. նույն կարգը, ինչպես կտեսնենք, հետագայում կիրառվեց նաև Հայաստանի Խորհրդարանում:

Այս երկու հանձնաժողովներից զինվորականը գործեց մինչև Հայաստանի խորհրդի զինվորական մշտական հանձնաժողովի ստեղծումը՝ 1918 թ. սեպտեմբեր: Դրանից հետո պաշտպանական ոլորտին վերաբերող օրինագծերը և հարցերն անցնում էին այս հանձնաժողովով, որը նույնպես օժտված էր արտակարգ լիազորություններով: Օրինակ՝ կառավարության 1918 թ. սեպտեմբերի 1-ի որոշումից ակնհայտ է դառնում, որ զինվորական հանձնաժողովը, շրջանցելով խորհրդարանը, կարող էր պաշտպանական ոլորտի ծախսերը հոգալու համար կառավարությանը հատկացնել վարկեր: Մեկ այլ դեպքում պաշտպանական ոլորտի ֆինանսական օրինագիծը կառավարության 1918 թ. հոկտեմբերի 12-ի նիստում հավանություն ստանալուց հետո ներկայացվում է Հայաստանի խորհրդի զինվորական հանձնաժողովի և կառավարության խառը նիստի քննությանը: Որոշումից բխում է, որ խառը նիստում հավանություն ստանալուց հետո օրինագիծը ձեռք էր բերելու օրենքի ուժ:

Բացի զինվորական և արտաքին քաղաքականության հանձնաժողովներից, Հայաստանի խորհրդի կառուցվածքում որոշակի դեր է խաղացել նաև «**Հայաստանի խորհրդի հայ խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը**»: Արխիվային նյութերում մեզ հաջողվել է հայտնաբերել այս արտակարգ մարմնի երկու նիստերի արձանագրությունները. դրանցից մեկը թվագրված է 1919 թ. մարտի 16, իսկ մյուսը՝ մարտի 18:

[10] Տես նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 484, թ. 5:

[11] Տես նույն տեղում, նաև՝ ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 5:

Առաջին նիստում, որը նախագահել է խորհրդի նախագահ Ա. Սահակյանը, զեկույցով հանդես է եկել մինիստր-նախագահի պաշտոնակատար Ա. Խատիսյանը: Նիստի արձանագրության մեջ ամրագրված է հետևյալը. «*Հայաստանի խորհրդի հայ ֆրակցիաների խորհրդակցությունը, լսելով ՀՀ Կառավարության մինիստր-նախագահի պաշտոնակատարի զեկուցումը մեր երկրի սահմաններին սպառնացող վտանգի և մեր զորքի անկազմակերպ կացության մասին, ի նկատի առնելով նաև, որ Հայաստանի խորհրդի նիստերը կանոնավոր չեն գումարվում, մինչդեռ զորքը վերակազմելու և զորեղացնելու համար կառավարությունը դրամի անմիջական կարիք ունի, որոշեց. «Թույլ տալ Կառավարությանը զորական նախահաշվի հետևյալ պարագրաֆների վրա նույն նախահաշիվների մյուս պարագրաֆներից դրամ ծախսել. դոքա են. 1) Զինվորների սնունդը լավացնել՝ սննդադրամը շատացնելով, 2) Զորային գործը կանոնավորելու համար անհրաժեշտ ֆիեր և ջորիներ գնել, 3) Զորային զանազան մասնագիտական աշխատանքների համար ռոճիկով մասնագետ ծառայողներ պահել*»:

Այս առաջարկն անցնում է միաձայն: Զեկուցման մյուս մասը քննելու համար որոշվում է մասնավոր խորհրդակցություն գումարել մարտի 18-ին»[12]:

Հայ խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը նիստ է գումարել նաև մարտի 18-ին: Որպեսզի հասկանանք կատարվածի էությունը, այդ արձանագրությունը բերենք ամբողջովին:

«Արձանագրություն 1919 թ. մարտի 18-ի Հայաստանի խորհրդի հայ ֆրակցիաների մասնավոր խորհրդակցության

Մինիստր-նախագահի պաշտոնակատար պ. Ա. Խատիսյանը խոսք առնելով հիմնավորում է նախորդ ժողովին արած զեկուցումը և առաջարկում է թույլ տալ Կառավարությանը՝ ա) ընդհանրապես զորային նախահաշվի մի պարագրաֆից մյուսը ծախսեր անել, բ) երկրի սահմանները ապահովելու համար արտակարգ և համապատասխան միջոցներ ձեռք առնել և գ) բանալ կառավարությանը 10 մլն ռ վարկ՝ այդ նպատակներով ծախքեր անելու:

Ապա պ. Խատիսյանն առաջարկում է այդպիսի բացառիկ հանգամանքներում Մինիստրների խորհրդին տալ ավելի լայն իրավունքներ՝ համապատասխան միջոցների դիմելու, վստահելով, որ նա այդ իրավունքներից կօգտվի բացառիկ հանգամանքներում միայն:

Ժողովը քննության առնելով կառավարության արած առաջարկությունը՝ ընդունում է ՀՅԴ ֆրակցիաների հետևյալ որոշումը. «Երկրի պաշտպանության և զորքի վերակազմավորման գործը փութացնելու համար. ա) լիազորել կառավարությանը արտակարգ միջոցներ ձեռք առնել. բ) թույլ տալ կառավարությանն օգտվել զինվորական նախահաշվի գումարներից՝ մի պարագրաֆից մյուսին անցնելով. գ) նոր վարկ բանալ 10 մլն ռ՝ կառավարության անունով՝ նույն նպատակի համար»:

ՀՅԴ ֆրակցիայի այս առաջարկությանը միանում է ՀԺԿ ֆրակցիան: Սո-

[12] Տես նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 149:

ցիալ-դեմոկրատական ֆրակցիան, պատճառ բերելով, որ Հայաստանի խորհրդի վերջին նիստում դաշնակցական ֆրակցիան հայտարարել է, որ առաջին հերթին նա քննելու է խորհրդի շենքում եղած ինցիդենտը փետրվարի 28-ին պատահած, տեղական ինքնավարության և նոր խորհրդի ընտրությունների օրինագիծը և, որովհետև, նույն ֆրակցիան այս մասնավոր նիստում այդ առաջարկությունները հետ չի վերցնում, բանաձևի քննության կեսին նոցա հեռանում են ժողովից:

Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան համաձայնվում է տրված բանաձևին այն պայմանով, որ կամ Ավագների խորհուրդը և կամ խորհրդից ընտրված մի նոր հանձնաժողով հսկե և վարե արտաքին քաղաքականությունը: Որովհետև սոցիալիստ-հեղափոխականների այս պայմանը չի ընդունվում, նոքա ևս հեռանում են ժողովից»[13]:

Այսպիսով՝ հայ խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը Հայաստանի խորհուրդը շրջանցելու մի յուրահատուկ ձև էր, որը, սակայն, ձախողվեց: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության խմբակցությունը խորհրդարանական կոալիցիայի հետ համագործակցությունը պայմանավորում էր խորհրդարանական ընտրությունների գաղափարից հրաժարմամբ՝ կանխատեսելով, որ ապագա խորհրդարանում ձայներ չի ստանալու: Եվ այդպես էլ եղավ: Էսէռական խմբակցությունը ցանկություն ուներ գործադիր իշխանությունը դնելու խորհրդարանի վերահսկողության տակ, որովհետև իսկապես նկատվում էր դրա անվերահսկելիության, խորհրդարանը շրջանցելու միտում:

1919 թ. հունիսի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ձևավորված Հայաստանի Խորհրդարանը, ի տարբերություն Հայաստանի խորհրդից, որոշ չափով զերծ էր պետական գաղտնիքների հրապարակման վտանգներից՝ իր կազմի շնորհիվ: Խորհրդարանում ներկայացված էին. 1) Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ 73 պատգամավոր, 2) Սոցիալիստ հեղափոխականների կուսակցությունը՝ 4 պատգամավոր, 3) անկուսակցական մահմեդականները՝ 2 պատգամավոր, 4) Արագածոտնի գյուղացիական անկուսակցական միությունը՝ 1 պատգամավոր: Ինչպես տեսնում ենք, մահմեդական խմբակցությունը փոքրաթիվ էր: Սակայն խորհրդարանը նորից քայլեր ձեռնարկեց դիվանագիտական և ռազմական գաղտնիքները պահպանելու ուղղությամբ:

Երկրորդ խորհրդարանի պրակտիկայում աշխատանքի կազմակերպական ձևերից էին տարբեր բնույթի խորհրդակցությունները: Պահպանված պաշտոնական փաստաթղթերը հնարավորություն են տալիս կցկտուր տվյալներ քաղելու խորհրդարանի նախագահության, խորհրդարանական հանձնաժողովների ու խմբակցությունների նախագահների, խորհրդակցությունների մասին, որոնք գումարվում էին խորհրդարանի նախագահի կամ նախագահության նախաձեռնությամբ՝ տարբեր հարցեր քննարկելու համար[14]: Գումարվել են նաև բոլոր խմբակցությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, խորհրդարանական հանձ-

[13] Տես նույն տեղում, թ. 150:

[14] Տես «ՀՊ-ի 1920 թ. հունվարի 10-ի թիվ 63 նիստի արձանագրությունը» (տես ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 15):

նաժողովների նախագահների խորհրդակցություն[15]: Մեզ հետաքրքրող տեսանկյունից առանձնանում է **հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը**, որը երբեմն ընդունել է շատ կարևոր որոշումներ:

Ինչպես նախկինում՝ Հայաստանի խորհրդում, խորհրդարանում ևս զինվորական հանձնաժողովը, որի բոլոր 8 անդամներն էլ դաշնակցական էին, օժտված էր արտակարգ լիազորություններով: Հանձնաժողովը, շրջանցելով խորհրդարանը, կարող էր կառավարությանը հատկացնել պաշտպանական ոլորտում ծախսերի կատարման համար վարկեր: Այսպես. կառավարության 1919 թ. սեպտեմբերի 1-ի նիստում զեկուցմամբ հանդես եկած զինվորական նախարարը պահանջեց հետախուզության և հակահետախուզության ծախսերը հոգալու համար միջոցներ: Այդ զեկուցման հիման վրա կայացվեց հետևյալ որոշումը. «Հավանություն տալ և խնդրել Պառլամենտի զինվորական հանձնաժողովին՝ բաց թողնել այդ գումարը»[16]:

Հայաստանի խորհրդարանում չկար արտաքին հարաբերությունների հանձնաժողով: 1920 թ. հունվարի 10-ի նիստում քննության առնվեց պատգամավոր Լ. Թումանյանի առաջարկությունը՝ արտաքին գործերի հանձնաժողով կազմելու մասին, սակայն ձայների մեծամասնությամբ (10 կողմ, 18 դեմ, 1 ձեռնպահ) այն մերժվեց[17]:

Այսպիսով՝ Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանների գործունեության փորձը հաստատում է, որ խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում պետական գաղտնիք կազմող տեղեկույթը կարիք ունի պահպանության լրացուցիչ երաշխիքների: Այդ փորձը ուսանելի է մեր օրերի համար՝ խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու կապակցությամբ: Օրենսդիր իշխանությունը գործում է հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներով: Ինչպես այս սկզբունքների կիրառումը, այնպես էլ գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ձևերը կառավարության համար վտանգավոր փորձաքարեր են, որովհետև դրանց հետևանքը կամա թե ակամա կարող է լինել նաև ռազմական կամ դիվանագիտական գաղտնիքի հրապարակումը: Այդ էր պատճառը, որ Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանների գործունեության ընթացքում անհրաժեշտ եղավ ներքին կառուցվածքում (նախագահություն, հանձնաժողովներ և հատուկ մարմիններ) կատարել որոշակի կազմակերպահրավական նորամուծություններ, որոնք նպատակաուղղված էին պետական գաղտնիք ներկայացնող տեղեկույթի հնարավոր սորակորստի կանխմանը:

[15] Տես «Հառաջ» թերթ, 1920 թ. փետրվարի 1, հմ. 23:

[16] Տես «ՆԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 1-ի նիստի թիվ 145 օրագիրը» (տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 2-րդ, թ. 47):

[17] Տես «Հառաջ» թերթ, 1920 թ. փետրվարի 1, հմ. 23, *նաև*՝ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 14:

ОРГАНИЗАЦИОННО-ПРАВОВЫЕ СРЕДСТВА ЗАЩИТЫ ВОЕННОЙ И ДИПЛОМАТИЧЕСКОЙ ТАЙНЫ В ПАРЛАМЕНТАХ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А. Г. ВАГАРШЯН, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Опыт деятельности парламентов Первой Республики Армения свидетельствует о том, что в условиях парламентской модели государственного управления информация, составляющая государственную (военную или политико-дипломатическую) тайну, нуждается в дополнительных гарантиях защищенности. Этот опыт имеет значение в наши дни в связи с переходом в РА на подобную систему управления.

В условиях демократии законодательная власть действует на основе принципов публичности и транспарентности. Как эти принципы, так и парламентский контроль представляют определенную угрозу для исполнительной власти в плане разглашения государственной тайны. В данном аспекте представляется необходимым в структуре и деятельности будущего парламента предусмотреть организационно-правовые формы, нацеленные на обеспечение соблюдения государственной тайны.

ORGANIZATIONAL AND LEGAL ASSETS OF SECURING MILITARY AND DIPLOMATIC SECRETS IN THE PARLIAMENTS OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

A. G. VAGHARSHYAN, Doctor in Law, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, Faculty of Law, YSU

SUMMARY

The experience of the activities of the parliaments of the First Republic of Armenia shows that in terms of the parliamentary model of public administration the information, constituting a state (military or political-diplomatic) secret, requires extended guarantees of security. Nowadays this experience is of value in terms of the Republic of Armenia having adopted similar system of administration.

The legislature acts based upon the principles of publicity and transparency under the democracy. Both these principles and the parliamentary control pose a certain threat for the Executive Power in terms of disclosing a state secret. In this context it seems necessary in the structure and activities of the future parliament to provide for organizational and legal forms targeted at keeping the state secret.

ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

Ջ. Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ազգային անվտանգության կարևոր տարրերից է պարենային անվտանգությունը: «Պարենային անվտանգության հռոմեական հռչակագրով» յուրաքանչյուր մարդու ամրագրվում է բավարար չափով անվտանգ և սննդարար կերակրից օգտվելու իրավունքը, իսկ կառավարություններն առաջնահերթ կերպով պարտավորեցվում են կանխել անբավարար սնումը՝ իր բոլոր դրսևորումներով[1]: Ինչպես նշվում է «Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական բառարանում», «Պարենային անվտանգություն. ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ, որը բնութագրում է պետության տնտեսության այն վիճակը, երբ ապահովված է երկրի պարենային անկախությունը և բնակչության համար երաշխավորված է ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող, սպառողների առողջության համար անվտանգ սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը: Պետության պարենային անկախությունը կենսականորեն կարևոր սննդամթերքների ներմուծման անհնարինության կամ անբավարարության դեպքում և պարենային ճգնաժամի կանխարգելման նպատակով սննդամթերքի տեղական արտադրության անհրաժեշտ մակարդակի ապահովման հնարավորությունն է»[2]:

Այսօր աշխարհում ավելի քան 800 մլն մարդ՝ գերազանցապես զարգացող երկրներում, չի բավարարում հիմնական պարենային ապրանքների գծով իր պահանջմունքները[3]: Մինչդեռ յուրաքանչյուր երկրի պարենային քաղաքականության նպատակն է երկրում պարենամթերքի արտադրության, արտաքին առևտրի, պաշարների ստեղծման և վերամշակման ոլորտներում ծագած խնդիրների արդյունավետ լուծումը, ինչպես նաև գյուղական բնակավայրերի սոցիալական զարգացումը: Եվ պատահական չէ, որ Հռոմեական հռչակագրի պարտավո-

---

* Հոդվածը փորձաքննություն է անցել ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչությունում:

[1] Տես «Римская декларация по всемирной продовольственной безопасности». Рим, 13 ноября 1996 г. (http://observer.materik.ru/observer/N3-4_97/019.htm):

[2] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ա. Ե. Սարգսյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն բառարան: Ե., 2012, էջ 72:

[3] Տես «Римская декларация по всемирной продовольственной безопасности» (http://observer.materik.ru/observer/N3-4_97/019.htm):

րությունների, նպատակների և առաջադրանքների վրա հիմնված գործողությունների ծրագրում ներառված են 62 միջոցառումներ, որոնք կառավարությունները կարող են նախատեսել սննդի, առողջապահության, գյուղատնտեսության, կրթության, զարգացման և ներդրումների ոլորտների հարցերի կարգավորմանն ուղղված ազգային ծրագրերում[4]: ՀՀ-ն ևս անմասն չէ այդ գործընթացներից:

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող անբարենպաստ փոփոխությունների, մասնավորապես՝ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում հնարավոր արտակարգ իրավիճակների բացասական հետևանքներին դիմակայելու նպատակով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2011 թվականի մայիսի 18-ի ՆԿ-91-Ն կարգադրությամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը», որի հիման վրա ՀՀ Կառավարությունը մշակել և հաստատել է «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը»[5]: Ծրագրի հիմնական նպատակը հանրապետության բնակչության համար ՄԱԿ-ի ընդունած առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումն է:

Այս տեսակետից ցանկացած պետության կարևոր ռազմավարական ոլորտը գյուղատնտեսությունն է, որը բնակչությանն ապահովում է առաջին անհրաժեշտության պարենային ապրանքներով: Հայաստանի դեպքում գյուղատնտեսության ոլորտի զարգացումը կարևոր է նաև այն պատճառով, որ նպաստում է ոչ միայն պարենային խնդիրների լուծմանը՝ դրա համակողմանի սոցիալ-տնտեսական հետևանքներով հանդերձ, այլև արդյունաբերության զարգացմանը:

ՀՀ ԱՎԾ հրապարակումների համաձայն՝ ազգային պարենային հաշվեկշռում ընդգրկված պարենամթերքի որոշ տեսակների գծով (ձուկ, ոչխարի և այծի միս, բանջարեղեն, ձու, միրգ, շաքար) ինքնաբավության աստիճանը համեմատաբար բարձր է: Օրինակ՝ մինչև 2010 թ. շաքարը հիմնականում ներմուծվում էր, իսկ 2010 թվականին՝ շաքարի արտադրության վերագործարկումից հետո, դրա արտադրության ծավալը 2013 թ. կազմեց 69625 տոննա՝ 2009 թ. 870 տոննայի դիմաց, ինչի շնորհիվ ինքնաբավության աստիճանը հասավ 92,6 %-ի: Մինչդեռ կան պարենամթերքի տեսակներ, որոնց գծով ինքնաբավության աստիճանը գտնվում է ցածր մակարդակի վրա (բուսական յուղ և խոզի միս), ինչը հիմնականում պայմանավորված է բնատնտեսական գործոններով և տարբեր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով (տես աղ. 1):

Իհարկե, ինչպես նշեցինք վերևում, ուսումնասիրվող ժամանակահատվածում ինքնաբավության աստիճանի բարձրացում նկատվել է ոչ միայն շաքարի, այլև բուսական յուղի դեպքում: 2013 թ. բուսական յուղի արտադրության ծավալը 2009 թ. համեմատությամբ աճել է շուրջ 4,8 անգամ[6], մինչդեռ այլ տեսակի պարե-

[4] Տես նույն տեղում:

[5] Տես ՀՀ Կառավարության 2011 թ. հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» հմ. 1522-Ն որոշումը (http://www.arlis.am/documentview.aspx?docid=95884):

[6] Տես «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014», ՀՀ ԱՎԾ: Ե., 2014, էջ 278:

նամթերքի ինքնաբավության աստիճանի տատանումները եղել են ոչ նշանակալի:

Սակայն նույնիսկ 21-րդ դարում աշխարհի, նաև ՀՀ բնակչության պարենային ապահովման ամենակարևոր մարտահրավերներից մեկը ամենաուղղակի

Աղյուսակ 1[7]

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱԿԻ ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ 2004–2013 ԹԹ. (%)

Տարիներ	Ցորեն	Բուսական յուղ	Շաքար	Խոզի միս	Թռչնի միս
2004 թ.	41,6	2,9	0,9	54,8	24,3
2005 թ.	43,7	1,5	1,8	57,3	18,7
2006 թ.	31,6	14,1	3,6	64,9	32,3
2007 թ.	36,7	1,3	3,5	54,3	16,9
2008 թ.	39,8	1,7	3,4	31,4	14,0
2009 թ.	33,5	4,2	1,3	34,8	14,2
2010 թ.	33,7	4,1	24,6	39,9	12,3
2011 թ.	36,5	2,8	96,0	43,3	12,2
2012 թ.	32,9	9,1	93,1	38,3	19,1
2013 թ.	46,8	15,1	92,6	46,3	19,8

իմաստով հացի խնդիրն է: Չնայած այն հանգամանքին, որ 2014–2015 թթ. աշխարհում հացահատիկի արտադրության ծավալներն ավելացել են 12 մլն տոննայով և կազմել են 2002 մլրդ տոննա[8], այդուհանդերձ աշխարհաքաղաքական զարգացումների հետևանքով ցորենի ենթահնդեքսը[*] նվազել է 6 %-ով: Հացահատիկի համաշխարհային արտադրությունն արդեն կանխատեսվում է 701 մլն տոննա, այսինքն՝ 2014–2015 թթ. համեմատությամբ 2 %-ով անկում[9]: Ինքնըստինքյան կփոփոխվեն նաև հացահատիկի գները: Այս տեսակետից նպատակահարմար ենք համարում ներկայացնել այն գործոնները, որոնք առավել շոշափելի կերպով են ազդում հացահատիկի համաշխարհային գների վրա: Դրանք են.

- արտահանող որևէ երկրի կողմից արտահանման արգելքի կիրառումը,
- արտահանող որևէ երկրում արտադրության ծավալների նվազումը,
- հիմնական ներմուծող երկրներում բարձր բերքի ստացումը,
- սղաճի համաշխարհային մակարդակը,

[7] Տես «Պարենային ապահովություն և աղքատություն, 2014 թ. հունվար–դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ: Ե., 2015, էջ 67–75, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2011 թ. հունվար–դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ: Ե., 2012, էջ 67–69, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2008 թ. հունվար–դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ: Ե., 2009, էջ 69–72, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2005 թ. հունվար–դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ: Ե., 2006, էջ 37:

[8] Տես «Grain market report». International Grain Council. UK, 2015, P. 1:

[*] Միջազգային հացահատիկային խորհուրդի (ՄՀԽ) հրապարակած զեկույցում համաշխարհային հացահատիկի գները հաշվարկվում են *հացահատիկի և ձիթապտղի մշակաբույսերի (Grains and Oilseeds Index՝ GOI)* ինդեքս կոչվող ցուցանիշով:

[9] Տես նույն տեղում, էջ 2:

- տնտեսապես հզոր երկրներում տոկոսադրույքի փոփոխությունը,
- ՋԼՄ-ներում լուրերի շահարկումը,
- հացահատիկի պաշարների մասին հաշվետվությունները[10]:

ՀՀ-ում ցորենի ինքնաբավության աստիճանի առավելագույն մակարդակ գրանցվել է 2013 թ.՝ 46,8 %: Դա հիմնականում պայմանավորված է եղել այդ տարվա բարձր բերքատվությամբ՝ 31,3 ց/հա, ինչից կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում ցորենի ինքնաբավության աստիճանի բարձրացման վրա ազդող էական գործոններից է բերքատվության մակարդակը: Ավելացնենք նաև, որ դա հիմնականում պայմանավորված է եղել ցանքատարածությունների ընդլայնմամբ, որոնք, մասնավորապես, 2013 թ. հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի դեպքում 2009 թ. նկատմամբ աճել են 4 %-ով՝ կազմելով 174 հազ. հա: Նույն ժամանակահատվածում ցորենի ցանքատարածությունները ավելացել են 8,5 %-ով՝ կազմելով 99,7 հազ. հա (ընդհանուր ցանքատարածությունների 31,3 %-ը)[11]:

Այսպիսով՝ ՀՀ-ն դեռ ապահովված չէ որոշ կարևոր տեսակների պարենամթերքով, ինչը երկրի պարենային անվտանգության համար լուրջ սպառնալիք է:

ՀՀ պարենային անվտանգությանն ուղղված անհանգստացնող սպառնալիքներից է նաև մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական դրամական եկամուտների (ԱԴԵ) և անվանական սպառողական ծախսերում (ԱՍԾ) սննդամթերքի մասնաբաժնի փոխկապվածությունը: Աղյուսակ 2-ում բերված վիճակագրական տվյալների վերլուծությամբ փորձենք ներկայացնել այդ սպառնալիքները:

2004–2013 թթ. ՀՀ տնային տնտեսությունների մեկ շնչին բաժին ընկնող միջին ամսական ԱԴԵ-ն ավելացել է տարեկան միջին հաշվով 11,82 %-ով, իսկ ԱՍԾ-ն աճել է 7,28 %-ով, և չնայած այս հանգամանքին, տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում դեռևս մեծ մասնաբաժնով աչքի են ընկնում սննդամթերքի ձեռքբերման համար կատարվող ծախսերը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների և սպառողական ծախսերի կազմում սննդամթերքի ձեռքբերման վրա կատարվող ծախսերի մասնաբաժնի միջև ձևավորվել է բավական ուժեղ հակադարձ կապ, այսինքն՝ անվանական դրամական եկամուտների կրճատման դեպքում բնակչության սպառողական ծախսերի կազմում սննդամթերքի վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը նշանակալիորեն աճում է:

ՀՀ առողջապահության նախարարության մշակած սննդամթերքի կազմի և կառուցվածքի, էներգետիկայի հաշվառման մեթոդաբանությամբ մեկ շնչի հաշվով օրական էներգետիկան կազմում է 2412 կկալ[12]: 2004–2014 թթ. ՀՀ բնակչության մեկ շնչի հաշվով փաստացի սպառված սննդամթերքի միջին օրական էներգետիկայի առավելագույն մակարդակ գրանցվել է 2008 թ.՝ 2223 կկալ, իսկ դրան նախորդող

[10] Տես *Ս. Ս. Ավետիսյան,* Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ: Ե., 2014, էջ 10:

[11] Տես «Պարենային ապահովություն և աղքատություն, 2014 թ. հունվար–հունիս»: ՀՀ ԱՎԾ: Ե., 2014, էջ 33:

[12] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար–դեկտեմբերին»: ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ամսական զեկույց: Ե., 2015, էջ 252:

և հաջորդող տարիներին ցուցանիշները եղել են բավական ցածր: Չնայած բնակչության մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերի կազմում սննդամթերքի բարձր տեսակարար կշռին՝ բնակչությունը դեռևս մնում է թերսնված, ինչի վկայությունն են փաստացի միջին օրական էներգետիկայի ցուցանիշները:

Աղյուսակ 2[13]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2004–2013 ԹԹ.

Տարեթիվ	ԱԴԵ-ն մեկ շնչի հաշվով (միջին անվանական), դրամ	ԱԴԵ-ի դեֆլյատորային գործակիցը	ԱՄԾ-ն մեկ շնչի հաշվով (միջին անվանական), դրամ	ԱՄԾ-ում սննդամթերքի (առանց ալկոհոլային խմիչքների) վրա կատարված ծախսերի մասնաբաժինը, %	Սպառված սննդամթերքի էներգետիկան մեկ շնչի հաշվով, (միջինը) կկալ
2004	14450	20,8	18803	57,4	1967
2005	15949	17,5	20642	58,3	2124
2006	18446	13,9	22601	58,2	2156
2007	22287	15,0	26297	53,5	2119
2008	26866	14,7	28878	51,9	2223
2009	28038	14,4	27667	51,1	2162
2010	31553	14,1	28647	51,9	2061
2011	34206	14,5	32585	52,7	2093
2012	39056	15,8	34921	48,8	2169
2013	42404	15.5	36787	47.9	2090

Եվ այսպես. պարենային անվտանգության ապահովման խնդրի լուծման գործում էական դեր ունի գյուղատնտեսությունը, որի հիմնական առաքելությունը բուսական և կենդանական ծագում ունեցող տեղական արտադրության պարենամթերքի ֆիզիկական մատչելիության ապահովումն է: Միևնույն ժամանակ, ամբողջությամբ տեղական արտադրության գյուղատնտեսական մթերքներով հանրապետության ապահովումը տնտեսապես հիմնավորված չէ: Հիմնավորված է համարվում հարաբերական և բացարձակ առավելություններ ունեցող գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման ծավալների մեծացումը: Իսկ որոշ գյուղատնտեսական մթերքների մինչև 20 %-ը նպատակահարմար է ներմուծել, մասնավորապես՝ ցորենը, թռչնի միսը և հատիկաընդեղենային մշակաբույսերը: Սակայն հարկ է նշել, որ Հայաստանում գյուղատնտեսական արտադրության ցածր եկամտաբերության, անբարենպաստ կլիմայական պայմանների, երկրում առկա սոցիալ-տնտեսական պայմանների, բարձր մակարդակի աղքատության պարագայում չի ապահովվում ոլորտի երկարաժամկետ զարգացումը:

[13] Տես «Պարենային ապահովություն և աղքատություն, 2014 թ. հունվար–դեկտեմբեր», էջ 85, 90–91, 108, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2011 թ. հունվար–դեկտեմբեր», էջ 77, 79–81, 82–83, 100, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2008 թ. հունվար–դեկտեմբեր», էջ 79, 81–85, 102, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2005 թ. հունվար–դեկտեմբեր», էջ 40, 42–43, 56:



Գծապատկեր. Մեկ շնչի հաշվով միջին ամսական ԱԴԵ-ի և ԱՍԾ-ում սննդամթերքի մասնաբաժնի փոխկապվածությունը, 2004–2014 թթ.

Ագրարային ոլորտի զարգացումը պահանջում է պետական միջամտություն և կարգավորում, ընդ որում, հիմնական գործիքները պետական աջակցության տարբեր ծրագրերն են, նաև՝ հարկային լծակները: Ոլորտի ուսումնասիրությունները[14] վկայում են, որ ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունն իր ուժեղ և թույլ կողմերով հանդերձ ապահովում է զարգացման որոշակի հնարավորություններ, մասնավորապես՝ գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման և հետևողական ներդրման, կարևորագույն գյուղատնտեսական արտադրատեսակների (հացահատիկ, միս, կաթ) իրացման երաշխավորված գների սահմանման (այն է՝ ոլորտում գնաճի փոփոխությունների հաշվառման) անբարենպաստ բնակլիմայական պայմաններում կառավարության կողմից լրավճարների տրամադրման, ապրանքային ինտերվենցիաների և ինտերվենցիոն գնումների, ամենակարևորը՝ գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և այլ առումներով: Հարկ է նաև նշել, որ հրատապ և այժմեական է գյուղատնտեսության ոլորտում ներդրել քաղաքակիրթ շուկայի այնպիսի տարր, ինչպիսին է գյուղատնտեսության ապահովագրական համակարգը, ինչը նույնպես կարող է նպաստել գերակա ոլորտ հայտարարված գյուղատնտեսության հետագա հարաճուն զարգացմանը:

[14] Տես «Զարգացման ժամանակակից մարտահրավերներ», ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի (2014 թ. հոկտեմբերի 29–31) նյութեր, մաս II: Ե., 2015, էջ 10–14:

ПРОДОВОЛЬСТВЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ ОБЕСПЕЧЕНИЯ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ РА

Дж. А. ТАДЕВОСЯН, кандидат экономических наук, доцент

РЕЗЮМЕ

Продовольственная безопасность – одна из важнейших составляющих национальной безопасности, характеризующая состояние экономики государства, при котором обеспечивается его продовольственная независимость, гарантируется физическая и экономическая доступность продовольствия,

соответствующего утвержденным физиологическим нормам и безвредного для здоровья потребителей.

Анализ проблем продовольственной безопасности РА осуществлен на базе таких экономических показателей, как: степень продовольственной самодостаточности; основные показатели физической доступности продуктов и показатель достаточности потребления продуктов; статистические данные о зависимости между среднемесячным доходом на душу населения и долей затрат на продовольствие.

Предлагается стимулировать в республике производство соответствующих продуктов. Исследования в данной сфере свидетельствуют о том, что политика государственной поддержки сельского хозяйства в РА обеспечивает определенные возможности для развития сельского хозяйства, в частности, в плане: последовательного внедрения и развития системы сельскохозяйственной кооперации; государственной дотации хозяйствам, функционирующим в неблагоприятных климатических условиях; реализации важнейших сельскохозяйственных продуктов по гарантированным ценам; технического переоснащения аграрного производства; внедрения такого элемента цивилизованного рынка, как система сельскохозяйственного страхования.

FOOD SECURITY

ON SOME ISSUES OF ENSURING THE RA FOOD SECURITY

J. A. TADEVOSYAN, PhD in Economy, Associate Professor

SUMMARY

Food security is one of the key components of national security characterizing the state of national economy. It provides for the food self-sufficiency of the state, and guarantees the physical and economic availability of food, meeting the approved physiological standards and being harmless to the consumers' health.

The analysis of problems of the RA food security is carried out based upon such economic performances as: the level of food self-sufficiency; main indicators of foodstuffs availability and the sufficiency indicator of the products consumption; statistics on relations between the average monthly income per capita and the share of expenses on food.

It is proposed to promote the production of relevant products in the country. The studies in the given sphere show that the policy of state support for the agriculture in the Republic of Armenia ensures certain opportunities for developing the agriculture, particularly, in terms of: the consistent adoption and development of the system of cooperative farming; state subsidies to the farms run in unfavorable weather conditions; sales of the most important agricultural products at guaranteed prices; technical re-equipment of agricultural production; introduction of such a component of a civilized market as an agricultural insurance system.

«ՀԱԿԱԴՐԱՀԱՅԱՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ»՝ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴ

Կ. Ա. ԳԱԼՈՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի կիբեռանվտանգության խմբի գիտական-վերլուծաբան



Անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների որոշման, գնահատման, չեզոքացման և պետության կայուն զարգացման ապահովման համար անհրաժեշտ հիմնական ձեռնարկումներն արտացոլված են լինում ազգային անվտանգության ռազմավարությունում: Դրա մշակման ժամանակ կիրառվող էական գործիքներից է այլընտրանքային վերլուծությունը*: Այն ներառում է ինչպես ավանդական, այնպես էլ նորամուծական մեթոդներ, ինչպիսիք են սցենարային պլանավորումը, ՍՎՈՏ-ը, ԴԵԼՖԻ-ն, «հակադրահայաց վերլուծությունը»: Նշված մեթոդներից համեմատաբար քիչ է ուսումնասիրված «հակադրահայաց վերլուծությունը» («կարմիր թիմի» մեթոդիկա՝ *red teaming)*, որը հակառակորդի (մրցակիցների) դիտանկյունից յուրային հնարավորությունները, կարողությունները, ծրագրերը, ռազմավարությունն ու քաղաքականությունը ուսումնասիրելու, հասկանալու և թույլ կողմերը բացահայտելու մեթոդ է[1]: Այսպես. չինացի զորավար, տեսաբան, ռազմագետ և մտավորական Սուն Ցզին (մ. թ. ա. 544–496 թթ.) «Պատերազմի արվեստը» հայտնի աշխատության մեջ գրում է. «Ճանաչիր թշնամուդ և ինքդ քեզ ու հարյուրավոր պատերազմներում երբեք չես պարտվի… երբ անիրազեկ ես թշնամուդ մասին, բայց ճանաչում ես ինքդ քեզ՝ պարտվելու կամ հաղթելու հավանականությունը հավասարվում է: Եթե չես ճանաչում ո՛չ թշնամուն, ո՛չ էլ ինքդ քեզ՝ կպարտվես բոլոր ճակատամարտերում»[2]:

«Հակադրահայաց վերլուծությունն» առաջին անգամ կիրառվել է 19-րդ դարի

* Այլընտրանքային վերլուծությունը նպատակին հասնելու համար բազմազան տարբերակների վերհանումն ու գնահատումն է, դրանց արդյունավետության որոշումը (տես «Rethinking «Alternative Analysis» to Address Transnational Threats». The Sherman Kent Center for Intelligence Analysis Occasional Papers, October 2004, Vol. 3, N 2 (https://www.cia.gov/library/kent-center-occasional-papers/vol3no2.htm#_ftnref2)):

[1] Տես «Red Teaming and Alternative Analysis». «Red Team Journal» (http://redteamjournal.com/about/red-teaming-and-alternative-analysis/); «The Information Design Assurance Red Team (IDARTTM)». «Sandia National Laboratories», 2009 (http://www.idart.sandia.gov/): «Red team» («կարմիր թիմ»). արևմտյան մասնագիտական գրականության մեջ և զորավարժություններին վերաբերող այլ փաստաթղթերում խորհրդանշում է հակառակորդին:

[2] Տես *Sun Tzu*. The art of War. Translated and with an introduction by Samuel B. Griffith. Oxford University Press. New York and Oxford, P. 84 (http://web.stanford.edu/class/polisci211z/1.1/Sun%20Tzu.pdf):

առաջին տասնամյակներին պրուսական Գլխավոր շտաբում այն բանից հետո, երբ 1806 թ. հոկտեմբերի 14-ին՝ մեկ օրվա ընթացքում, Նապոլեոնի բանակը ծանր պարտության մատնեց պրուսական բանակին Ենայի և Աուերշտադտի ճակատամարտերում: Այդ ջախջախիչ պարտության դասերի հաշվառմամբ պրուսական ռազմական ոլորտում ձեռնարկվեցին բարեփոխումներ, որոնք 1820 թ. հանգեցրեցին առաջին ռազմական խաղի *(Kriegspiel)* ստեղծմանը՝ ինչպես տեղանքի, այնպես էլ հեծելազորի, հրետանու և հետևակի գործողությունների նմանարկմամբ: 1820-ական թվականներին խաղը ներկայացվեց Գլխավոր շտաբի պետ գեներալ ֆոն Մյուֆլինգին, որը նշեց. «սա խաղ չէ, այլ պատերազմին նախապատրաստում. այն մեծ արժեք ունի ամբողջ բանակի համար»[3]:

Կախված խնդրի բարդությունից՝ «կարմիր թիմը» կարող է բաղկացած լինել 2–25 անդամներից, մինչդեռ օպտիմալ թիվը 5-9 է: «Կարմիր թիմի» անդամները պետք է օժտված լինեն զարգացած դատողականությամբ և երևակայությամբ, ռազմավարական, քննադատական և ստեղծագործական մտածողությամբ, վերլուծական հմտություններով, այդ թվում՝ երևույթները տարբեր տեսանկյուններից դիտելու և գնահատելու հմտությամբ, ավանդական (կարծրատիպային) մտածելակերպին մարտահրավեր նետելու ունակությամբ, հաղորդակցային և ինքնակառավարման հմտություններով: Այսպիսով՝ կան մի շարք հանգամանքներ, որոնք կարող են ազդել «կարմիր թիմի» գործունեության որակի վրա:

«Հակադրահայաց վերլուծությունը» կատարվում է հետևյալ քայլերով.

1. նշանակվում է «կարմիր թիմի» ղեկավար, որը գերազանց կերպով տիրապետում է «կարմիր թիմի» մեթոդի կիրառման տեխնիկային,
2. կազմվում է «կարմիր թիմը»,
3. «կարմիր թիմը» ապահովվում է անհրաժեշտ տեղեկությամբ,
4. «կարմիր թիմին» ներկայացվում են կոնկրետ նպատակները, ուսումնասիրության շրջանը, ժամանակացույցը և առաջադրանքի կատարման մեխանիզմները,
5. վերլուծության արդյունքները ներկայացվում են որոշում կայացնողներին,
6. ապահովվում է «կարմիր թիմի» աշխատանքների կառուցողական տացքը[4]:

«Կարմիր թիմը» կիրառական վերլուծությունը կատարում է երեք հիմնական փուլերով.

1. **ախտորոշման փուլ,** երբ ճշգրտվում են տեղեկության հավաստիությունը, մշակվում են պայմանական տրամաբանական նախադրույթները,
2. **ստեղծագործական փուլ,** երբ դիտարկվում են բոլոր հնարավոր սցենարները և դրանց հետևանքները,
3. **մարտահրավերի փուլ,** երբ դիտարկվում է վերլուծվող սցենարների համար առաջարկվող լուծումների հավաստիությունը[5]:

---

[3] Տես *Williamson Murray.* War, Strategy, and Military Effectiveness. Cambridge University Press. New York, 2011, P. 144:

[4] Տես «Red teaming guide». Ed. 2. Ministry of Defense, U.K. Development, Concepts and Doctrine Centre, January 2013, PP. 2-1, 2-2 (https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/142533/20130301_red_teaming_ed2.pdf):

[5] Տես նույն տեղում, էջ 3-2:

Յուրաքանչյուր փուլից հետո «կարմիր թիմը» պետք է վերանայի վերլուծության ընթացքը, որպեսզի պարզի, թե արդյոք ի հայտ չի եկել նոր տեղեկույթ:

Տվյալ մեթոդը կիրառելի է ինչպես պաշտպանական-անվտանգային, այնպես էլ պետության կայուն զարգացումն ու կենսագործունեությունն ապահովող մյուս բոլոր ոլորտների համար և կարող է նպաստել քաղաքական առաջնորդների, մասնավոր ընկերությունների ղեկավարների գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Ներառելով այնպիսի գործիքներ, ինչպիսիք են մոդելավորումը, նմանարկումը, խոցելիության խորազննումը *(vulnerability probes)*՝ վերլուծության տվյալ մեթոդը հնարավորություն է տալիս մրցակցային միջավայրում բացահայտելու իր թույլ կողմերը, հավանական մարտահրավերներն ու սպառնալիքները և գտնելու դրանք չեզոքացնելու կամ ազդեցությունը հնարավորինս նվազեցնելու մեխանիզմներ:

Ներկայումս պաշտպանական-անվտանգային ոլորտում կատարվող վերլուծությունների ժամանակ «հակադրահայաց վերլուծությունը» կարող է կիրառվել ռազմավարական, մարտավարական և օպերատիվ մակարդակներում[6]: Դրա արդյունավետությունն ապահովելու համար կարևոր են ճիշտ հարցադրումները, որոնք խթանում են նորարարական մտածողության զարգացումը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հարցադրումները ձևակերպել այն պայմանների համար, որոնցում կատարվում են նաև հիմնական սցենարային դիտարկումները՝ ոչ միայն ռազմական, այլև աշխարհագրական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մեթոդի արդյունավետ կիրառման պարագայում հնարավոր է դառնում էապես կատարելագործել որոշումների կայացման գործընթացը: Մասնավորապես՝ մեթոդը կիրառելի է հայեցակարգերի մշակման, օպերատիվ պլանավորման, հետախուզության, ռեսուրսների կառավարման, տեխնիկական կարողությունների գնահատման գործում:

«Հակադրահայաց վերլուծությունը» հաջողությամբ կիրառվել է Գերմանիայում: 1919 թվականին կնքված Վերսալի պայմանագրով Գերմանիան զրկվել էր զրահապատ տրանսպորտային միջոցներ գնելու կամ նախագծելու հնարավորությունից: Սակայն գերմանացիները ներբերեցին զրահապատ մեքենաների արտադրման ոլորտում առաջատար բրիտանացիների փորձը: Քննադատորեն դիտարկելով առաջին աշխարհամարտի դասերը՝ գերմանացիներն սկսեցին հետազոտություններ, որոնց ընթացքում կիրառվեց «հակադրահայաց վերլուծությունը»: Նշված հետազոտությունները առանցքային նշանակություն ունեցան նաև գերմանական «կայծակնային պատերազմի» *(blitzkrieg)* ժամանակ ռազմական գործողությունների հավանական սցենարների մշակման համար[7]:

«Հակադրահայաց վերլուծությունը» հաջողությամբ կիրառվել է նաև 1962 թ. Կուբայի ճգնաժամի ժամանակ: Ճգնաժամի ծագման հենց առաջին օրը՝ հոկտեմ-

[6] Տես «Defense Science Board Task Force on The Role and Status of DoD Red Teaming Activities». DoD, Office of the Under Secretary of Defense For Acquisition, Technology, and Logistics. Washington, September 2003, P. 2 (http://fas.org/irp/agency/dod/dsb/redteam.pdf):

[7] Տես նույն տեղում, էջ 31:

բերի 16-ին, Նախագահ Քենեդին ձևավորեց Ազգային անվտանգության խորհրդի գործադիր կոմիտե, որի հիմնական նպատակն էր ստեղծված իրավիճակում այլընտրանքային մարտավարական սցենարների մշակումը՝ ի հակադրություն հակահարվածի առկա ռազմական սցենարի[8]:

Պաշտպանական-անվտանգային ոլորտում տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրումը և կիրառումը անհրաժեշտություն են առաջ բերում «հակադրահայաց վերլուծությունը» կիրառելու նաև տվյալ ոլորտում առկա բացերի, հնարավոր սպառնալիքների բացահայտման համար: Այս մեթոդի տարատեսակն է «կիբեռ հակադրահայաց վերլուծությունը», որը կիբեռաշխարհում *(cyber world)* հարձակվողների մտածելակերպի և գործողությունների նմանարկմամբ հնարավորություն է տալիս պարզելու յուրային կիբեռանվտանգային հնարավորությունները և կատարելագործելու առկա կիբեռպաշտպանության մեխանիզմները: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ կիբեռաշխարհում «հակադրահայաց վերլուծության» կիրառումը նոր երևույթ չէ: ԱՄՆ-ի Ազգային անվտանգության գործակալությունը տվյալ մեթոդը կիրառել է դեռ 1997 թ.: Դրա շնորհիվ հաջողվել է պետության համար կարևոր նշանակություն ունեցող ենթակառուցվածքներում (մասնավորապես՝ էներգետիկ ոլորտում) որոշարկել և գնահատել առկա սպառնալիքները: Այն, որ ԱՄՆ-ի Ազգային անվտանգության գործակալությունը կիրառեց «կիբեռ հակադրահայաց վերլուծությունը», ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնյաների համար դարձավ նախադեպ: Ներկայումս ԱՄՆ-ի Պաշտպանության դեպարտամենտում «կիբեռ հակադրահայաց վերլուծության» կիրառումը կրում է պարբերական բնույթ: Դրա հիմնական նպատակը «կապույտ թիմերի» (յուրային) այն հնարավորություններն են, որոնք պետք է իրացվեն ցանցերը պաշտպանելու համար: Դա արվում է չորս հիմնական փուլերով (տես գծապատկերը):

«Կիբեռ հակադրահայաց վերլուծությունը» 2010 թվականից կիրառվում է Էստոնիայում տեղաբաշխված ՆԱՏՕ-ի գերազանցության կենտրոնի կազմակերպած «Կողպված վահաններ» *(Locked shields)* վարժանքների ժամանակ, որոնց նպատակն է տեղեկատվական համակարգերի խոցելի տեղերի բացահայտումը[9]:

«Կարմիր թիմի» գործունեությունը բացառապես կապված է մարդկային ռեսուրսների հետ, և հաճախ բավական դժվար է լինում հավաքել իրազեկ «կարմիր թիմ», քանի որ հայրենական մասնագետները սովորաբար լինում են սակավաթիվ, մինչդեռ որոշումների կայացման տարբեր մակարդակներում անհրաժեշտ են կոնկրետ բարձրակարգ մասնագետներ[10]: ՈՒստի անվտանգային հետազոտություններում կիրառվում է նաև «կարմիր գործակալի» մոդելը, որը, լինելով համակարգչային ծրագիր, կարող է փոխարինել մարդուն կամ աջակցել մարդկանցով համալրված «կարմիր թիմի» գործունեությանը: Այս ավտոմատացված մոդելը մշակվում է հակառակորդի վարքագիծը կանխատեսելու և ռազմավարական

[8] Տես նույն տեղում, էջ 32:

[9] Տես նույն տեղում, էջ 14:

[10] Տես *Paul K. Davis, William L. Schwabe.* Search for a Red Agent to be Used in War Games and Simulations. «RAND» corporation, July 1985, P. 1:

խաղերի ու նմանարկումների ժամանակ կիրառելու համար: Խաղային կառուցվածք ունեցող նմանարկումները կարող են բաղկացած լինել բազմաթիվ բարդ և տարաբնույթ սցենարներից, որոնց մշակման գործը դյուրինացվում է ռազմավարական խաղի ավտոմատացման շնորհիվ:



Գծապատկեր. «Կիբեռ հակադրահայաց վերլուծության» փուլերը[11]

Այսպիսով՝ այլընտրանքային վերլուծության՝ «կարմիրների թիմի» և «կարմիր գործակալի» մեթոդների կիրառումը կարող է արդյունավետ միջոց լինել պաշտպանական-անվտանգային ոլորտի պրոբլեմների վերհանման և սպառնալիքների դեմ արդյունավետ պայքարի կազմակերպման ու գնահատման համար:

[11] Տես *Pascal Brangetto, Emin Çalişkan, Henry Rõigas.* Cyber Red Teaming: organizational, technical and legal implications in a military context. NATO Cooperative Cyber Defense Centre of Excellence. Tallinn, 2015, P. 7:

ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

«АНАЛИЗ С ПОЗИЦИЙ ПРОТИВНИКА» КАК МЕТОД ОЦЕНКИ ОБОРОННО-БЕЗОПАСНОСТНЫХ СИСТЕМ

К. А. ГАЛОЯН, кандидат политических наук, ученый-аналитик
Группы кибербезопасности ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

Одним из эффективных альтернативных методов анализа состояния системы безопасности организации (государства, предприятия, иного субъекта конкурентных отношений) является метод «анализа с позиций противника» (методика «красных команд»). Его сущность заключается в оценке существующих угроз, возможностей их парирования, разрабатываемых и уже реализуемых стратегий и политики глазами противника (конкурента) в целях определения их сильных и слабых сторон, в первую очередь – уязвимых точек.

В последние годы этот метод получает все большее применение при решении безопасностных вопросов, однако он используется и для экспертного обеспечения устойчивого развития во всех сферах жизнедеятельности

государства и общества. «Анализ с позиций противника» позволяет выявить основные недостатки, вызовы, возможности и потенциальные угрозы в условиях конкурентной среды, детерминировать возможные оборонные сценарии на стратегическом, тактическом и оперативном уровнях, найти оптимальные решения посредством применения механизмов моделирования и имитирования, а также проверки на уязвимость.

Данный метод получил широкое распространение и в сфере кибербезопасности, где, в частности, модель «красного агента» представляет собой компьютерную программу для оценки кибер возможностей, разработок информационных технологий и перспектив защиты информационной инфраструктуры посредством разработки сценариев и моделирования кибератак в целях обнаружения уязвимых мест в сети и системе.

POLITICAL STUDIES

"RED TEAMING" AS A METHOD FOR ASSESSING DEFENSE-SECURITY SYSTEMS

K. A. GALOYAN, PhD in Political Science, Research Fellow at the Cybersecurity Group, INSS, MOD, RA

SUMMARY

One of the efficient alternative methods for the state analysis of security system of an organization (state, enterprise, or other entity of competitive relations) is the method of "the analysis from the position of an enemy" ("red team" method). Its essence is in the assessment of the existing threats, the opportunities of countering them, the strategies and policy being developed and having been already implemented from an adversary's (competitor's) perspective for identifying their strengths and weaknesses, firstly – vulnerabilities.

In recent years this method has been increasingly used in security affiliated issues, however it is also applicable for the expert provision of sustainable development in all fields of state and society activities. "The analysis from the position of an enemy" makes it possible to identify key weaknesses, challenges, opportunities and potential threats in a competitive setting, to reveal possible defense scenarios on strategic, tactical and operational levels, to find optimal solutions through the use of modeling and simulation mechanisms, as well as vulnerability probes.

This method also became widespread in the sphere of cybersecurity, where, particulary, a "red agent" model is a computer program for the evaluation of cyber capabilities, information technology developments and information infrastructure protection prospects through the development of scenarios and modeling of cyber attacks for detecting network and system vulnerabilities.

ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Հ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, արդարադատության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՌԴ ՊՆ Ռազմական համալսարանի քրեագիտության ամբիոնի դոկտորանտ

Զինված հակամարտության կողմերի պատերազմական հանցագործությունների քննությունը, որպես կանոն, կատարվում է հենց այդ մարտական գործողություններով պայմանավորված մարտական իրադրության պայմաններում: Այդ իրադրությունը, ազդելով կենսագործունեության բոլոր ոլորտների վրա և կյանքի կոչելով զանազան արտակարգ միջոցառումներ (ռազմական կամ արտակարգ դրություն և այլն), ներգործում է նաև պատերազմական հանցագործությունների քննության կազմակերպման վրա՝ պայմանավորելով մարդկային գործունեության տվյալ ոլորտում այն յուրահատուկ կայուն կապերի, կախումների, հարաբերությունների և միտումների ձևավորումը, որոնք էլ հանդես են գալիս որպես քննության օրինաչափություններ: Ուստի կարելի է պնդել, որ գոյություն ունեն զինված հակամարտության շրջանում կատարված պատերազմական հանցագործությունների քննության յուրահատուկ օրինաչափություններ: Սույն հոդվածում մենք, ի տարբերություն նախորդ տեսական-վերլուծական հոդվածներից[1], շեշտը կդնենք հարցի զուտ գործնական մեթոդաբանական կողմերի ուսումնասիրության և համապատասխան առաջարկությունների մշակման վրա:

Զինված հակամարտության շրջանում քրեական արդարադատության մարմինների աշխատանքի կազմակերպումը դժվարացնում են մարտական իրադրության մի շարք բացասական գործոններ, որոնք ազդում են պատերազմական հանցագործությունների հայտնաբերման, քննության և բացահայտման վրա: Հարկ է նշել, որ պատերազմական հանցագործությունների քննության կազմակերպման վրա ազդեցություն է գործում նաև զինված հակամարտության բնույթը՝ միջազգային կամ ներքին, սակայն այդ մասին մենք արդեն խոսել ենք[2], ուստի այստեղ այդ հարցն այլևս չենք արծարծի:

---

[1] Տես *Հ. Մ. Գրիգորյան*, Միջազգային իրավաբանական պրակտիկայում զինված հակամարտությունների մեկնաբանումը և դրանց համակարգման նկատմամբ մոտեցումները: «ՀԲ», 2015, հմ. 3, *նույնի*՝ Զինված հակամարտության բնույթը և դրա նշանակությունը միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կիրառման ծավալի որոշման համար: «ՀԲ», 2015, հմ. 4:

[2] Տես *Հ. Մ. Գրիգորյան*, Նշ. աշխատություններ:

Ճանաչված ռուս քրեագետ Ս. Վ. Մալիկովի կարծիքով՝ կա զինված հակամարտության շրջանում կատարված հանցագործությունների քննության կազմակերպման և մեթոդիկայի վրա զինված հակամարտությամբ պայմանավորված բացասական գործոնների երկու տեսակի ազդեցություն. առաջինը՝ կազմակերպման ու մեթոդիկայի վրա անմիջական ներգործություն, երկրորդը՝ ներգործություն հանցագործությունների այն հատուկ բնույթի միջոցով, որը դրանցից շատերը ձեռք են բերում զինված հակամարտության շրջաններում:

Պատերազմական հանցագործությունների քննություններին խոչընդոտող ապակառուցողական գործոնները որոշելիս մենք կփորձենք հնարավորինս զերծ մնալ դրանց քաղաքականացումից՝ կապված միջազգային քննչական և արդարադատության մարմինների աշխատանքի յուրահատկությունների հետ: Թեև միջազգային-իրավական պրակտիկան և քաղաքականությունը խիստ փոխկապված երևույթներ են, սակայն նման մոտեցումը մեզ չի թվում արդասաբեր և հեռանկարային:

Մասնագիտական գրականության վերլուծությունը, ինչպես նաև Միջազգային քրեական դատարանի, Նախկին Հարավսլավիայի համար և Ռուանդայի գործով միջազգային քրեական տրիբունալների գործունեության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու մեր կարծիքով այն հիմնական բացասական գործոնները, որոնք ռազմական հակամարտության շրջաններում ձեռք բերված հատուկ բնույթի միջոցով ազդեցություն են գործում պատերազմական հանցագործությունների քննության վրա և, միևնույն ժամանակ, նպաստում պատերազմական հանցագործությունների կատարմանը.

ա) զինված հակամարտության ծագման պատճառները, հանցագործությունների կատարմանը նպաստող զինված հակամարտության էությունը և զինված հակամարտության նպատակների ճապաղ որոշարկվածությունը,

բ) այն, որ քաղաքական գործիչները չեն ցանկանում պահպանել ՄՄԻ-ի նորմերը կամ անտեսում են դրանք,

գ) հակառակորդի դիվայնացումը, մարդկային հատկանիշներից զրկումը և նրան ատելություն առաջացնող գծերի վերագրումը,

դ) զինված հակամարտության մասին ոչ բավարար օբյեկտիվությամբ տեղեկատվությունը, կողմերի փոխադարձ անվստահությունը և չապացուցված, երբեմն նաև անհեթեթ մեղադրանքները, աշխարհի առաջատար պետությունների միջև լարվածությունը,

ե) հասարակության վառ արտահայտված անհամերաշխությունը և կողմնակցությունը հակամարտության որևէ կողմին,

զ) իր հանցավոր գործողություններն ստեղծված հանգամանքներով ու ռազմական անհրաժեշտությամբ, հակառակորդի նախընտրած գործողություններով արդարացնելու և օբյեկտիվորեն անօրեն գործողությունները որպես միանգամայն իրավաչափ ներկայացնելու ձգտումը,

է) զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների հետևանքով հասարակությանն սպառնացող վտանգի աճումը,

ը) պատերազմական հանցագործությունների հետևանքների շարունակական ծանրացումը,

թ) այնպիսի հանցագործությունների կատարումը, որոնք վնաս են պատճառում զինված հակամարտության հետևանքով ծագած յուրահատուկ իրավահարաբերություններին,

ժ) հակամարտող կողմի նկատմամբ վրեժխնդրությամբ թելադրված բռնի հանցագործությունների կատարումը, բռնության անընդհատ աճումը, ռազմական գործողություններից տուժած անձանց ներքաշումը վրեժխնդրության արատավոր շրջան,

ժա) պատերազմական հանցավորության մակարդակի կախումը զինված հակամարտության տևողությունից, ինտենսիվությունից, ժամանակային, տարածքային ու տնտեսական մասշտաբներից, խոցիչ ազդեցությունից, պատերազմական հանցագործությունների մասշտաբներից, զոհվածների թվից, հակամարտության հետևանքով ստեղծված իրավիճակներից բխող ապրումների մակարդակից,

ժբ) հազարավոր մարդկանց մասնակցությամբ կատարվող պատերազմական հանցագործությունների շատ լայն մասշտաբները և հանցավորության մակարդակի մշտական աճումը,

ժգ) պատերազմական հանցավորության արձագանքումը ռազմական հաջողություններին կամ անհաջողություններին,

ժդ) ծածուկ (լատենտային) հանցավորության բարձր մակարդակը,

ժե) մեղմասությունների օգտագործմամբ արտահայտությունների գործածումը (այդպիսիք են՝ ոչնչացում, վիրաբուժական հարված, մաքրում, ձեռնարկում, նշանակետի խոցում, օպերացիա և այլն),

ժզ) այն հանգամանքը, որ հակամարտող կողմերի կոմբատանտները չունեն ՄՄԻ-ի նորմերի գծով պատշաճ պատրաստում, զինծառայողներն ունեն ցածր մակարդակի իրավագիտակցություն, հրամանատարությունը չի վարում անհրաժեշտ տեղեկատվական քաղաքականություն, բարձրագույն հրամանատարությունը չի տալիս այնպիսի հրամաններ, որոնցով պահանջվեն ՄՄԻ-ի նորմերի կատարումն ու պահպանումը, նշված հրամանների չկատարման դեպքում կոմբատանտների նկատմամբ չեն կիրառվում արդյունավետ պատժամիջոցներ, կան ազգային ՔՕ-ի նորմերից անտեղյակություն և ՄՄԻ-ի նորմերի պահանջները խախտելու համար անպատժելիության մեջ համոզվածություն,

ժէ) սոցիալ-հոգեբանական և անձնային բնույթի պատճառները, որոնք արտահայտվում են մարդու՝ որպես աստիճանակարգային համակարգի տարրի վրա խմբի ազդեցության ձևով, և բարոյական ինքնամեկուսացումը (որպես կանոն, կոմբատանտները հակված են խմբային կոնֆորմիզմի (հարմարվողականության) և հեղինակություններին ենթարկման, ինչը արտահայտվում է ապաանհատականացման, անկախության կորստյան, իր զինվորական ստորաբաժանման կոլեկտիվ պատասխանատվության մեջ անհատական պատասխանատվության տարրալուծման ձևով),

ժը) զգալի թվով հանցագործությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են այն բանի հետ, որ հակամարտող կողմերն ունեն զենք, ինչպես նաև պատերազմ վարելու ժամանակակից մեթոդներն ու միջոցները, որոնք հնարավորություն են տալիս սպանելու հեռակառավարման միջոցով (բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ մարդը դժվարանում է մոտ տարածությունից սպանել իր նմանին, ինչի համար անհրաժեշտ է հատուկ պատրաստում),

ժթ) հանցագործությունների կատարումը ալկոհոլի, թմրանյութերի ազդեցությամբ կամ այն, որ կոմբատանտներն օգտագործում են տարբեր քիմիական-դեղաբանական պատրաստուկներ (օրինակ՝ դեքստրաամֆետամին),

ի) ոչ բավարար քարոզչական գործունեությունը և հասարակության, պետական մարմինների ու պաշտոնատար անձանց իրազեկումը՝ նպատակաուղղված ՄՔԴ գործունեության ու մանդատի, Հռոմի ստատուտի համաձայն՝ տուժածների իրավունքների լուսաբանմանը, ներառյալ՝ վնասի հատուցման համար հայց ներկայացնելու և այդ գործերով դատաքննություններին մասնակցելու նրանց իրավունքը, զոհերի եզրահանումը (մարգինալացում) և պիտակումը:

Ըստ էության, զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունները քննելու համար վերը նշված բացասական գործոնների հետևանքների վերացման կամ նվազարկման նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ՄՄԻ-ի նորմերի խախտումների կանխման գործում տեղեկատվական քաղաքականության ու ռազմավարության արդյունավետության մեծացման և ՁԼՄ-ների միջոցով զանգվածային լուսաբանման ուղղությամբ:

Պատերազմական հանցագործությունների քննության կազմակերպման և մեթոդիկայի վրա անմիջականորեն ներգործող օբյեկտիվ բնույթի հիմնական բացասական գործոններ պետք է համարել.

ա) օպերատիվ իրադրության արագ փոփոխումը,

բ) զորամասերի և ստորաբաժանումների հաճախակի վերադիրքավորումը,

գ) մարտական գործողությունների հետևանքով վկաների, տուժողների, կասկածյալների, մեղադրյալների մահը, վիրավորումը և գերեվարումը,

դ) դեպքի վայրում իրադրության փոփոխությունը ռմբակոծման, հրետանային կամ ականանետային կրակակոծության, հակառակորդի կողմից տարածքի ժամանակավոր գրավման հետևանքով,

ե) դեպքի վայրի ականապատումը, դիպուկահարական կրակակոծումները, հաղորդակցման ուղիներում կազմակերպված դարանները և այլն,

զ) պատերազմական հանցագործությունները ազգային մակարդակով քննելու համար քաղաքական ներգործությունից անկախ, իրական, արդյունավետ մեխանիզմ չլինելը,

է) զինված հակամարտության կողմերին հպատակ անձանց պատասխանատվության ենթարկելը,

ը) պատերազմական հանցագործությունների քննության քաղաքականացումը և այն, որ քննությունը վերաբերում է միևնույն ժամանակ և՛ իրավական, և՛

քաղաքական ոլորտներին, շոշափում է ինչպես ազգային ինքնիշխանության, այնպես էլ միջազգային պատասխանատվության շահերը,

թ) ՄՔԴ-ի և քրեական հետապնդում ու արդարադատություն իրականացնող ազգային մարմինների հետաքննությանը քրեական գործերի քննչական ենթակայության և ընդդատության անորոշությունը (միևնույն գործերը կարող են հետաքննվել ինչպես ներպետական, այնպես էլ ՄՔԴ մակարդակով, ինչը կարող է առաջացնել փաստերի տարաբաշխվածություն՝ դրանով իսկ ՄՔԴ-ին դրդելով իր ձեռքում կենտրոնացնելու ամբողջ տեղեկատվությունը և ըստ այդմ հաստատելու ապացույցների նկատմամբ «մենաշնորհ»),

ժ) քանի որ չկա համապատասխան փոխակերպված (իմպլեմենտացիոն) օրենսդրություն* և ազգային օրենսդրությունների սահմանադրական, քրեական, դատավարական և այլ նորմեր ՄՔԴ Հռոմի ստատուտի հետ անհամատեղելի են (օրինակ՝ էքստրադիցիան և մեղադրյալ կամ կասկածյալ քաղաքացիների հանձնման արգելվածություն, պաշտոնատար անձանց անձեռնմխելիություն, ՄՔԴ իրավասությանը ենթակա բոլոր արարքների չորոշարկվածություն, ազգային, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում փոխլրացման և *«ne bis in idem»* սկզբունքների կիրառման մեխանիզմների չկարգավորվածություն, ներման ներպետական մեխանիզմի յուրահատկություն), ուստի քրեական արդարադատության ազգային մարմինները չեն կարող արդյունավետ կերպով օգտագործել իրենց ներուժն այն պարտավորությունները կատարելու համար, որոնք նախատեսված են ՄՔԴ իրավասությանը ենթակա պատերազմական հանցագործությունների քննության և դրանց համար անձանց քրեական հետապնդման վերաբերյալ ՄՔԴ Ստատուտի 17-րդ հոդվածով,

ժա) չկան ՄՔԴ և քրեական պատերազմական հանցագործությունների քննություն վարող արդարադատության ազգային մարմինների միջև փոխգործության մեխանիզմներ այն դեպքերում, երբ առաջանում է հաղթող կողմի կամ հակառակորդի տարածքում գտնվող ապացույցներից օգտվելու խնդիր, և անհրաժեշտ է լուծել մի շարք «օպերատիվ-տեխնիկական հարցեր», որպեսզի քրեական արդարադատության մարմիններին տրվի քննություն վարելու հնարավորություն (անհրաժեշտ փաստաթղթերից և արխիվներից օգտվելու, վկաներին հարցաքննելու, դեպքի վայրերը զննելու, զանգվածային թաղումների վայրերի էքսգումացիայի իրավունք և այլն). նման «օպերատիվ-տեխնիկական հարցերի» լուծման մեխանիզմները առավելապես քաղաքական են կամ լավագույն դեպքում ոչ լիովին իրավական,

ժբ) բյուջետային դժվարությունները, որոնք պայմանավորված են հսկայական ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտությամբ, նյութատեխնիկական ծախսերով, այն մարմինների գործունեության բարձր արժեքով, որոնք ապահովում են

* Այն օրենսդրական ակտերի ամբողջությունը, որոնք ներպետական մակարդակով արտացոլում են տվյալ պետության ընդունած միջազգային պարտավորությունները՝ միջազգային իրավունքի նորմերը կոնկրետ եղանակներով փոխակերպելով ազգային իրավական համակարգի:

պատերազմական հանցագործությունների քննությունը և ապացույցների հավաքումը առանց պատերազմական հանցագործությունների բոլոր համապատասխան տարրերի համար էական ապացույցներից օգտվելու հնարավորության,

ժգ) հակամարտող կողմերի հրաժարումը արդարադատության մարմինների իրավական պահանջներին և մի շարք միջազգային-իրավական պահանջներին ու դրույթներին ենթարկվելուց,

ժդ) անբավարար դիվանագիտական սատարումը և ՄՔԴ-ի հետ համագործակցության վերաբերյալ պետության միջազգային պարտավորությունների կատարման ու պատերազմական հանցագործությունների քննությանը նրա աջակցության ապահովման նպատակով տվյալ պետության վրա միջազգային հանրության քաղաքական ճնշման ռեալ մեխանիզմներ չլինելը,

ժե) պատերազմական հանցագործությունների քննության հաջողությունների կախումը քաղաքական պայմաններից, պետությունների համագործակցությունից, պետությունները ղեկավարող և պետական քաղաքականությունն ուղղորդող ու վարող մարդկանց քաղաքական շահերից, «հաղթողների բարեհաճությունից» (հակամարտող կողմերը միշտ էլ ուզում են համոզված լինել, որ ՄՔԴ-ն կամ քրեական արդարադատության մարմինները կքննեն միայն այն պատերազմական հանցագործությունները, որոնք կատարել է հակառակորդը, և երբեմն ակնհայտորեն հասկացնում են, որ հակառակ դեպքում չեն համագործակցի),

ժզ) բարձրաստիճան օտարերկրյա գործիչների և դիվանագետների ցուցմունքների ապահովման դժվարությունները,

ժէ) այն հանգամանքը, որ չկան վկաների պաշտպանության, նրանցից ցուցմունքներ վերցնելու համար ՄՔԴ անվտանգ տեղափոխելու մեխանիզմներ,

ժը) պատերազմական հանցագործությունների վերաբերյալ քրեական նորմերի բարձր մակարդակի բլանկետայնությունը, դրանց հետաքննության մեթոդիկաների զանազանությունը, քննչական գործողությունների, մարտավարական համակցությունների և մարտավարական օպերացիաների լայնամասշտաբությունը,

ժթ) ժամանակի սահմանափակության պայմաններում զինված հակամարտության տարբեր շրջաններում կատարված պատերազմական հանցագործությունների միաժամանակյա և առանձին դեպքերով քննություն կազմակերպելու անհնարինությունը:

Մեր կարծիքով՝ զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննության համար վերը թվարկված բացասական գործոնների հետևանքները նվազարկելու կամ վերացնելու նպատակով անհրաժեշտ է.

ա) վերացնել պատերազմական հանցագործությունների քրեականացման ոլորտում ազգային օրենսդրությունում եղած բացերը,

բ) ձեռնարկել ազգային իրավական համակարգում ՄՔԴ Հռոմի ստատուտի դրույթների ներառմանն ուղղված համալիր միջոցառումներ, առաջին հերթին՝ սահմանադրական, նյութական և դատավարական իրավունքի ոլորտում,

գ) վերացնել քրեական արդարադատության ազգային մարմինների և ՄՔԴ համագործակցության հարցերի իրավական կարգավորման ոլորտում եղած բա-

ցերը՝ ՄՔԴ-ի հետ համագործակցության հատուկ կառավարական հաստատության ստեղծմամբ կամ ազգային համակարգողների նշանակմամբ,

դ) ընդունել ՄՔԴ-ի հետ համագործակցության մասին առանձին հատուկ օրենք, ընդսմին ըստ այդ օրենքի՝ ոչ մի տեղական օրենք չպետք է խոչընդոտի տվյալ համագործակցությանը: ՄՔԴ-ի հետ համագործակցությունը չպետք է դառնա բանակցությունների առարկա, իսկ այդպիսի համագործակցության պայմանները չեն կարող որոշվել ազգային կառավարությունների ցանկություններով կամ հաղթողների կամքով,

ե) քրեադատավարական օրենսդրության մեջ կատարել փոփոխություններ՝ քրեական գործերի հետաքննության առաջնահերթության որոշման կարգի սահմանմամբ, քննչական ենթակայության և ընդդատության (թե որ գործերն է հետաքննելու ՄՔԴ-ն, իսկ որոնք՝ քրեական արդարադատության ազգային մարմինները), դատավարական հարկադրանքի միջոցների ընտրության և կիրառման, ՄՔԴ-ին տեղեկույթի ու ապացույցների փոխանցման և վկաների տեղափոխման, կասկածյալների հանձնման, արխիվային և այլ փաստաթղթերի ծանոթանալու կամ օգտագործելու թույլտվության ստացման, ՄՔԴ-ի կողմից իր իրավասությունների իրականացման ու ՄՔԴ-ի հետ համագործակցության ամրապնդման արդյունավետ ապահովման հետ կապված այլ հարցերի լուծման կարգի որոշմամբ, ինչպես նաև սահմանել այնպիսի մեխանիզմ, որը ՄՔԴ-ին հնարավորություն տա միջազգային քննչական մարմինների կողմից անձին մեղադրանք առաջադրելուց հետո գործը հանձնելու ազգային մարմիններին՝ հետագա քննություն կատարելու համար,

զ) վավերացնել ՄՔԴ արտոնությունների և անձեռնմխելիության մասին Պայմանագիրը,

է) ստեղծել «համատեղ օպերատիվ-քննչական խմբերի» հաստատություն, այսինքն՝ համապատասխան միջազգային պայմանագրերի հիման վրա պատերազմական հանցագործությունների քննության համար ստեղծել ՄՔԴ աշխատողների և քրեական արդարադատության ազգային մարմինների աշխատողների համատեղ օպերատիվ-քննչական խմբեր՝ ռոմանո-գերմանական և անգլո-սաքսոնական իրավունքի համակարգերի միջև հաշվեկշռի պահպանմամբ, և այլն:

Պատերազմական հանցագործությունների քննության կազմակերպման վրա ազդող սուբյեկտիվ բնույթի հիմնական բացասական գործոնների թվին են դասվում՝

ա) պատերազմական հանցագործությունների քննության քաղաքականացումը,

բ) հակամարտության կողմերից միայն մեկի նկատմամբ կատարված պատերազմական հանցագործությունների քննությունը,

գ) հակառակ կողմի գործողությունների հետ անհիրավաչափ համեմատությունները և պատերազմական հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով որպես «հակառակ կողմի նկատմամբ հակահիրավական գործողություններ կատարելու իրավունքի հիմնավորում» այսպես կոչված «թափված արյան» գործոնի կիրառումը, թյուր հասկացված «արդարության զգացումը», որի ազդեցությամբ մարտական գործողություններին անմի-

ջականորեն չմասնակցած դատախազաքննչական կորպուսի աշխատողները անհիմն կերպով մեղադրվում են «վախկոտության» մեջ,

դ) պատերազմական հանցագործությունների՝ ազգային մակարդակով քննության և հակառակ կողմի անձանց նկատմամբ կատարված պատերազմական հանցագործությունների համար տվյալ երկրում տեղի ունեցող դատավարության պատճառով բնակչության ցասումի հնարավոր բռնկումը, համընդհանուր հիստերիան և քրեական արդարադատության մարմինների նկատմամբ թշնամանքը, ինչը կհանգեցնի ՄՔԴ և քրեական արդարադատության ազգային մարմինների նշանակության նվազմանը, գործունեության խաթարմանը, աշխատանքի արդյունքների վարկաբեկմանը, փաստերի խեղաթյուրմանը, քննության՝ որպես չարիքի մարմնավորմանը, ամբաստանյալների՝ հասարակայնությանը որպես անարդարացի կերպով հետապնդումների ենթարկված հերոսների ներկայացմանը,

ե) ՄՔԴ հեղինակազրկվածությունը, դատավարության ոչ բավարար թափանցիկությունը և ՄՔԴ դատախազի քննչական քաղաքականության որոշ կողմերի ոչ միանշանակությունը, մասնավորապես՝ հետաքննության անցկացման համար գործերի ընտրության չափանիշների որոշման հարցում,

զ) հակառակորդի կողմից պատերազմական հանցագործությունների կատարումը «բեմարկելու» փորձերը,

է) հրամանատարական կազմի հակազդեցությունը քննությանը,

ը) ձերբակալման պահին կասկածյալի, մեղադրյալի կամ նրա ծառայակիցների հնարավոր զինված դիմադրությունը,

թ) մեղադրյալների, կասկածյալների, տուժողների, վկաների և այլ անձանց մարտական և այլ հոգեկան խոցումների հնարավորությունը,

ժ) առանձին դեպքերում իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար փաստաբանների կամ պաշտպանների ներգրավման անհնարինությունը և այլն,

ժա) քրեական արդարադատության մարմինները զինված հակամարտության շրջաններում պատերազմական հանցագործությունների քննության գործնական փորձ չունեցող դատախազաքննչական աշխատողներով կամավոր-հարկադրական «ավրալային» եղանակով համալրելու կարգը,

ժբ) զինված հակամարտության շրջաններում քրեական արդարադատության մարմինների դատախազաքննչական աշխատողների գտնվելու կարճաժամկետությունը,

ժգ) քրեական արդարադատության ազգային մարմինների դատախազաքննչական կորպուսի աշխատողների հաստիքակազմի համալրված չլինելը,

ժդ) այն, որ դատախազաքննչական ապարատի մի շարք աշխատողներ չեն հասկանում հետաքննության նպատակները, խնդիրները, մարտավարությունը և ռազմավարությունը, ինչն ի վերջո կարող է հանգեցնել ժամանակի և ուժերի անիմաստ վատնման,

ժե) քննության ռազմավարության ընտրության գործում յուրաքանչյուր քննչական բրիգադի ինքնուրույնությունը, ընդհանուր ռազմավարություն, կենտրոնացված արխիվ, նյութերի մշակման արդյունավետ վերլուծական ծառայություն չլինելը,

ժզ) որոշ կարևոր վկաների (քաղաքական գործիչներ, դիվանագետներ, հետախույզներ, ներքին անվտանգության ծառայության աշխատողներ և այլն) ոչ հմուտ հարցաքննումը,

ժէ) տվյալ կարգախմբի քրեական գործերի հետաքննության դանդաղընթացության պրոբլեմի դժվարլուծելիությունը, ինչի հետևանքով դրանք կարող են գերազանցել բոլոր ողջամիտ ժամկետները, ինչպես նաև մեղադրյալներին կալանքի տակ պահելու երկարատև ժամկետները,

ժը) սահմանափակ ժամանակի պայմաններում քննվող գործերի մեծ թիվը:

Ամփոփելով մասնագիտական գրականության մեջ եղած տեղեկությունները, միջազգային ատյանների գործունեության փորձը և մեր անձնական մասնակցությունից քաղված դասերը՝ կարծում ենք, որ վերը թվարկված բացասական գործոնների արդյունավետ չեզոքացման համար անհրաժեշտ է.

ա) դատախազաքննչական ապարատի կառուցվածքում կատարել կազմակերպական փոփոխություններ՝ ստեղծելով գործունեության հիմնական ոլորտների գծով ըստ կոնկրետ ուղղությունների բաժիններ, օրինակ՝ քննության բաժին, մեղադրանքի բաժին, կառավարության անդամների դեմ հարուցված գործերի բաժին, զինվորականների դեմ հարուցված գործերի բաժին, սադրիչների և հանցակիցների դեմ հարուցված գործերի բաժին, իրեղեն ապացույցների բաժին, զոհերի, վկաների և քննությունից թաքնվող անձանց որոնման բաժին և այլն: Նպատակահարմար է նաև նախատեսել փորձագետների, վերլուծաբանների, թարգմանիչների, փաստաբանների (պաշտպանների), քրեագետների և հետախուզական աշխատանքի փորձ ունեցող անձանց համար հաստիքներ: Կարծում ենք, որ հենց այդպիսի կառուցվածքով համակարգը կարող է առաջադրված խնդիրները կատարել սահմանափակ ժամանակում և արդյունավետ կերպով,

բ) հանցագործությունների հետաքննության կազմակերպման գործում կատարել կազմակերպական փոփոխություններ, ռեսուրսների ճիշտ բաշխում՝ գործերի նշանակալիությանը համապատասխան (այդ թվում՝ ըստ հիմնական և երկրորդական պատասխանատվություն կրող անձանց պատասխանատվության հատկանիշի), առաջնահերթության կարգով նախապատվություն տալ կարևորներին, ինչը ամենևին էլ չի ենթադրում քիչ նշանակալիների անտեսում,

գ) համադասել տարբեր քրեական գործերի հետաքննությունը՝ կադրային ճգնաժամի պայմաններում կրկնորդություններից խուսափելու և տեղեկույթի արդյունավետ փոխանակում ապահովելու նպատակով,

դ) ապահովել անկողմնակալ և չեզոք հետաքննություն,

ե) կազմակերպել քննչական խմբերի հաճախելիության խիստ վերահսկողություն,

զ) սահմանել հետաքննության և ապացույցների հավաքման ընդհանուր ղեկավարում՝ ըստ հրամանատվական աստիճանակարգության՝ վերևից ներքև:

Եվ այսպես. զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունները զինված հակամարտության շրջանում քննելու ժամանակ առաջ են գալիս օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի մի շարք բացասական գործոններ, որոնք, ձևավորելով յուրահատուկ պայմաններ, անմիջական և միջ-

նորդավորված ազդեցություն են գործում այդ քննության իրավական ապահովման, կազմակերպման ու մեթոդիկայի վրա: Միևնույն ժամանակ, հնարավոր է թվում առաջարկվող միջոցառումների իրագործմամբ նվազեցնել կամ իսպառ վերացնել այդ գործոնների բացասական ազդեցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *С. В. Маликов.* Расследование преступлений в районах вооруженного конфликта. М., 2005.
2. *С. В. Маликов*. Правовые и организационные основы расследования преступлений, совершаемых военнослужащими в районах вооруженного конфликта. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. М., 2004.
3. *К. Дель Понте.* Я и военные преступники. М., 2008.
4. «Римский статут Международного уголовного суда» (http://www.un.org/ru/law/icc/rome_statute(r).pdf).
5. *Х. Даффи, Дж. Хастон.* Введение в действие Статута Международного уголовного суда: международные обязательства и проблемы национальных конституций (http://www.hrights.ru/text/b16/Chapter23.htm).

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

ФАКТОРЫ, ПРЕПЯТСТВУЮЩИЕ РАССЛЕДОВАНИЮ ВОЕННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ, СОВЕРШАЕМЫХ ПРОТИВОБОРСТВУЮЩИМИ СТОРОНАМИ ВООРУЖЕННОГО КОНФЛИКТА

Г. М. ГРИГОРЯН, полковник юстиции, кандидат юридических наук, докторант кафедры криминалистики Военного Университета МО РФ

РЕЗЮМЕ

Организации эффективной работы органов уголовной юстиции в районе вооруженного конфликта препятствует целый ряд факторов как объективного (быстрое изменение оперативной обстановки, частая передислокация воинских частей, гибель, ранение и пленение в ходе боевых действий свидетелей, потерпевших, подозреваемых и т. д.), так и субъективного характера (политизация расследования военных преступлений, расследование военных преступлений в отношении лишь одной из сторон конфликта, попытки инсценировок «совершения» военных преступлений противником, противодействие расследованию со стороны командного состава и т. д.).

Значительное негативное влияние оказывают и такие факторы, как нежелание соблюдать нормы Международного гуманитарного права со стороны политиков, взаимное недоверие сторон и оперирование набором бездоказательных обвинений в адрес друг друга, международная напряженность между ведущими странами мира, масштабность военных преступлений с участием тысяч людей и т. д.

«ԱՐԶՆԻ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՄՊԱՄԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԹՌԻՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մ. Վ. ԵՓՐԵՄՅԱՆ, կապիտան, աշխարհագրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԶՈՒ-ի օդերևութաբանական ծառայության պետ,
Ա. Լ. ՀԱԿՈԲՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի զորամասի հրամանատար

Օդերևութաբանական պայմանները օդագնացության և աէրոդինամիկայի կարևոր տարրերից են և համարվում են ավիացիոն անվտանգության ապահովման առաջնային նախապայմաններ[1]: Դրանք մեծ ազդեցություն են գործում թռիչքների կազմակերպման ու անվտանգության ապահովման, օդանավակայանի և թռիչքուղու վիճակի, ինչպես նաև ավիացիոն տեխնիկայի նախաթռիչքային պատրաստության վրա:

Ավիացիայի զարգացման ժամանակակից մակարդակը հնարավորություն է տալիս առանձին թռիչքներ կատարելու անգամ ամենաբարդ օդերևութաբանական իրադրությունում, սակայն աշխարհում բազմաթիվ են այն դեպքերը, երբ անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով թռիչքները սահմանափակվում կամ դադարեցվում են[*]: Այս ամենն է՛լ ավելի կարևոր է դառնում Հայաստանի բարդ լեռնային պայմաններում[**], հատկապես՝ ռազմական ավիացիայի՝ ցածր բարձրություններով թռիչքների դեպքում[***]:

Գլխավոր եղանակաստեղծ տարրերից մեկը ամպամածությունն է, որի հետևանքով կարող են առաջանալ մի շարք վտանգավոր օդերևութաբանական երևույթներ (ցածր ամպամածություն[****], սահմանափակ հորիզոնական տեսա-

---

[1] Տես *Օ. Գ. Богаткин*. Информационно-справочная книга авиационного метеоролога. Книга 1. СПб., 2010, с. 5:

[*] Համաձայն վիճակագրության (ICAO)՝ վերջին 25 տարվա ընթացքում տեղի ունեցած ավիավթարների 20 %-ը եղել է անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով:

[**] Համաձայն վիճակագրության (ICAO)՝ լեռնային պայմաններում թռիչքների անվտանգության ապահովման մակարդակը 20-25 %-ով ցածր է, քան հարթավայրերում:

[***] Ցածր համարվում են այն թռիչքները, որոնք կատարվում են գետնի մակերևույթից 100-1000 մ բարձրություններում:

[****] Ցածր ամպամածությունը այն ամպամածությունն է, որի դեպքում ամպերի ստորին սահմանները գտնվում են գետնի մակերևույթից 200–300 մ բարձրությունների վրա:

նելիություն*, կայծակ-ամպրոպ, հորդառատ տեղումներ, տարափներ, մառախուղ, ուժեղ քամիներ և այլն), որոնք ավիացիայի համար խիստ վտանգավոր են:

Ամպը (ամպամածությունը)** մթնոլորտում առաջանում է որոշակի բարձրության վրա՝ օդի վերընթաց հոսանքների և խոնավության խտացման (կոնդենսացման) հետևանքով:

Ըստ բարձրության (հարկերի) և հիմնական տեսակների առանձնացվում են[2].

1. *վերին հարկի ամպեր* (ստորին սահմանները՝ 6000 մ և ավելի***): Այս հարկում առանձնացվում են փետրավոր (Ci), փետրաշերտավոր (Cs) և փետրակույտավոր (Cc) ամպերը, որոնցում թռիչքը վտանգավոր չէ, քանի որ միայն առանձին դեպքերում կարող է դիտվել թռչող տեխնիկայի միջին կամ թույլ ինտենսիվությամբ սառցակալում, շատ հազվադեպ՝ էլեկտրականացում և թափահարում,

2. *միջին հարկի ամպեր* (ստորին սահմանները՝ 2000–6000 մ): Այստեղ առանձնացվում են բարձր շերտավոր (As) և բարձր կույտավոր (Ac) ամպերը, որոնցում թռիչքը կարող է ուղեկցվել սառցակալման, էլեկտրականացման, թույլ թափահարման երևույթներով: Տվյալ հարկում ձևավորված ամպերից ձմռանը կարող է տեղալ թույլ ձյուն, ինչի հետևանքով վատանում է հորիզոնական տեսանելիությունը, հաճախ թռիչքուղու վրա գոյանում է մերկասառույց, ինչը ևս վտանգավոր է թռիչքների համար, և այլն,

3. *ստորին հարկի ամպեր* (ստորին սահմանները՝ մինչև 2000 մ): Այս հարկում առանձնացվում են շերտաանձրևային (Ns), շերտակույտավոր (Sc), շերտավոր (St) և քայքայված անձրևային (Frnb) ամպերը, որոնց պատճառով առաջանում են ավիացիայի համար այնպիսի վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են, օրինակ, հորիզոնական և ուղղաձիգ տեսանելիության խիստ վատթարացումը (մինչև անգամ դրանց վերացումը), թռչող տեխնիկայի տարբեր ինտենսիվությամբ սառցակալումը, էլեկտրականացումը, թափահարումը: Տեղումների ժամանակ կարող է դիտվել հորիզոնական տեսանելիության վատթարացում, ցածր ամպամածություն, մերկասառույց և այլն, որոնք խիստ դժվարացնում կամ գրեթե անհնար են դարձնում անվտանգ թռիչքը և վայրէջքը,

4. *ուղղաձիգ զարգացման ամպեր*: Այստեղ առանձնացվում են կույտավոր (Cu), հզոր կույտավոր (Cg) և կույտաանձրևային (Cb) ամպերը, որոնց ստորին սահմանի բարձրությունը խիստ տարբեր է և կարող է տատանվել 200-300 մ-ից մինչև 3-4 կմ բարձրությունների միջև, իսկ գագաթների բարձրությունը կարող է

---

* Սահմանափակ հորիզոնական տեսանելիությունը համապատասխանում է հորիզոնի մինչև 2–2,5 կմ հեռավորությունների:

** Ամպը կազմված է ջրային գոլորշիներից, կաթիլներից, սառցաբյուրեղիկներից կամ դրանց խառնուրդից: Ամպամածությունը (ամպերի քանակը) չափվում է բալերով (0–10 բալ, օգտագործվում է նաև օկտանտ համակարգը (0–8 օկտ.)) կամ տոկոսներով (ամպամածության 1 բալին համապատասխանում է երկնակամարի 10 %-ի ծածկվածությունը): Ըստ աստիճանի տարբերում են լրիվ ամպամածություն (8–10 բալ), կիսաամպամածություն (3–7 բալ) և պարզ (0–2 բալ) եղանակ:

[2] Տես նույն տեղում, էջ 151–156:

*** Ամպամածության ստորին սահմանը երկրի մակերևույթից հաշվված այն բարձրությունն է, որից սկսվում է ամպամածության շերտը:

հասնել 6-8 կմ, կույտաանձրևային ամպերինը՝ հաճախ մինչև 10-11 կմ և ավելի: Հատկապես վտանգավոր են հզոր կույտավոր և կույտաանձրևային ամպերը՝ իրենց հզոր վերընթաց ու վարընթաց տուրբուլենտ հոսքերով (միջին արագությունը 15–25 մ/վրկ), զարգացած կայծակ–ամպրոպային օջախներով, թռչող տեխնիկայի ուժեղ սառցակալման, էլեկտրականացման և թափահարման երևույթներով*:

Վերը շարադրված նկատառումները կարևոր են նաև բոլոր ուղղություններից բաց օդային մուտքով «Արզնի» օդանավակայանում թռիչքների անվտանգության ապահովման համար: «Արզնի» օդանավակայանը սահմանափակված է առանձին լեռնազանգվածներով և Հրազդան գետի կիրճով: Նման ֆիզիկաաշխարհագրական պայմաններն իրենց ուրույն ազդեցությունն են գործում այս շրջանի եղանակակլիմայական և միկրոկլիմայական առանձնահատկությունների ձևավորման, բարիկական դաշտերի և մթնոլորտային ճակատների շարժման, ներզանգվածային երևույթների առաջացման ու զարգացման վրա, ինչն էլ իր հերթին ազդեցություն է ունենում ավիացիայի աշխատանքների կազմակերպման և թռիչքների անվտանգության ապահովման վրա:

Սույն ուսումնասիրության համար օգտագործվել են օդանավակայանի ավիաօդերևութաբանական կայանում կատարված ամպամածության՝ վերջին 6 տարվա (2009–2014 թթ.) դիտարկումների տվյալների շարքերը**:

«Արզնի» օդանավակայանում ամպամածության չափի և բարձրության դիտումները 2010 թվականից կատարվում են արդիական ավտոմատ «ամպաչափ» կոչվող սարքավորման միջոցով *(CT25KAM Lidar Ceilometer, VAISALA),* որը հնարավորություն է տալիս ճշգրիտ կերպով որոշելու ամպերի քանակը, դրանց բարձրությունը և միայն կույտաանձրևային ամպերի տեսակը: Մինչ այդ դիտումները կատարվում էին աչքով, իսկ մինչև 2000 մ ամպերի բարձրությունները չափվում էին ԻՎՕ–1Մ (ИВО – 1М) գործիքով:

Վերլուծելով «Արզնի» օդանավակայանի շրջանի ամպամածության ընդհանուր դաշտը՝ հանգել ենք հետևյալ եզրակացության. դրան բնորոշ են երկնակամարի կիսաամպամածությամբ աչքի ընկնող եղանակները: Այսպես. տարեկան կտրվածքով դիտվում է միջինը 5 բալ ընդհանուր ամպամածություն և մոտ 4 բալ՝ ստորին հարկի ամպամածություն (նկ. 1): Ամպամածությունը մեծ է հատկապես տարվա ցուրտ ժամանակահատվածում (նոյեմբեր–մարտ) և գարնանը (ընդհանուր ամպամածությունը միջինը 6–7 բալ, իսկ ստորին հարկի ամպամածությունը միջինը՝ 4 բալ):

Ամռանը և վաղ աշնանը դիտվում է հիմնականում պարզ եղանակ, թեև այդ ժամանակ մեծանում է ուղղաձիգ զարգացման ամպերի քանակը՝ ի հաշիվ կեսօրից հետո դիտվող ներզանգվածային երևույթների ակտիվացման:

Տարվա ընթացքում գերակշռում է պարզ եղանակը՝ մինչև 136 օր ստորին

* Համաձայն ղեկավար փաստաթղթերի (ICAO)՝ թռիչքը կույտաանձրևային ամպերում և դրա զարգացման ակտիվ գոտում (10–15 կմ շառավղով) արգելվում է:

** Համաձայն միջազգային ավիացիոն փաստաթղթերի (ICAO)՝ օդանավակայանի շրջանի ավիացիոն օդերևութաբանական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ են առնվազն 5 տարվա դիտարկումների տվյալներ:

հարկի և 86 օր մինչև 2 բալ ընդհանուր ամպամածությամբ (աղ. 1): Ընդամին պարզ, միայն ստորին հարկի ամպամածությամբ օրերի առավելագույն թիվը դիտվում է հուլիս–սեպտեմբեր ամիսներին (16–19 օր), նվազագույնը՝ ապրիլ–մայիսին (6 օր), իսկ պարզ օրերով մինչև 2 բալ ընդհանուր ամպամածությամբ օրերի առավելագույն թիվը դիտվում է հուլիս–սեպտեմբեր ամիսներին (11–14 օր), նվազագույնը՝ հունվար–մայիս ամիսներին (3–5 օր):



Նկ. 1. Ընդհանուր և ստորին հարկի ամպամածության բազմամյա ամսական և տարեկան ընթացքը՝ բալերով

Աղյուսակ 1

ՊԱՐԶ (Պ) (0–2 ԲԱԼ) ԵՎ ԱՄՊԱՄԱԾ (Ա) (8–10 ԲԱԼ) ՕՐԵՐԻ ԹԻՎՆ ԸՍՏ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՍՏՈՐԻՆ ՀԱՐԿԻ ԱՄՊԱՄԱԾՈՒԹՅԱՆ

Օրվա բնութագիրը՝ ըստ ամպամածության		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
Պ	ընդհանուր	4	4	5	3	3	9	11	12	14	9	6	6	86
	ստորին	9	8	9	6	6	12	16	17	19	14	12	8	136
Ա	ընդհանուր	13	11	12	11	10	7	3	3	3	6	7	12	98
	ստորին	9	6	6	5	4	2	0	0	1	2	3	7	45

Նման տարեկան ընթացքը պայմանավորված է տաք ժամանակահատվածում (ապրիլ–հոկտեմբեր) հաստատվող արևադարձային օդային զանգվածներով և օդի բարձր ջերմաստիճաններով, իսկ ցուրտ ժամանակահատվածում՝ բարեխառն և արկտիկական օդային զանգվածներով, ինչպես նաև ցիկլոնների և մթնոլորտային ճակատների ներխուժումներով:

Օդանավակայանի շրջանի ամպամածությունը տարվա ընթացքում ունի բավական բարդ դինամիկա (աղ. 2): Պարզ երկնակամարով օրերի կրկնելիությունը մեծ է հունիս–հոկտեմբեր ամիսներին (միջինը՝ 64 օր), ինչը պայմանավորված է օդի բարձր ջերմաստիճաններով և հարաբերական խոնավության համեմատաբար փոքր արժեքներով: Կիսաամպամած օրերի թվի կրկնելիությունը համեմատաբար մեծ է ապրիլ–հուլիս ամիսներին (միջինը՝ 17 օր)՝ պայմանավորված այդ ընթացքում տարբեր օդային զանգվածների ներխուժումների հաճախականության մեծացմամբ: Ամպամած օրերի կրկնելիությամբ աչքի են ընկնում հատկապես

նոյեմբեր–մայիս ամիսները (միջինը 49 օր), ինչը պայմանավորված է օդի համեմատաբար ցածր ջերմաստիճաններով և խոնավության մեծ արժեքներով, ինչպես նաև ցիկլոնային և ճակատային երևույթների հաճախականության աճմամբ:

Աղյուսակ 2

ՊԱՐԶ (0–2 ԲԱԼ), ԿԻՍԱԱՄՊԱՄԱԾ (3–7 ԲԱԼ) ԵՎ ԱՄՊԱՄԱԾ (8–10 ԲԱԼ) ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿՐԿՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ (%) ԸՍՏ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՍՏՈՐԻՆ ՀԱՐԿԻ ԱՄՊԱՄԱԾՈՒԹՅԱՆ

ամպամածությունը, բալ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
ընդհանուր ամպամածություն												
պարզ (0–2)	30	26	33	25	28	47	56	70	68	47	40	32
կիսաամպամած (3–7)	10	12	11	13	20	21	17	12	13	13	14	10
ամպամած (8–10)	60	62	56	62	52	32	27	18	19	40	46	58
ստորին հարկի ամպամածություն												
պարզ (0–2)	46	50	55	44	48	60	66	81	79	67	60	53
կիսաամպամած (3–7)	8	10	13	15	17	18	19	10	9	10	10	11
ամպամած (8–10)	46	40	32	41	35	22	15	9	12	23	30	36

«Արզնի» օդանավակայանի շրջանում ընդհանուր և ստորին հարկի ամպամածությամբ օրերի բազմամյա ամսական կրկնելիությունն ըստ դիտաժամերի ևս ունի բարդ դինամիկա: Այստեղ տարեկան կտրվածքով ընդհանուր առմամբ գիշերային և առավոտյան ժամերին դիտվում է ամպամածության համեմատաբար մեծ կրկնելիություն, որը կեսօրին և հետկեսօրյա ժամերին (մինչև 18^{00}-ն) աստիճանաբար նվազում է: Թեև տարվա տաք հատվածում այդ ժամերին մեծ են ինչպես ուղղաձիգ զարգացման ամպերի կրկնելիությունը, այնպես էլ և ավիացիայի համար դրանցով պայմանավորված վտանգավոր օդերևութաբանական երևույթների առաջացման հավանականությունը:

Հիմնական տեսակների ամպերի բազմամյա ուսումնասիրությամբ պարզվել է, որ միջին տարեկան կտրվածքով ամենամեծ կրկնելիությունն ունեն շերտակույտավոր (17 %), կույտավոր (14 %), շերտավոր և հզոր կույտավոր ամպերը (11 %), ապա՝ բարձր կույտավոր և փետրավոր ամպերը (9 %): Կրկնելիության համեմատաբար մեծ արժեքներ ունեն նաև բարձր շերտավոր, կույտաանձրևային և շերտաանձրևային ամպերը (7 %): Այլ տեսակների ամպերի տարեկան կրկնելիությունը չի գերազանցում 4 %-ը, իսկ համատարափ տեղումների ժամանակ դիտվող քայքայված անձրևային ամպերի կրկնելիությունը կազմում է ընդամենը 1 % (նկ. 2):

Թռիչքների անվտանգության ապահովման համար կարևոր է նաև ամպամածության ստորին սահմանի բարձրությունը, որն ուղիղ համեմատական է հորիզոնական տեսանելիությանը*: Դրանով է պայմանավորված մթնոլորտում թռիչքի

* Որքան բարձր է ամպամածության ստորին սահմանը, այնքան մեծ է հորիզոնական տեսանելիությունը, և հակառակը:

համար ազատ տարածության սահմանափակությունը, որի դերը հատկապես մեծ է լեռնային պայմաններում:



Նկ. 2. Ամպերի հիմնական տեսակների
բազմամյա միջին տարեկան կրկնելիությունը (%)

ՈՒսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Արզնի» օդանավակայանի շրջանի ամպամածության ստորին սահմանի բարձրությունների փոփոխման դինամիկան բավական բարդ բնույթի է և ունի արտահայտված տարեկան, սեզոնային ու օրական ընթացք: Այսպես. տարվա ցուրտ ժամանակահատվածում և ապրիլ–մայիս ամիսներին ստորին հարկի ամպամածությունը կազմում է միջինը 4 բալ՝ 450–750 մ միջին բարձրությամբ, իսկ հունիս–հոկտեմբեր ամիսներին՝ 2–4 բալ՝ 800–1000 մ բարձրությամբ: Առավելագույն բարձրությունը դիտվում է օգոստոսին (1350 մ): Տարվա ընթացքում ստորին հարկի ամպամածությունը կազմում է միջինը 3–4 բալ՝ ստորին սահմանի 800 մ բարձրությամբ (նկ. 3):



Նկ. 3. Ստորին հարկի ամպամածության միջին բարձրությունների
բազմամյա ամսական ընթացքը՝ մետրերով

Տարվա ցուրտ ժամանակահատվածի շուրջ 30 % դեպքերում օդանավակայանի շրջանում դիտվում է ցածր ամպամածություն (մինչև 300 մ) և 35 % դեպքերում՝ սահմանափակ (մինչև 2000-2500 մ) հորիզոնական տեսանելիություն, որոնք թռիչքների համար հաճախ ստեղծում են բարդ օդերևութաբանական պայմաններ կամ ոչ թռիչքային իրադրություններ: Տաք ժամանակահատվածում նշված պայմաններով եղանակների կրկնելիությունը բավական փոքր է (համապատասխանաբար՝ 6 % և 10 %), իսկ հուլիս–սեպտեմբեր ամիսներին նման պայմաններ գրեթե չեն դիտվում:

Տարվա ընթացքում ամպերի ստորին սահմանի բարձրությունները սովորաբար ավելի ցածր են գիշերային և առավոտյան ժամերին (մինչև 9^{00}-ն): Կեսօրից (13^{00}–14^{00}) մինչև երեկո (18^{00}–19^{00}) այն համեմատաբար ավելի բարձր է, ինչը պայմանավորված է օդի բարձր ջերմային ֆոնով, վերընթաց հոսանքների զարգացմամբ և խտացման մակարդակի աճմամբ:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ թռիչքները առավել անվտանգ ու հուսալի է կազմակերպել. առաջին՝ տարվա տաք հատվածում օրվա առաջին կեսին, քանի որ կեսօրից հետո դիտվում է օդի բարձր ջերմային ֆոն, մեծ է կույտաանձրևային ամպերի առաջացման հավանականությունը, և երկրորդ՝ տարվա ցուրտ հատվածում անտիցիկլոնների ժամանակ, երբ հաճախ ամբողջ օրվա ընթացքում և նույնիսկ մի քանի օր շարունակ կարող է դիտվել պարզ կամ կիսամպամած, առանց տեղումների եղանակ, որի դեպքում թռիչքների համար ապահովվում են պարզ օդերևութաբանական պայմաններ (այս դեպքում միայն 1000-1500 մ-ից բարձր մթնոլորտի շերտերում կարող է դիտվել թռչող տեխնիկայի սառցակալում):

ВОЕННАЯ МЕТЕОРОЛОГИЯ

ОЦЕНКА ОБЛАЧНОСТИ В РАЙОНЕ АЭРОДРОМА «АРЗНИ» В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ ПОЛЕТОВ

М. В. ЕПРЕМЯН, капитан, кандидат географических наук, начальник метеорологической службы ВС РА, А. Л. АКОПЯН, подполковник, командир войсковой части ВС РА

РЕЗЮМЕ

На основе ряда многолетних фактических данных (за 2009–2014 гг.), полученных на авиационной метеорологической станции аэродрома «Арзни», изучено и оценено влияние поля облачности на организацию и обеспечение безопасности полетов в районе этого аэродрома.

Исследования показали, что облачность, ее уровень, высота и виды имеют довольно сложный характер и выраженную годовую, сезонную и суточную динамику. В среднем за год относительно большая повторяемость наблюдается для слоисто-кучевых (17 %), слоистых (11 %), кучевых (14 %),

мощно-кучевых (11 %), высококучевых и перистых (9 %), кучево-дождевых и слоисто-дождевых (7 %) облаков, причем последние два вида представляют наибольшую опасность для полетов.

По данным исследования для обеспечения наибольшей безопасности полетов в районе аэродрома «Арзни» их следует осуществлять в первой половине дня в теплый период года (апрель–октябрь), потому что после полудня часто развиваются конвективные, в том числе и кучево-дождевые облака. В холодный же период года ясная или полуоблачная погода наблюдается в условиях антициклона.

MILITARY METEOROLOGY

THE ASSESSMENT OF CLOUDINESS IN THE "ARZNI" AIRDROME REGION IN THE CONTEXT OF ENSURING FLIGHT SAFETY

M. V. YEPREMYAN, Captain, PhD in Geography, Head, Meteorological Service, RA Armed Forces, A. L. HAKOPYAN, Lieutenant Colonel, Commander, Military Unit, RA Armed Forces

SUMMARY

The impact of the field of cloudiness on the flight safety organization and ensurance in the "Arzni" airdrome region has been studied and assessed based upon a number of long-term factual data (for 2009–2014) acquired at aerometeorological station of the airdrome.

The studies showed that cloudiness, its level, height and types have a relatively complicated nature and a marked annual, seasonal and daily dynamics. On average during the year comparatively great frequency is observed for stratocumuli (17 %), strati (11 %), cumuli (14 %), cumuli congesti (11 %), altocumuli and cirri (9 %), cumulonimbuses and nimbostrati (7 %), though the last two types are the most dangerous for flights.

According to the research data, to ensure maximum flight safety in the "Arzni" airdrome region it is necessary to fly in the first half of the day in the warm season (April – October), because convection clouds, including cumulonimbuses, often form and grow in the afternoon. And clear or partly cloudy weather is observed in an anticyclone in the cold period of the year.

Для эффективной нейтрализации подобных негативных факторов представляется целесообразным: ратификация Римского статута МУС, инкорпорация его положений в национальное законодательство, внесение организационных корректив в структуру прокурорско-следственного аппарата путем создания отделов по основным сферам деятельности и включением в их штаты опытных работников; правильное распределение ресурсов с учетом первоочередности ведения дел и определением степени ответственности; применение исключительных мер путем установления особых правовых режимов и т. д.

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

THE FACTORS IMPEDING THE INVESTIGATION OF WAR CRIMES COMMITTED BY THE WARRING PARTIES TO THE ARMED CONFLICT

H. M. GRIGORYAN, Colonel of Justice, PhD in Law, Doctoral Student in Criminalistics, Military University, Ministry of Defense, Russian Federation

SUMMARY

The organization of efficient activities of the organs of criminal justice in the area of the armed conflict is impeded by a number of negative factors both of objective (the agility of operational situation; frequent redeployment of military units; death, wounding and capture of witnesses, victims, suspects in the course of combat operations, etc.) and subjective (politization of the investigation of war crimes; investigation of war crimes towards only one of the parties to the conflict, the attempts of pretending the “commitment” of war crimes by an enemy, resistance to the investigation on the part of the command staff, etc.) natures.

Such factors as the indisposition to observe the norms of the International Humanitarian Law by the politicians, mutual distrust of the parties and handling with a set of nonsubstantiated accusations towards each other, international tension between the leading countries of the world, large scale of war crimes with the involvement of thousands of people, etc., also exert considerable negative influence.

To effectively neutralize such negative factors it is deemed expedient to: ratify the Rome Statute of the International Criminal Court, incorporate its provisions in the national legislation; make organizational amendments in the structure of the prosecutor-investigating staff through the establishment of the divisions by main spheres of activity and inclusion of qualified workforce in their staffs; proper allocate resources with regard for the priority of business management and determining the degree of responsibility; apply exceptional measures by establishing special legal regimes, etc.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԱՎՏՈՄԱՏԱՑՆԵԼՈՒ ՊՐՈԲԼԵՄԻ ՇՈՒՐՋ

Ա. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, լեյտենանտ, ՀՀ ԶՈՒ-ի զորամասի իրային ծառայության պետ

Զինված ուժերի պարենային ապահովումը թիկունքային ապահովման հիմնական և առավել կարևոր բաղադրիչներից է: Բոլոր ժամանակներում մեծ ուշադրություն է հատկացվել բանակի պարենային ապահովմանը, քանի որ լիարժեք կերպով սնվելուց են կախված զինծառայողի մտավոր ակտիվությունը, նրա առողջական վիճակը, ֆիզիկական կարողությունները:

Պարենային ապահովման գոյություն ունեցող հիմնական պրոբլեմները առնչվում են զինված ուժերի բոլոր օղակներին: Ուստի և անհրաժեշտություն է ծագում մշակելու զինված ուժերի պարենային ապահովման այնպիսի հեռանկարային համակարգ, որն ունակ լինի ցանկացած պայմաններում՝ և՛ խաղաղ, և՛ պատերազմական ժամանակ, առանց էական վերակառուցման առավելագույնս որակյալ և արդյունավետ կերպով կատարելու իր հիմնական խնդիրը՝ զորքերի պարենային ապահովումը[1]:

Պարենային ապահովումը ներառում է՝ պարենամթերքի պահանջարկի հաշվարկումը, անհրաժեշտ ծավալներով գնումների հայտագրումը, պարենի մթերումը, տեխնիկայի և գույքի պահեստավորումն ու պահումը, զորքերի (ուժերի) ապահովումը պարենամթերքով, պարենային ծառայության տեխնիկայով և գույքով, տվյալ տեխնիկայի և գույքի նորոգման կազմակերպումը, հացաթխման և անձնակազմի սննդի կազմակերպումը, պարենային ծառայության գծով հաշվառման կազմակերպումն ու վարումը, հաշվետվողականության, այդ ծառայության տնտեսական գործունեության վերահսկումը, ինչպես նաև մի շարք այլ միջոցառումներ՝ ուղղված զինծառայողների սնվելու պահանջմունքների բավարարմանը, պարենային ծառայության տեխնիկական միջոցներով ապահովմանը և պարենամթերքի ռազմավարական զորային պաշարների ստեղծմանը[2]:

---

[1] Տես *Д. С. Колеухо, Е. Ю. Хрусталёв.* Совершенствование системы продовольственного обеспечения армии в современных условиях. «Политематический сетевой электронный научный журнал Кубанского государственного аграрного университета», 2015, № 110 (http://ej.kubagro.ru/2015/06/pdf/107.pdf):

[2] Տես *И. Кущ, И. Грибанов, И. Камышанов.* Тыловое обеспечение подразделений в бою. М., 1973, с. 29:

Հարկ է նշել, որ բոլոր թվարկված միջոցառումները հաջորդաբար պարբերականորեն կրկնվող գործողություններ են, ընդսմին պարենային ապահովման համակարգի կատարելագործման համար անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել ծախսվող ուժերը, միջոցներն ու ժամանակը:

Այս տեսակետից առավել նպատակահարմար է ուսումնասիրել պարենային ապահովման հիմնական միջոցառումներից մեկը՝ զորամասի պարենային ծառայությունում և ընդհանուր առմամբ զինված ուժերում եղած նյութական արժեքների հաշվառումը: Զորամասերը սահմանված կարգով կատարում են պարենամթերքի, պարենային ծառայության տեխնիկայի և գույքի առկայության, շարժի և որակի վիճակի հաշվառում՝ ղեկավար փաստաթղթերի հիմնական պահանջներին համապատասխան[3], սակայն մի շարք զինված ուժերում (այդ թվում՝ ՀՀ ԶՈՒ-ում) հաշվառման հիմնական մեթոդները բավական հնացել են, ուստի պահանջվում է տվյալ գործընթացի օպտիմալացում:

Պարենային ապահովման հեռանկարային համակարգը պետք է ներառի պարենային ծառայությունում հաշվառման կիրառման եղանակների ու մեթոդների արդիականացում և նորերի մշակում, ինչը հնարավորություն կտա ապահովելու ծառայության աշխատանքի ավելի մեծ արդյունավետություն: Ուստի անհրաժեշտ է թվում առավելագույնս ավտոմատացնել նյութական միջոցների առկայության և շարժի հաշվառումը (էլեկտրոնային հաշվողական մեքենաների (ԷՀՄ) և տվյալների ընդհանուր էլեկտրոնային շտեմարանի օգտագործում):

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ ներկայումս ՀՀ ԶՈՒ-ում պարենային ծառայությունում եղած նյութական արժեքների հաշվառումը կատարվում է ձեռովի՝ հաշվառումային գրքերի ու քարտերի կիրառմամբ, ինչը անձնակազմի գործունեության արդյունավետության և հուսալիության ապահովման տեսանկյունից նպատակահարմար չէ:

Նյութական միջոցների հաշվառման ավտոմատացումը ենթադրում է պարենային ապահովման համակարգի հիմնավոր արդիականացում, այն է՝ ԶՈՒ-ի թիկունքի վարչությունում, ինչպես նաև ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի տնտեսագիտական վերլուծության և գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչությունում հաշվողական կենտրոնների (ՀԿ) ստեղծում, կորպուսներում՝ հաշվողական կետերի (ՀԿտ), իսկ զորամասերի պարենային ծառայություններում՝ հաշվառումաօպերացիոն բաժինների (ՀՕԲ) ստեղծում:

ՀԿ-ները, ՀԿտ-ները և ՀՕԲ-երը հարկ է զինել այնպիսի տեխնիկական միջոցներով և ծրագրերով, որոնցով Զինված ուժերի բոլոր օղակներում ապահովվեն նյութական միջոցների հաշվառման հետևյալ հիմնական խնդիրների լուծումը.

ա) պահման կենտրոնական բազաներում, կորպուսների (զորամասերի) պահեստներում նյութական միջոցների առկայության, շարժի և որակի (տեխնի-

[3] Տես «ՀՀ ԶՈՒ-ի սպառազինության, տեխնիկայի, ունեցվածքի և նյութական այլ միջոցների հաշվառման ձեռնարկ», մաս 1. «Հաշվառումը ստորաբաժանումներում, զորամասերում և միավորումներում»: Գործողության է դրված ՀՀ ՊՆ կոլեգիայի 2006 թվականի մայիսի 13-ի որոշմամբ: Ե., 2008:

կական) վիճակի հաշվառում՝ ՀԿ (ՀԿտ, ՀՕԲ) ընդունվող առաջնային հաշվառումային փաստաթղթերի մշակման հիման վրա,

բ) կարգագրերի կազմում ըստ այն կառավարող մարմնի կարգադրագրերի և այլ կարգադրությունների, որի ենթակայության տակ են գտնվում պարենամթերքի կենտրոնական բազան ու պահեստները, ինչպես նաև ըստ դրանցում նյութական միջոցների փաստացի առկայության ու վիճակի հաշվառման,

գ) պահեստում գտնվող նյութական միջոցների առկայության և շարժի մասին իրազեկույցների (հաշվետվությունների) կազմում այն կառավարման մարմինների համար, որոնց ենթարկվում է տվյալ զորամասը,

դ) այն ընդհանրացված տվյալների ձևավորում, որոնք բնութագրեն որոշակի ժամանակահատվածում նյութական միջոցների առկայությունը, շարժն ու վիճակը, ինչպես նաև կենտրոնական բազաներում ու պահեստներում ըստ պահման առանձին բաժինների, ըստ զորամասերի այլ ստորաբաժանումների և ընդհանուր առմամբ ըստ ամբողջ զորամասի հաշվառման մյուս ցուցիչները,

ե) զորամասի կարիքների համար պարենային ծառայության նյութական միջոցների պահանջմունքի մասին հայտագրերի ուղարկում անմիջականորեն հաշվառումաօպերացիոն բաժիններից հաշվողական կետեր, իսկ այնտեղից՝ ՀԿ (ՀՀ ԶՈՒ-ի թիկունքի վարչություն)՝ ստացված հայտագրերի բավարարման վերաբերյալ որոշումների կայացման համար:

Որպես պարենային ծառայության նյութական միջոցների հաշվառման ավտոմատացման հաջորդ փուլ առաջարկում ենք ստեղծել ամբողջ Զինված ուժերի համար համընդհանուր տվյալների շտեմարան, ինչը հնարավորություն կտա ձևավորելու պարենային ծառայության հիմնական նյութական միջոցների գծով ընդհանուր էլեկտրոնային շտեմարան, որտեղ արտացոլված կլինեն նյութական միջոցների քանակը, որակը, կարգախումբը, պահման տեղը և եղանակը, ինչպես նաև պահման ձևը: Տվյալների շտեմարանում կներառվեն նաև պարենային ծառայության բոլոր տեսակների նյութական միջոցների վերաբերյալ պետական ստանդարտների հիմնական պահանջները և տեխնիկական պայմանները:

Տվյալ մեթոդիկայով առաջարկվում է նյութական միջոցների շարժի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկույթի հաղորդում հաշվողական կենտրոններից (հաշվողական կետերից) զորամասի, զորամիավորման հաշվառումաօպերացիոն բաժին և հակառակը՝ պարենային ծառայության նյութական արժեքների հանձնման (դուրսգրման) դեպքում նյութական միջոցների համապատասխան շարժի վերաբերյալ տեղեկույթի ներկայացում ՀՕԲ-ից ՀԿտ (ՀԿ): Դրանով կպահպանվի աստիճանակարգության հիմնական սկզբունքը, ինչը հնարավորություն կտա կենտրոնացված կերպով վերահսկելու նյութական միջոցներով ապահովման ամբողջ գործընթացը՝ ամբողջ ԶՈՒ-ի մասշտաբով:

Զինված ուժերի բոլոր օղակներում նյութական միջոցների շարժին վերաբերող բոլոր միջոցառումները կիրականացվեն ՀԿ-ի (ՀԿտ, ՀՕԲ) միջոցով՝ ըստ սահմանված ձևերի հաշվառումային փաստաթղթերի: Դրանք կիրականացվեն ՀԿ-ների (ՀԿտ-ների) և ՀՕԲ-երի միջև իրագործվող անընդհատ էլեկտրոնային նամակագրության միջոցով: Լուծում պահանջող յուրաքանչյուր խնդրի համար

զորամասի, զորամիավորման հաշվառումաօպերացիոն բաժնի պետը ՀԿտ (ՀԿ) ներկայացուցչի հետ համատեղ պետք է ճշտի ելակետային նորմատիվ-տեղեկատու տվյալների ցանկը, ինչպես նաև փաստաթղթերի շրջանառության սխեման՝ կոնկրետ պայմանների հաշվառմամբ և դրանցում հաշվառումային փաստաթղթերի ձևերի, դրանց ստացման (ուղարկման, տրման) եղանակների, պարբերականության և ժամկետների նշմամբ:

Տվյալների էլեկտրոնային շտեմարանում նաև կպահվեն բեռներն առաքողների, ստացողների, առանձին զորամասերի, զորամիավորումների, կենտրոնական բազաների, պահեստների կողերն ու հասցեները և այլ տեղեկույթ (առբերման ուղիները, ճանապարհի երկարությունը, անցունակությունը և այլն), ինչպես նաև տվյալ խնդրի լուծման արդյունքների տրամադրման ձևերը:

Բացի սահմանված պարբերականությամբ ՀԿտ-ում (ՀԿ-ում) և ՀՕԲ-ում պարենային ծառայության նյութական միջոցների հաշվառման վերահսկման խնդիրների լուծումից, նախատեսվում է նաև ըստ ՀԿտ (ՀԿ) պետերի (զորամասերի պարենային ծառայության պետերի, պահման բաժինների պետերի, պահեստների և պահման բազաների պետերի) արտաժամկետային հայտերի առնչությամբ խնդիրների լուծում՝ զինված ուժերի բոլոր օղակներում հաշվառումային տեղեկույթի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատու տվյալներ ստանալու նպատակով:

Ամբողջ զինված ուժերում ավտոմատացված եղանակով ընդհանուր հաշվառման ներդրմամբ կապահովվեն հետևյալ հիմնական առավելությունները.

ա) հաշվողական կենտրոնների, հաշվողական կետերի և հաշվառումաօպերացիոն բաժինների համատեղ աշխատանքի առաջարկվող ալգորիթմը հնարավորություն կտա արդյունավետ կերպով կազմակերպելու նյութական արժեքների առկայության և շարժի մշտական վերահսկում,

բ) ընդհանուր հաշվառման ավտոմատացումը հիմք կստեղծի հաշվետու ժամանակահատվածի վերաբերյալ հաշվետու փաստաթղթերը ժամանակին ներկայացնելու համար,

գ) հաշվառման ավտոմատացումը նաև կբացառի զորամասերում անօրինական դուրսգրումները և նյութական միջոցների ապօրինի շարժը,

դ) հաշվառման ամբողջ գործընթացը կիրականացվի կենտրոնացված կերպով՝ աստիճանակարգության սկզբունքով,

ե) հաշվառումաօպերացիոն բաժնում (հաշվողական կենտրոնում, հաշվողական կետում, պահման պահեստներում ու բազաներում) հաշվողական տեխնիկայի օգտագործմամբ նյութական միջոցների հաշվառման դեպքում հաշվառման համապատասխան գրքերի ու քարտերի գործածությունը կկորցնի իմաստը:

Փաստորեն, խոսքը պարենային ապահովման նոր համակարգի մշակման ու ներդրման մասին է: Դա հնարավորություն կտա ավելի արդյունավետ կերպով օգտագործելու առկա ռեսուրսները, ժամանակին կազմակերպելու նյութական արժեքների կենտրոնացված և զանգվածային հաշվառում՝ հաշվողական կենտրոններում, հաշվողական կետերում և հաշվառումաօպերացիոն բաժիններում անընդհատ եռամակարդակ վերահսկողության պայմաններում:

Բնականաբար, Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում պարե-

նային ապահովման առաջարկվող հեռանկարային համակարգի ներդրումը պահանջում է ռազմատնտեսական վերլուծություն, որը պարտադիր է ցանկացած տեսակի արդիականացումների և նորամուծությունների դեպքում, քանի որ դրա արդյունքներով են հիմնավորվում ցանկացած վերափոխման նպատակահարմարությունը և արդյունավետությունը[4]:

Հարկ է նշել, որ առաջարկվող համակարգի ներդրման տնտեսական արդյունավետության առումով կնվազեն պարենային ծառայությունների գործավարներ պահելու համար կատարվող ծախսերը, քանի որ նյութական արժեքների հաշվառումը կկատարվի ավտոմատացված եղանակով: Դրա փոխարեն անհրաժեշտ կլինի ունենալ ընդամենը մեկ օպերատոր հաշվողական կենտրոնում, մեկ՝ հաշվողական կետում և մեկ՝ հաշվառումաօպերացիոն բաժնում: Հնարավոր կլինի նաև տնտեսել պարենային ծառայության նյութական արժեքների հաշվառման գրքերի և քարտերի վրա ծախսվող գումարները, քանի որ նյութական արժեքների որակական, քանակական վիճակի բոլոր փոփոխությունների արձանագրումը կկատարվի ավտոմատացված եղանակով: Կկրճատվեն նաև նյութական արժեքների կարգախմբերի մուտքագրման, հանձնման, դուրսգրման և փոփոխման հետ կապված ծախսերը, քանի որ այդ բոլոր օպերացիաները կկատարվեն էլեկտրոնային հաշվողական մեքենաներով՝ ավտոմատացված եղանակով:

Այսպիսով՝ ՀՀ Զինված ուժերում պարենային ապահովման առաջարկվող հեռանկարային համակարգի ներդրման շնորհիվ պարենային ծառայության հիմնական խնդիրը՝ ցանկացած իրադրությունում զորքերի արդյունավետ պարենային ապահովումը, կկատարվի նույն որակով և արդյունավետությամբ, սակայն դրական փոփոխություններով. էապես կնվազեն երեք հիմնական ցուցիչների՝ ժամանակի, միջոցների, ուժերի վրա կատարվող ծախսերը:

[4] Տես *С. Ф. Викулов, Е. Ю. Хрусталёв.* Методологические основы и специфика военно-экономического анализа. «Экономический анализ: теория и практика», 2014, № 7 (http://www.fin-izdat.ru/journal/analiz/detail.php?ID=60736):

ТЫЛОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ

К ПРОБЛЕМЕ АВТОМАТИЗАЦИИ ВЕДЕНИЯ УЧЕТА ПРОДОВОЛЬСТВЕННОЙ СЛУЖБОЙ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А. А. МКРТЧЯН, лейтенант, начальник вещевой службы войсковой части ВС РА

РЕЗЮМЕ

Одним из путей повышения качества и эффективности продовольственного обеспечения войск в любой обстановке является разработка перспективной системы автоматизации ведения учета продовольственной службой. Автоматизация подразумевает осуществление модернизации основ продо-

вольственного обеспечения, а именно: создание вычислительных центров (ВЦ) в Управлении тыла Вооруженных сил, а также в Департаменте продовольственного обеспечения, создание вычислительных пунктов (ВП) в корпусах, а в продовольственных службах воинских частей – учетно-операционных отделов (УОО), которые необходимо оснастить современными техническими средствами и соответствующими программами.

В результате автоматизации ведения учета продовольственное обеспечение войск будет осуществляться более эффективно и своевременно с одновременным существенным уменьшением затрат времени, средств и сил.

LOGISTIC SUPPORT

TO THE ISSUE OF THE AUTOMATIZATION OF RECORD-KEEPING BY THE FOOD AND RATIONS SERVICE IN THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA

A. A. MKRTCHYAN, Lieutenant, Chief, Stores Service, Military Unit, RA Armed Forces

SUMMARY

One of the ways of improving the quality and efficiency of troops' food and rations in any environment is to develop an advanced system of automatization of record-keeping by the Food and Rations Service. The automatization implies the modernization of food and rations basics, namely: the establishment of computer centers (CC) in the Department of the Logistics, the Armed Forces, as well as in the Department of Food and Rations; the establishment of computer posts (CP) in the corps, and opening record and operational centers (ROC) in the food and rations services of military units, which should be equipped with modern technical facilities and relevant programs.

As a result of the automatization of record-keeping, the troops' food and rations will be implemented more effectively and timely with simultaneous essential cost reduction of time, means and efforts.

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԵՎ ԲԱՔՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Վ. ՆԱԶԱՐՅԱՆ, Հայաստանի ազգային արխիվի գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ-ի Արևելագիտության ինստիտուտի հայցորդ

1918 թ. նոյեմբերի 11-ին Կոմպիենի անտառում՝ Ռետոնդ կայարանում (Ֆրանսիա), դաշնակիցների զորքերի Գերագույն գլխավոր հրամանատար մարշալ Ֆերդինանդ Ֆոշի շտաբային վագոնում ստորագրվեց հայտնի զինադադարը, որը վերջ դրեց առաջին համաշխարհային պատերազմին: Պատմության մեջ մնացին Մառնի, Սարիղամիշի, Վերդենի (այսպես կոչված «Վերդենյան մսաղաց») ճակատամարտերը, Դարդանելյան օպերացիան, Յուտլանդիայի ծովամարտը և մյուս նշանավոր ճակատամարտերը: Սակայն համաշխարհային պատմությունը այդպես էլ արժանի գնահատական չտվեց Սարդարապատի ճակատամարտին, որը, ինչպես Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերը և ապա՝ Բաքվի հերոսական պաշտպանությունը, ունեցավ կարևոր ռազմավարական նշանակություն:

Կովկասյան ռազմաճակատում 1917 թ. դեկտեմբերի 5-ին կնքվեց զինադադար: Թուրքական «Կովկաս» բանակային խմբավորումը (հրամանատար՝ Մեհմեդ Վեհիբ փաշա), օգտվելով այդ զինադադարից, վերախմբավորվեց և համալրվեց թարմ ուժերով, իսկ 1918 թ. հունվարի 30-ին (փետրվարի 12-ին), խախտելով այդ զինադադարով հաստատված սահմանազատիչ գիծը, անցավ հարձակման ամբողջ ճակատով: Հարձակման նպատակը, ինչպես նույն օրը՝ փետրվարի 12-ին, Պատգամավորների պալատում (Կոստանդնուպոլիս) բացահայտ կերպով հայտարարեց Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշան, Բաթումի ու Բաքվի արագ գրավումն էր, իսկ այնտեղից՝ Թուրքեստանի (Միջին Ասիա) հետ կապի հաստատումը[1]: Փաստորեն, «Օսմանյան կայսրությունը Եվրոպայի ճիպոտի հզոր հարվածների տակ շրջադարձ էր կատարում դեպի Արևելք, դեպի նվիրական Թուրան»[2]:

Տրապիզոնից մինչև Ուրմիա 720 կմ երկարությամբ ռազմաճակատը պաշտպանելու էին Անդրկովկասում ռուսական հրամանատարության ստեղծած ազգա-

[1] Տես *Е. Ф. Лудшувейт.* Турция в годы Первой мировой войны 1914–1918 гг. М., 1966, с. 168:

[2] Տես *Լ. Ղ. Շիրինյան*, Հայ զինական ուժը Առաջին աշխարհամարտի վերջնափուլում: Ե., 2010, էջ 14:

յին զորամիավորումները: Հայկական բանակային կորպուսը, որն ուներ 17000 սվին և 16 հրետանային մարտկոց (հրամանատար՝ ցարական բանակի գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյան), պաշտպանելու էր պարսկական սահմանից մինչև Բաբերդ (Բայբուրդ) հատվածը, ներառյալ՝ Էրզրում–Կարս ամրացված շրջանը, իսկ Բաբերդից մինչև Սև ծով հատվածը պաշտպանելու էր Վրացական բանակային կորպուսը, որում հաշվվում էին 12000 սվին և 80 հրանոթ[3]:

Հայկական և վրացական ազգային զորամասերի հետ մեծ հույսեր էին կապում դաշնակիցները: Այսպես՝ ԱՄՆ-ի կոնգրեսական Էդուարդ Լիտլը 1918 թ. փետրվարի 7-ին Կոնգրեսում ունեցած իր ելույթում առաջ քաշեց ընդհանուր պատերազմում դաշնակիցների հաղթանակի հասնելու մի ռազմավարական ծրագիր: Ըստ նրա՝ դեպի Վիեննա և Բեռլին ձգվող հաղթանակի ճանապարհն սկսվելու էր Հայաստանից (Անդրկովկասից) և անցնելու էր Փոքր Ասիայով ու Կոստանդնուպոլսով, իսկ դա էլ ենթադրում էր, որ «միևնույն նպատակով Թիֆլիսից հայերի ու վրացիների և Բաղդադից ու Երուսաղեմից բրիտանացիների շարժման հետևանքով Թուրքիան կձախողվի, և հաղթանակը կլինի մեր ձեռքում»[4]:

Ամերիկացի կոնգրեսականը հաստատուն հիմքեր ուներ նման հայտարարության համար, հատկապես՝ հայերի մասով, որովհետև թուրքական հարձակման առաջին իսկ օրվանից հայերը անձնուրացաբար փորձում էին կասեցնել այդ հարձակումը՝ նվազ ուժերով ամենուրեք ցույց տալով համառ դիմադրություն, որն իր գագաթնակետին հասավ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի ու Բաքվի հերոսական պաշտպանության ձևով: Այդ դիմադրության շնորհիվ թուրքական ուժերը 8 ամիս ուշացումով մտան Բաքու, երբ տեղի նավթն արդեն չէր կարող օգնել Թուրքիայի համար մեկ դաշնակից Գերմանիային եվրոպական ՌԳԹ-ում:

Լայնածավալ հարձակումն սկսելու պահին Թուրքիան Կովկասյան ճակատում ուներ երեք բանակային կորպուս, որոնք գործելու էին հետևյալ ուղղություններով.

– 3-րդ բանակի 2-րդ բանակային կորպուսը (հրամանատար՝ Յաղուբ Շևքի փաշա)՝ Տրապիզոն–Բաթում ուղղությամբ,

– 3-րդ բանակի 1-ին Կովկասյան բանակային կորպուսը (հրամանատար՝ Քյազիմ Կարաբեքիր փաշա)՝ Էրզրում–Կարս ուղղությամբ,

– 2-րդ բանակի 4-րդ բանակային կորպուսը (հրամանատար՝ Ալի Իհսան Սաբիս փաշա)՝ Վան–Բայազետ ուղղությամբ[5]:

Այս երեք բանակային կորպուսները միասին ունեին 10000 սվին[6]:

Բոլոր ուղղություններով անցնելով միաժամանակյա հարձակման և օգտվելով Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության* անվճռականությունից՝

[3] Տես *Ե. Ֆ. Լուդշուվեյտ*, Նշ. աշխ., էջ 160–161:

[4] Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 430, ց. 1, գ. 584, թ. 4:

[5] Տես «Կովկասյան ռազմաճակատում 1918 թ. փետրվար–մայիս ամիսների թուրքական ուժերի հարձակման քարտեզ» (ՀԱԱ, ֆ. 247, ց. 3, գ. 70):

[6] Տես *Ե. Ֆ. Լուդշուվեյտ*, Նշ. աշխ., էջ 166:

* Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր հրամանատարն էր գեներալ Իլյա Զ. Օդիշելիձեն (նրա քույրը Վեհիբ փաշայի կինն էր), որին 1918 թ. մարտին այդ պաշտոնում փոխարինեց գեներալ Եվգենի Լեբեդինսկին:

թուրքերը երեք ամսվա ընթացքում մեկը մյուսի հետևից գրավեցին Տրապիզոնն ու Բաթումը և Արևմտյան Հայաստանի քաղաքները՝ հասնելով Արևելյան Արփայի և Արաքսի ափերին:

Կարսում Էնվեր փաշան նորից վերախմբավորեց թուրքական ուժերը: Մասնավորապես՝ 2-րդ և 1-ին բանակային կորպուսներից կազմեց «Կարս» բանակային խմբավորումը (հրամանատար՝ Յաղուբ Շևքի փաշա), որի կազմի մեջ մտնող դիվիզիաները գործելու էին հետևյալ ուղղություններով.

– 5-րդ Կովկասյան դիվիզիան Ղարախաչի լեռնանցք–Վորոնցովկա–Բոլնիս-Խաչեն երթուղով հարվածելու էր Թիֆլիսին՝ հարավից,

– 9-րդ և 11-րդ Կովկասյան հետևակային դիվիզիաները շարժվելու էին Ալեքսանդրապոլ–Մեծ Ղարաքիլիսա գծով և, գրավելով Մեծ Ղարաքիլիսան, Դիլիջան–Քարվանսարա–Ղազախ գծով հասնելու էին Ելիզավետպոլ (Գանձակ), իսկ այնտեղից՝ Ելիզավետպոլ–Բաքու երկաթգծով շարժվելու էին դեպի Բաքու,

– 36-րդ Կովկասյան հետևակային դիվիզիան («Գելիբոլու»), շարժվելով Ալեքսանդրապոլ–Երևան երկաթուղու երկայնքով, պետք է գրավեր Երևանը, ապա երկաթուղով շարժվեր մինչև Ջուլֆա,

– 3-րդ Կովկասյան հետևակային դիվիզիան Բաշ-Ապարան–Աշտարակ–Երևան գծով պետք է հարվածեր Երևանյան զորախմբին հյուսիս-արևելքից:

Արաքսից հարավ՝ Սուրմալուի ուղղությամբ, գործում էր թուրքական 4-րդ բանակային կորպուսը (5-րդ և 12-րդ հետևակային դիվիզիաներ), որը պետք է աջակցեր Արարատյան դաշտում գործող թուրքական ուժերին:

Սակայն Երևանյան զորախումբը (հրամանատար՝ գեներալ-մայոր Մովսես Սիլիկյան, շտաբի պետ՝ փոխգնդապետ Իվան Վեքիլյան), շտաբի մշակած փայլուն պլանի շնորհիվ մայիսի 22-ից 29-ը Սարդարապատի (հրամանատար՝ գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյան) և Բաշ-Ապարանի (հրամանատար՝ Դրաստամատ Կանայան) ճակատներում ջախջախեց թուրքական 36-րդ և 3-րդ դիվիզիաները:

Թվում էր՝ հաղթանակը լիակատար է: Գեներալ Սիլիկյանն անգամ ծրագրեց շարժվել դեպի Ալեքսանդրապոլ, իսկ այնտեղից՝ Կարս: Դժբախտաբար, այս ծրագիրը չիրականացվեց Ղարաքիլիսայի ճակատում գործող զորաբանակի (1-ին հրաձգային դիվիզիա, հրամանատար՝ գնդապետ Աթաբեկ Բեյ-Մամիկոնյան, ճակատի հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյան) կրած պարտության և մայիսի 30-ին քաղաքի հանձնման պատճառով:

Այդուհանդերձ, Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքական բանակի հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան ստիպված եղավ խոստովանել. «Ղարաքիլիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել»[7]:

Մայիսյան հերոսամարտերը ոչ միայն հայ ժողովրդի համար ունեցան հսկայական պատմաքաղաքական նշանակություն, այն է՝ վերջնական բնաջնջումից փրկվեցին արևելահայությունը և Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականությունը, վերականգնվեց հայոց կորսված պետականութ-

[7] Տես *Ե. Ղ. Սարգսյան*, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914–1918 թթ.: Ե., 1964, էջ 450:

յունը, այլև՝ ռազմավարական նշանակություն ամբողջ Անդրկովկասյան տարածաշրջանի համար: Դեպի Թիֆլիս արշավող 5-րդ դիվիզիան կես ճանապարհից ստիպված եղավ փոխել իր շարժման ուղղությունը և օգնության հասնել Ղարաքիլիսայի ճակատում հյուծված 11-րդ դիվիզիային: Երկու հայկական դիվիզիաները, իրենց վրա գամելով 3 թուրքական բանակային կորպուսների ուժերը, կարողացան կոտրել դեպի արևելք, մասնավորապես՝ դեպի Թավրիզ, Բաքու և Հյուսիսային Կովկաս շարժվող թուրքական ուժերի հարձակման թափը:

Մայիսյան ճակատամարտերում թուրքերն Արևելյան Հայաստանում կորցրին շուրջ 7000 զինվոր[8] (միայն Սարդարապատի ճակատում՝ շուրջ 3500[9]):

Այդպիսով՝ դեպի Բաքու շարժվող թուրքական բանակը Երզնկայից մինչև Սարդարապատ մղված մարտերում հյուծվեց և փաստացի դադարեց մարտունակ ուժ լինելուց: Ինչպես իր հուշերում գրել է ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը. «Հայաստանի դեմ վարած կործանարար քաղաքականության հետևանքներից մեկը պատերազմի ժամանակ Կովկասյան լեռներում հյուծվածությունից թուրքական զորքերի զանգվածային կոտորածն էր»[10]:

Փաստորեն հայկական զորքերը, 1918 թ. սկզբին, երբ ռուսական բանակը հեռացավ Կովկասյան ռազմաճակատից, մարտնչելով թուրքերի դեմ, 8 ամսով հետաձգեցին Բաքվի գրավումը, ինչը պատերազմի վերջնափուլում Թուրքիայի և հատկապես նրա գլխավոր դաշնակից Գերմանիայի համար ունեցավ քաղաքական և ռազմավարական կարևոր նշանակություն: Դա պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով: 1918 թվականին «Քառյակ դաշինքի» պետություններն սպառել էին իրենց մարդկային և նյութական ռեսուրսները, ժողովուրդներն ու բանակներն ուժասպառ էին եղել: ՈՒստի վառելանյութից, մասնավորապես՝ նավթից, զուրկ Գերմանիայի համար հրատապ խնդիր էր Բաքվի նավթին տիրելը: Ինչպես նշում է Կայզերական Գերմանիայի Զինված ուժերի *(Reichsheer)* Գլխավոր շտաբի պետի օգնական, Գերագույն հրամանատարության առաջին գեներալ-զորաբնակարանապետ Էրիխ Լյուդենդորֆը, «մենք սպառել էինք բանակում եղած վառելիքի ամբողջ պաշարը և զգում էինք դրա համար շատ մեծ պակաս: …. Այժմ մեզ հնարավոր էր թվում նավթի պակասը լրացնել Անդրկովկասից և հատկապես Բաքվից առբերմամբ»[11]: Լյուդենդորֆը «խաղաղրույք էր կատարել» «մեծ հանույթի» վրա, որը պետք է բավարարեր Գերմանիայի նավթի հսկայական, այն էլ՝ անընդհատ աճող պահանջմունքը և փոխեր պատերազմի ելքը[12]:

Բաքվի նավթի հարցը քննարկման առարկա դարձավ 1918 թ. օգոստոսի 21-ին Գերմանիայի բանակի գլխավոր շտաբում (Բեռլին) հրավիրված հատուկ

[8] Տես *Ս. Աֆանասյան*, Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918): Ե., 1999, էջ 76:

[9] Տես *Հ. Գ. Թուրշյան*, Սարդարապատի հերոսամարտը: Ե., 1965, էջ 138:

[10] Տես «Воспоминания Гинденбурга». Сокращ. пер. с немец. Л. Щегло. Петроград, 1922, с. 32:

[11] *Э. Людендорф.* Мои воспоминания о войне 1914–1918 гг. Пер. с немец. В 2-х томах, т. 2. М., 1924, с. 220:

[12] Տես *Д. Ергин.* Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть. Пер. с англ. М., 1999, с. 199:

խորհրդաժողովում: Այնտեղ, մասնավորապես, նշվեց, որ Բաքու–Թիֆլիս երկաթուղին և Բաքու–Բաթում նավթամուղը պետք է անցնեն Գերմանիայի վերահսկողության տակ[13]: Ըստ այդմ Լյուդենդորֆը մշակեց մեկ այլ ռազմավարական ծրագիր. «Էնվերի խնդիրը Անգլիայի դեմ պայքարն էր, և առաջին հերթին՝ Պաղեստինի ճակատում... Հիմա հնարավորություն է ստեղծվել անգլիացիներին նաև հյուսիսային Պարսկաստանում հարված հասցնելու համար: Դրան է նպաստել Թիֆլիսով Բաթումից դեպի Թավրիզ ձգվող երկաթգիծը... Ընդսմին եթե հաջողվեր Անգլիայի դեմ հանել նաև Ադրբեջանի բնակչությանը, ապա դա մեծ դեր կխաղար... Սակայն Էնվերը և թուրքական կառավարությունը ավելի շատ մտածում էին Կովկասում իրենց պանիսլամական նպատակների, քան Անգլիայի դեմ պատերազմի մասին»[14]:

Ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգը և գեներալ ֆոն Լյուդենդորֆը

Գրավելով Բաքուն՝ գերմանացիները կլուծեին ևս մեկ ռազմավարական խնդիր: Բաղդադի գրավմամբ (1917 թ. մարտի 11) անգլիացիները փակեցին նրանց ճանապարհը դեպի արևելք՝ Բեռլին–Բաղդադ երկաթուղին, որով գերմանացիները հասնելու էին Ասիայի խորքերը, ուստի Գերմանիայի համար բացառիկ նշանակություն էր ստացել Բեռլին–Բաքու–Բուխարա աշխարհառազմավարական առանցքը[15]:

Ցարական բանակի հայազգի փորձառու սպա, ճանաչված գեներալ-մայոր Գաբրիել Ղորղանյանն իր հուշերում նշում էր, որ գերմանացիների տեսակետից «Բացի պատերազմը շարունակելու համար հույժ անհրաժեշտ նավթամթերքով իրեն ապահովելու հնարավորությունից, այդ շրջանին տիրանալը ճանապարհ էր բացում Կասպից ծովով դեպի Պարսկաստան, Անդրկասպյան մարզ և Թուրքեստան (Միջին Ասիա.–Հ. Ն.), որտեղից հնարավոր կլիներ խռովություն բարձրացնել Աֆղանստանում և այդ կերպ սպառնալ Հնդկաստանում բրիտանական տիրապետություններին»[16]: Ըստ այդմ՝ կայզերական Գլխավոր շտաբում Անդրկովկասը դիտվում էր որպես ցամաքային կամուրջ դեպի Միջին Ասիա, Պարսկաստան, Աֆղանստան և Հնդկաստան:

Անդրկովկասը աշխարհառազմավարական նշանակություն ուներ և Օսմանյան կայսրության համար[17]. թուրքերը կարող էին իրականացնել իրենց վաղեմի

[13] Տես *Г. В. Пипия.* Германский империализм в Закавказье в 1910–1918 гг. М., 1978, с. 127, 129:

[14] *Է. Լյուդենդորֆ*, Նշ. աշխ., էջ 187:

[15] Տես *L. C. Dunsterville.* The adventures of Dunsterforce. London, 1920, P. 1:

[16] Տես *Г. Г. Корганов.* Участие армян в Мировой войне на Кавказском фронте (1914–1918). Пер. с франц. М., 2011, с. 153:

[17] Անդրկովկասում Թուրքիայի աշխարհառազմավարական շահերի մասին տես *Р. Сафрастян.* Геостратегия Турции и Южный Кавказ. «Материалы Международного стратегического политического форума «Динамика региональной безопасности на Южном Кавказе» (29–30 ноября 2012 г.)». «Рабочие тетради», приложение к военно-научному

պանթյուրքական ծրագրերը, այն է՝ Կովկասի և Կենտրոնական Ասիայի նվաճումը:

Այս բոլոր ծրագրերի իրականացման համար 1918 թ. ամռանը գերմանա-թուրքական հրամանատարության գլխավոր խնդիրներից մեկը դարձավ Բաքվի գրավումը*:

Նուրի փաշա

Բաքվի գրավմանը նախապատրաստվելու և ուժերը վերախմբավորելու համար հունիսին Նուրի փաշան (Էնվերի խորթ եղբայրը) 300 թուրք սպաների և հրահանգիչների հետ ժամանեց Ելիզավետպոլ: Շուտով Մահմեդական (Ադրբեջանական) կորպուսի (ստեղծվել էր «Վայրի դիվիզիայի» հիմքի վրա, հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Ֆերիկ Ալի աղա Շիխլինսկի) և թուրքական 5-րդ, 15-րդ ու 36-րդ դիվիզիաների միավորմամբ ստեղծվեց «Իսլամի բանակը»՝ Նուրի փաշայի հրամանատարությամբ[18]:

Հունիսի 5-ին ժամանելով Բաթում՝ Էնվեր փաշան ձեռնարկեց նոր վերախմբավորում: Մասնավորապես՝ Եվրոպական ռազմաճակատից Կովկաս տեղափոխվեցին 7 նոր դիվիզիաներ, որոնցում կար 9-10 հազար զինվոր ու սպա[19]:

Այս դիվիզիաները, 2-րդ բանակը, նոր կազմված 9-րդ բանակը (հրամանատար՝ Յաղուբ Շևքի փաշա) և Միջագետքում գործող 6-րդ բանակը (հրամանատար՝ Խալիլ փաշա, Էնվերի հորեղբայրը) հունիսի 9-ին միավորվեցին՝ կազմելով «Արևելք» զորքերի խումբ (հրամանատար՝ Մեհմեդ Վեհիբ փաշա), որի խնդիրն էր գրավել Բաքուն: Այն իր կազմում ուներ 28000 զինվոր ու սպա[20]:

Այդ ժամանակ Վրաստանում էին գտնվում գերմանական 217-րդ հետևակային դիվիզիան և 58-րդ Բեռլինյան գունդը, «ինչը չէր կարելի չդիտել որպես թուրքական կողմի պոտենցիալ թիկունք և օգնություն»[21]: Իրականում Գերմանիայի Գլխավոր շտաբը ձգտում էր, առաջ անցնելով թուրքերից, տիրելու Անդրկովկասի նավթային շրջաններին[22]: Փաստորեն, գերմանական և թուրքական շտաբները չունեին գործողությունների միասնական պլան: Ավելին. Էնվեր փաշան Բաքուն նվա-

---

журналу «Айкакан банак» Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА, специальный выпуск. Е., 2013, сс. 135–144:

* Շուրջ 90000 հայ բնակչություն ունեցող «հայկական կապիտալի միջնաբերդի»՝ Բաքվի գրավումով թուրք-մուսավաթականները լուծեցին մեկ այլ կարևոր խնդիր՝ տեղի հայ բնակչության և հայ ժողովրդի ֆինանսատնտեսական ներուժի (կապիտալի) ոչնչացումը (տես *Խ. Դաղայան*, Հայերը և Բաքուն (1850-ական թթ. – 1920 թ.): Ե., 2006, «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.»: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմողներ՝ Ս. Միրզոյան, Ա. Ղազինյան, խմբ.՝ Ա. Վիրաբյան: Ե., 2003):

[18] Տես *Դ. Վ. Կնյազյան*, 1918–1920 թթ. Ադրբեջանական Հանրապետության զինված ուժերը և նրանց խնդիրները ըստ ադրբեջանական աղբյուրների: «ՀԲ», 2006, հմ. 4:

[19] Տես *Ե. Ֆ. Լուդշուվեյտ*, Նշ. աշխ., էջ 214:

[20] Տես նույն տեղում, էջ 216:

[21] Տես *Ա. Հարությունյան*, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները: Ե., 1984, էջ 212:

[22] Տես *Գ. Ферстер, Г. Гельмерт, Г. Отто, Г. Шниттер.* Прусско-германский генеральный штаб 1640–1965. К его политической роли в истории. Пер. с немец. М., 1966, с. 189:

ճելու օպերացիան պլանավորեց առանց Լյուդենդորֆի հետ համաձայնեցնելու[23]:

Ռազմական գործողություններն սկսվեցին հունիսի վերջին: Թուրքական հարձակումը ծավալվեց միաժամանակ Ելիզավետպոլի, Ջուլֆա-Շուշու և Թավրիզի ուղղություններով: Պաշտպանությունն սկզբնապես ձեռնարկվեց Բաքվի կոմունայի ենթակայության տակ գտնվող և Ռազմածովային կոմիսար Գրիգորի Կորգանովի հրամանատարությամբ գործող Կովկասյան Կարմիր բանակի ուժերով: Հարկ է նշել, որ Կոմունայի զորքերի մոտ 80 %-ը կազմում էին տեղի Դաշնակցության, ինչպես նաև ռազմաճակատից հեռացած և ադրբեջանցիների կողմից նոր կոտորածներից խուսափող ջոկատների հայերը՝ գնդապետ Զ. Ավետիսովի գլխավորությամբ[24]:



Ստեփան Շահումյան

Հուլիսի սկզբին Իրանից Բաքու ժամանեց ցարական բանակի գնդապետ Լազար Բիչերախովի* շուրջ 1500-անոց կազակական զորաջոկատը: Քաղաքի պաշտպանությունն ավելի ուժեղացնելու նպատակով հուլիսի կեսերին Ցարիցինից այստեղ ուղարկվեց Գրիգորի Պետրովի հեծելավաշտը, ընդամին Պետրովն ստանձնեց Ռազմական կոմիսարի պաշտոնը: Հունիս–հուլիս ամիսներին ռազմական գործողություններն ընթացան փոփոխակի հաջողություններով:

Սակայն հուլիսի 31-ին քաղաքում իշխանությունը Բաքվի կոմունայից անցավ այսպես կոչված «Ցենտրոկասպյան դիկտատուրային», իսկ քաղաքը պաշտպանող և հիմնականում հայերից կազմված շուրջ 18000-անոց զորքի հրամանատարությունն ստանձնեց ցարական բանակի գեներալ-մայոր Հակոբ Բագրատունին:

Օգոստոսին Իրանից Բաքու հասավ գեներալ-մայոր Լայոնել Դենստերվիլի հրամանատարությամբ գործող շուրջ 1000-անոց բրիտանական զորախումբը *(Dunsterforce)*, որն սպառազինված էր զրահապատ ավտոմեքենաներով և երկու ինքնաթիռով: Անգլիացիները, պաշտպանելով Բաքուն, ցանկանում էին լուծել հետևյալ ռազմավարական խնդիրները. կանխելով Անդրկովկասում, Իրանում և Կենտրոնական Ասիայում գերմանա-թուրքական դաշինքի դիրքերի ամրապնդումը՝ վերացնել Հնդկաստանին սպառնացող վտանգը, հնարավորություն չտալ տիրելու Բաքվի նավթին և այդ կերպ գերմանական Արևմտյան բանակը զրկել

[23] Տես *Ա. Հարությունյան*, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից 1914–1918: Ե., 1983, էջ 335:

[24] Տես *Հ. Ю. Безугольный*. Бакинская Коммуна и ее армия: социалистические цели – националистические средства. «Вестник Евразии», 2006, № 3: 1918 թ. առաջին կեսին ադրբեջանցիների հրոսակախմբերը վայրագաբար հարձակվում և զանգվածաբար կոտորում էին ռազմաճակատից գնացքներով տուն վերադարձող ռուս և հայ զինվորներին՝ տիրանալով նրանց զենքին, զինամթերքին, զինվորական գույքին (հիշենք նման վարքը նաև 1991–1992 թթ.), իսկ Վրաստանի Բորչալուի (Մառնեուլի) գավառի ադրբեջանցիները գնդակահարում էին հայ գաղթականներով գնացքները:

* Լ. Բիչերախովը Իրանում համաձայնագիր էր կնքել անգլիացիների հետ և փաստորեն իր զորախմբով ենթարկվում էր բրիտանական հրամանատարությանը, ավելի ուշ անգլիացիները Բիչերախովին շնորհեցին գեներալի զինվորական կոչում:

վառելիքից և, վերջապես, ամրապնդել Անդրկովկասում իրենց դիրքերը՝ վերահսկողության տակ վերցնելով Ապշերոնյան թերակղզու նավթային պաշարները:

Բաքվի շուրջ 3 ամսվա հերոսական պաշտպանությունն ավարտվեց սեպտեմբերի 15-ին՝ թուրքերի կողմից քաղաքի գրավմամբ:

Գեներալ-մայոր Հակոբ Բագրատունի

Հայկական զորքերի կողմից Բաքվի պաշտպանությունը քաղաքի հայ բնակչության մի ստվար զանգվածի հնարավորություն տվեց հեռանալու քաղաքից, թեև թուրք-ադրբեջանական կոտորածի զոհ դարձան ավելի քան 30 հազար հայեր[25]: Միևնույն ժամանակ, բրիտանացիները իրենց փոքրաթիվ զորախմբով հայկական ուժերի հետ կազմակերպած պաշտպանությամբ լուծեցին կարևոր ռազմավարական խնդիր՝ գերմանացիներին զրկեցին Բաքվի նավթն օգտագործելու հնարավորությունից: Լյուդենդորֆն իր հուշերում գրում է, որ գերմանական արևմտյան բանակի պարտության գլխավոր գործոններից մեկը վառելանյութի պակասն էր, քանի որ թուրքերը չկարողացան ժամանակին գրավել Բաքուն և նավթով ապահովել իրենց գլխավոր դաշնակցին[26]:

Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջ. Ջերարդը 1919 թ. Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեին ներկայացրած տեղեկագրում նշել է. «Ամերիկացիները պետք է մի վայրկյան կանգ առնեն և խորհեն, թե ինչպիսին կլիներ պատերազմի ելքը և տևողությունը արևմուտքում, եթե թուրքերը ութ ամիս առաջ հասնեին Բաքու, ինչը նրանք կանեին, եթե հայերը չդիմադրեին նրանց»[27]:

Ինչպես գրում է նշանավոր հայազգի միջազգայնագետ իրավագետ Յուրի Բարսեղովը, «հիմնական ուժերը ուղղելով հայերի դեմ՝ Թուրքիան կրեց առաջին աշխարհամարտում ընդհանուր պարտություն, երբ, գրավելով Բաքուն, թվում էր՝ արդեն հասել էր իր նպատակին»[28]:

Թուրքիան, 1918 թ. դրությամբ իր ցամաքային զորքերում ունենալով 96000 զինվոր (44 դիվիզիա)[29], դրանց մի զգալի մասը կենտրոնացրեց Կովկասյան ռազմաճակատում, ինչը նպաստեց, որ թուրքական բանակը պարտություններ կրի մյուս ռազմաճակատներում: Մասնավորապես՝ սեպտեմբերի 19–20-ը Պաղեստինյան ռազմաճակատում* բրիտանական ուժերը (20-րդ և 21-րդ կորպուսները, ընդսմին վերջինիս կազմում էր գործում հերոսական «Հայկական լեգեոնը»[30])

[25] Տես նույն տեղում, նաև՝ «Հայերի կոտորածները…»:

[26] Տես *Է. Լյուդենդորֆ*, Նշ. աշխ., էջ 220:

[27] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 351, թ. 54:

[28] *Ю. Барсегов.* Геноцид армян. В 2-х томах. Т. 2, ч. 2. М., 2005, с. 216:

[29] Տես *Ե. Ֆ. Լուշուվեյտ*, Նշ. աշխ., էջ 265:

* Պաղեստինյան ռազմաճակատում թուրքական բանակների ընդհանուր հրամանատարն էր կայզերական բանակի նշանավոր ռազմագետ, գեներալ Լիման ֆոն Սանդերսը, որի հրամանատարությամբ ավելի վաղ հաջողությամբ իրագործվեց Դարդանելի (Գալիպոլիի) պաշտպանությունը: Պաղեստինյան ռազմաճակատը թուրքերն ուժեղացրեցին նաև գերմանական «Ասիական կորպուսով» («Asian corps»), որը գործում էր թուրքական 8-րդ բանակի կազմում:

[30] «Հայկական լեգեոնի» մասին տես *Ռ. Հ. Գասպարյան*, Հայկական լեգեոնը (1916–

գեներալ Էդմունդ Ալենբիի հրամանատարությամբ ջախջախիչ հարված հասցրին թուրքական 7-րդ (հրամանատար՝ Մուստաֆա Քեմալ փաշա) և 8-րդ (հրամանատար՝ Ջևադ փաշա) բանակներին՝ գրավելով Արարայի բարձունքները:

Բրիտանացի նշանավոր ռազմագետ Լ. Հարտը 1918 թ. սեպտեմբերի 19-ի օպերացիան համարել է առաջին համաշխարհային պատերազմի «ամենաարագ և վճռական ռազմական գործողություններից մեկը», որի հետևանքով «մի քանի օրում Պաղեստինում թուրքական զորքերը գործնականում դադարեցին գոյություն ունենալուց»[31]: Գեներալ ֆոն Սանդերսի կարծիքով՝ Պաղեստինում թուրքերի կործանման պատճառն այն էր, որ թուրքական հրամանատարությունը, հակառակ իր՝ Սանդերսի հրամանի և խորհրդի, երկու դիվիզիա տեղափոխեց Կովկաս՝ հայերի դեմ կռվելու[32]:

Արդեն 1918 թվականի հոկտեմբերի 30-ին Մուդրոս նավահանգստում՝ բրիտանական «Ագամեմնոն» հածանավի տախտակամածին, ստորագրված հայտնի զինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչեց իր պարտությունը և դուրս եկավ առաջին համաշխարհային պատերազմից:

Այսպիսով՝ 100 տարի անց էլ մենք խնդիր ունենք նորովի ուսումնասիրելու և նոր լույսով ներկայացնելու 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերն ու Բաքվի հերոսական պաշտպանությունը, որոնք ռազմավարական նշանակություն ունեցան ոչ միայն ֆիզիկական բնաջնջումից հայ ժողովրդի արևելյան հատվածի և հարյուր հազարավոր արևմտյան գաղթականների փրկության, Կովկասյան ռազմաճակատի և ամբողջ Անդրկովկասյան տարածաշրջանի համար, այլև էական ներդրում էին առաջին աշխարհամարտում Դաշնակիցների (Անտանտի) հաղթանակի նվաճման գործում:

1920 թթ.): «ՀԲ», 1996, հմ. 1, *Ա. Հ. Գարամանուկյան*, Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ: «ՀԲ», 1996, հմ. 3–4:

[31] *B. H. Liddell Hart.* The Real War 1914–1918. Boston–Toronto, 1930, P. 439:

[32] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 351, թ. 55:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

О СТРАТЕГИЧЕСКОМ ЗНАЧЕНИИ ГЕРОИЧЕСКИХ МАЙСКИХ СРАЖЕНИЙ 1918 Г. И ОБОРОНЫ БАКУ В ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЕ

Г. В. НАЗАРЯН, научный сотрудник Национального архива Армении, соискатель Института востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

30 января (12 февраля) 1918 г. турецкие войска, в нарушение заключенного 5 декабря 1915 г. перемирия, предприняли наступление по всему Кавказскому фронту Первой мировой войны. Целью этого наступления было осуществление пантюркистских планов создания Великого Турана

путем быстрого овладения Баку с выходом в Туркестан (Средняя Азия). Основной участок фронта длиной в 720 км оборонял Армянский корпус. С первых же дней турецкого нападения армяне оказывали самоотверженное упорное сопротивление, достигшее апогея в Майских сражениях и обороне Баку, где также войска на 80 % состояли из армян. Благодаря этому сопротивлению турецкие силы вошли в Баку с опозданием на восемь месяцев, когда местная нефть уже не могла помочь исчерпавшему материальные ресурсы главному союзнику Турции – Германии на Европейском ТВД.

Таким образом, героические Майские сражения 1918 г. и оборона Баку имели стратегическое значение не только в плане спасения от физического уничтожения населения Восточной Армении и сотен тысяч беженцев из Западной Армении, восстановления армянской государственности, но и для общей победы Союзников (Антанты) в Первой мировой войне.

MILITARY HISTORY

STRATEGIC SIGNIFICANCE OF THE 1918 MAY HEROIC BATTLES AND DEFENSE OF BAKU IN THE WORLD WAR I

H. V. NAZARYAN, Research Fellow at the National Archives of Armenia, PhD student (external) at the Institute of Oriental Studies, NAS, RA

SUMMARY

On 30 January (12 February) 1918 the Turkish forces, in violation of the armistice signed on 5 December 1915, launched an offensive along the whole Caucasus front of the World War I. The goal of this offensive was the implementation of Pan-Turkic plans for creating Great Turan through quick capture of Baku with access to Turkestan (Central Asia). The main sector of the front of 720 km was defended by the Armenian corps. From the very first days of the Turkish attack the Armenians put up selfless strong resistance to them, which reached its apogee during the May Battles and Defense of Baku, where also the 80 % of the troops were Armenians. Thanks to this resistance, the Turkish forces entered Baku eight months late, when the local oil could no longer help Turkey's key ally – Germany having exhausted its material resources – at the European theater of operations.

Thus, the 1918 May Heroic Battles and Defense of Baku were of strategic value not only in terms of saving the population of Eastern Armenia and hundreds of thousands of refugees from Western Armenia from total extermination, restoring Armenian statehood, but also for the common victory of the Allies (Entente) in the World War I.

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստի գնդապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագիր

Հայաստանի անկախացման բերումով մեզանում ձևավորվեցին պետական-հասարակական կյանքի ու գործունեության նոր ոլորտներ, արդեն տասնամյակներ գոյություն ունեցող խորհրդային մշակույթին ու կենցաղին զուգահեռաբար արմատավորվեցին հասկացություններ, որոնք բնորոշ էին արևմտյան մտածողությանը: Ինքնին պահանջ առաջացավ հայերենում ստեղծելու այդ հասկացություններին համարժեք տերմիններ: Եվ սկսվեց համատարած անվերահսկելի տերմինաշինություն, որով զբաղվեցին և՛ մասնագետներ, և՛ համապատասխան գիտելիք ու փորձ չունեցող մարդիկ:

Բացվեցին հարյուրավոր թերթեր և հանդեսներ, հեռուստաալիքներ, որոնց մի զգալի մասը ամենևին էլ չէր համապատասխանում իր հռչակած առաքելությանը և լայն զանգվածների մեջ անգրագիտություն էր տարածում: Իսկ սխալը, ցավոք, շատ արագ է տարածվում, մինչդեռ այդ սխալն արմատախիլ անելու համար պահանջվում է երկար տարիների տքնաջան աշխատանք: Դրան գումարվեցին նաև ինքնակոչ թարգմանիչները, որոնք ևս չունեին ո՛չ ձիրք, ո՛չ փորձ, ո՛չ գիտելիք: Նման վայ-թարգմանիչներից մեկը մի տերմինի առնչությամբ ինձ ասաց, թե «հայերենում նման հասկացություն չկա», այսինքն՝ նա անգամ պատկերացում չուներ, որ հասկացությունը մտապատկեր է:

Եվ, համապատասխանաբար, ստեղծվեցին մեծ թվով նոր տերմիններ. մի մասը՝ հաջող, մյուսը՝ սխալ: Սխալ տերմինները ոչ թե պարզապես անհաջող են, այլ ազդում են նաև լեզվամտածողության վրա՝ խեղելով այն:

Բանն այն է, որ լեզվամտածողությունը խեղող սխալները գերազանցապես այլ լեզուների ազդեցության հետևանք են և, համապատասխանաբար, արտացոլում են այլ լեզվամտածողության ներխուժումը տվյալ լեզվի մեջ: Եթե նման տեսակի սխալների թիվը լինի բավականաչափ մեծ (ինչը, ցավոք, ներկայումս նկատելի է հայերենում), ապա դա կլինի արդեն խառնուրդ, որը հետզհետե կմերձենա օտար լեզվին: Մինչդեռ բոլորին էլ հայտնի է, որ մայրենի լեզվի հանգչումը ազդարարում է ազգային ինքնության կորուստ:

«Լեզուն կարևոր դեր է խաղում ազգային և էթնիկական տարբերակման գործում, որովհետև նա իր ազդեցությամբ ընդգրկում է ոչ միայն այս կամ այն

հանրության հոգևոր կեցությունը, այլև ապահովում է փոխլրացելիության և այլ ազգերից ու էթնոսներից տարբերվածության զգացողությունը: Հետևաբար, և՛ ազգային, և՛ էթնիկական նույնականությունը պետք է դիտարկվի լեզվի հետ սերտ առնչությամբ, քանի որ հենց նա է ցանկացած սոցիալական հանրության գոյության ամենակարևոր պայմաններից մեկը»[1]:

Պատահական չէ, որ ժամանակին ակադեմիկոս Գ. Ջահուկյանը և պրոֆեսոր Հ. Բարսեղյանը մշակել են հայերենի տերմինաշինության հիմնական սկզբունքները, որոնց կիրառման դեպքում հայերենը կմնա անաղարտ, չի խաթարվի հայեցի լեզվամտածողությունը և վտանգի տակ չի դրվի հայկական ինքնության պահպանումը: Ահա այդ հիմնական սկզբունքները.

«1. Ժամանակակից հայերենի բառակազմական միջոցներով*, հատկապես ածանցմամբ և բարդմամբ տերմիններ կազմել միայն այն դեպքում, երբ պարզվում է, որ տվյալ տերմինային իմաստների համար հայերենում լիովին համապատասխան բառեր չկան:

2. Պատմական ժառանգությունը չխախտելու նպատակով լայն գործածության մեջ գտնվող տերմինները այլ տերմիններով փոխարինել միայն ամենաանհրաժեշտ դեպքերում….:

3. Հաշվի առնել գիտության տվյալ ճյուղի տվյալ բնագավառում գործածվող տերմինների կապը և համակարգային փոխհարաբերությունը, իմաստային հակադրությունները, հայերեն թե փոխառյալ լինելը, բառակազմական ընդհանուր գծերն ու առանձնահատկությունները՝ համակարգի համասեռությունը չխախտելու, հետագա տերմինակերտումը միևնույն սկզբունքով շարունակելու և ընդհանրապես այդ բնագավառի հասկացությունների համակարգի տերմինային համակարգությունն ապահովելու համար:

4. Հաշվի առնել տերմինների աղբյուր-լեզուների համեմատությամբ հայոց լեզվի բառակազմական համակարգի առանձնահատկությունները և հնարավորությունները, միևնույն արմատներից ծագող տերմինների բառակազմական փնջերի ներքին կապերը, պակասող ու հավելական (նույնանիշային) օղակները…:

5. Հաշվի առնել հարակից գիտությունների տերմինային համակարգերը՝ տարբեր գիտությունների մեջ գործածվող միաբնույթ (միևնույն բառից ծագող) տերմինների միջև բացարձակ խզում առաջ չբերելու և հայերենի տերմինային տարբերակները ավելորդ կերպով չբազմացնելու նպատակով…:

6. Տերմինակազմական տարբերակների հնարավորության դեպքում առավելություն տալ այն տարբերակին, որը, մնացած պայմանների հավասարության դեպքում, ավելի կարճ է և դյուրահունչ. ընդհանրապես խուսափել խիստ երկար, բազմաբաղադրիչ և դժվար արտասանելի տերմինների ստեղծումից:

7. Խուսափել հայոց լեզվի բառակազմական նորմաներից շեղվող, բառերի

[1] Տես *Л. Н. Евсеева.* Роль языка в формировании национальной идентичности. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата философских наук. Архангельск, 2009, с. 3 (nartu.ru/university/library/books/0797pdf):

* Բառակազմական հիմնական միջոցներ են եղած բառարմատների բաղադրումը և եղած արմատներից ու բառերից ածանցների գործածությամբ նոր բառերի ստեղծումը:

կամայական ստուգաբանության վրա հիմնվող, խիստ արհեստական և անհասկանալի տերմինների ստեղծումից և տերմինային տարրերի կամայական կրճատումից»[2]:

Մինչդեռ ռազմագիտական տերմինաշինության ժամանակ թույլ են տրվում այս սկզբունքների բազմաթիվ խախտումներ: Մենք բազմիցս գրել ենք «պատրաստում»–«պատրաստություն»–«պատրաստականություն» տերմինաշարի մասին, անգամ բերել ճանաչված հայ բանասերների կարծիքներ, սակայն վիճակը ոչ միայն չի շտկվում, այլ դառնում է ավելի ու ավելի տագնապահարույց:

Այսպես. *маневр–manevver* տերմինի դիմաց համատարած օգտագործվում է «խուսավարում» բառը: Դրա «ջատագովները» վկայակոչում են Ա. Ղարիբյանի բառարանը, որում նշված է. «*Маневр* – 1. *ռազմ.* զորաշարժ, մանյովր. тактический ~ տակտիկական զորաշարժ, обходный ~ շրջանցման զորաշարժ: 2. *փիր.* խորամանկ քայլ, խուսավարում, խորամանկություն բանեցնելը, մանյովր...»[3]: Եվ իրոք, երկրորդ՝ փոխաբերական, իմաստով *маневр*-ը համապատասխանում է лавирование-ին և կարող է թարգմանվել «խուսավարում»: Է. Աղայանի բառարանը «խուսավարել»-ը բացատրում է հետևյալ կերպ. «Խուսավարել, 1. *նք.* Խուսանավելով վարել (նավը): 2. Տե՛ս *Խուսանավել*», իսկ «Խուսանավել, 1. *չբ.* Ընթացքը հաճախակի փոխելով՝ զիգզագներ գործելով ընթանալ՝ խութերից, ծանծաղուտներից խուսափելու համար (նավի մասին): 2. *փիր.* Ճարպկորեն հարմարվելով հանգամանքներին՝ խույս տալով անախորժությունից ու դժվարություններից՝ վարպետորեն դուրս գալ դժվար կացությունից, ճարպիկ կերպով դժվարություններից խուսափել»[4]: ՈՒստի ստացվում է, որ մեր զորքը խուսափում է հակառակորդի հետ բախումից՝ վախենում է: Տվյալ դեպքում խախտված են տերմինակազմության վերը բերված սկզբունքներից 2-րդը և 7-րդը:

Նման սխալ է թույլ տրվել նաև «военная база» բաղադրյալ տերմինի թարգմանության ժամանակ: Այն թարգմանվել է որպես «ռազմական», մինչդեռ ամբողջ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ռազմակայանը գործածվել է որպես «ставка»-ի հայերեն համարժեքը: Ա. Ղարիբյանի բառարանում ևս գրված է «ставка – I ի. (штаб) շտաբ, ռազմական. Ставка Верховного Главнокомандующего Գերագույն գլխավոր հրամանատարի ռազմակայանը», իսկ «*военная база*»-ի համար տրված է՝ «база – …..3. հենակետ, բազա. военная ~ ռազմական բազա: 4. կայան, բազա. туристская ~ տուրիստական (զբոսաշրջիկության) բազա (կայան)…»[5]: ՈՒստի և մենք «военная база»-ի դիմաց պահում ենք «զորակայան» և «ставка»-ի դիմաց՝ «ռազմակայան» համարժեքները[6]:

---

[2] Տես «Հայերենի տերմինակազմության սկզբունքները»: «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու. 1956 – 2006»: Ե., 2006:

[3] Տես *А. С. Гарибян.* Русско-армянский словарь. Е., 1982, с. 460:

[4] Տես *Էդ. Աղայան*, Արդի հայերենի բացատրական բառարան: Ե., 1976, էջ 618:

[5] Տես *Ա. Ղարիբյան,* Նշ. աշխ., էջ 23, 1173:

[6] Տես *Դ. Չիլինգարյան, Ե. Երզնկյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 666, 886:

«Տերմինաշինության» ժամանակ հաճախակի կոպտորեն խախտվում են հայերենի նորմերը: Այսպես. անգամ պաշտոնական փաստաթղթերում տեղ է գտել «Հրամանատրում՝ առաջադրանքով» տերմինը, որը, իբր, *«Command Mission»* տերմինի համարժեքն է: Նախ, ամերիկացի մասնագետներն իրենք են նշում, որ անգլերեն տերմինը շատ մոտավոր կերպով է արտահայտում անգլերեն չթարգմանվող գերմաներեն «Auftragstaktik»-ի իմաստը (այսինքն՝ հաջող չէ), ուստի պետք էր (և առհասարակ՝ պետք է) կատարել ոչ թե բառային պատճենում, այլ իմաստային թարգմանություն: Երկրորդ. «հրամանատրում» բառը խորթ է հայերենին և չի հանդիպում այնպիսի հեղինակավոր բառարաններում, ինչպիսիք են «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»[7], Ստ. Մալխասյանցի[8], Հ. Բարսեղյանի[9], Ա. Սուքիասյանի[10] բառարաններում: Այս բառը հանդիպում է միայն Աղայանի բառարանում, սակայն աղբյուրը անհայտ է, քանի որ «հրամանատրել» և «հրամանատրվել» բառերը բերվում են *հնց.* նշումով, իսկ գրաբարյան շերտը ներկայացնող երկու հիմնական բառարաններում դրանք չկան: Կարելի է ենթադրել, որ այս բառը հորինվել է «վարձատրել–վարձատրում» բառային զույգի նմանությամբ: Կարծում ենք, որ «վարձատրում» բառն էլ որոշ չափով հակասում է հայերենի նորմերին՝ «տրում»-ի պատճառով, թեև բոլոր բառարաններում վկայված է: Սակայն արժե հիշել «տոնավաճառ» բառը, որի՝ *«վաճառ»*-ով ավարտվող բոլոր բառերի հետ («մսավաճառ», «լրագրավաճառ» և այլն) համեմատական վերլուծությունը վկայում է, որ նման բառերում, նախ, *«վաճառ»*-ը նշանակում է «վաճառող», երկրորդ. «տոնավաճառ» պետք է նշանակեր «տոնը վաճառող» կամ, առնվազն, «տոնի վաճառք», այսինքն՝ պետք է լիներ «վաճառատոն», որը իսկապես կնշանակեր «վաճառքի տոն», այլ ոչ թե «տոնական վաճառք»: «Հրամանատրում՝ առաջադրանքով» ըստ հայերենի լեզվամտածողության պետք է նշանակի՝ «որևէ մեկի առաջադրանքով՝ հանձնարարությամբ հրաման տալը», եթե շատ տուրք տանք անգլերենի սինթետիկությանը[*], ապա կարող ենք հասկանալ որպես՝ «այնպիսի հրաման տալը, որում բովանդակված լինի որևէ առաջադրանք», ինչը անհեթեթ է, որովհետև ցանկացած հրաման հանձնարարություն տալու ձև է: Մինչդեռ մի քանի տարի առաջ «Հայկական բանակ» հանդեսում տպագրվեց մի

[7] Տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. երկրորդ, Հ–Ֆ: Ե., 1981:

[8] Տես *Ստ. Մալխասեանց*, Հայերէն բացատրական բառարան, 4 հատոր: Ե., 1944–1945:

[9] Տես *Հ. Բարսեղյան*, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան: Ե., 1973:

[10] Տես *Ա. Սուքիասյան*, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան: Ե., 2009:

[*] Եթե առաջներում հայերենը (խոսքը արևելահայերենի մասին է) միջազգային տերմինների հետ հաղորդակցվում էր ռուսերենի միջոցով, ապա ներկայումս՝ անմիջականորեն անգլերենի, որից անընդհատ պատճենվում են ոչ միայն բառերը, այլև շարադասությունը և քերականությունը, օրինակ՝ անվանական ստորոգյալի երկրորդ բաղադրիչի մշտական օգտագործումը դերբայական ձևով, խնդրառության աստիճանական վերացումը (հնարավորություն է տալիս ձգտել՝ ձգտելու փոխարեն): Ընդսմին եթե առաջ փոխառությունը կատարվում էր Տերմինաբանական կոմիտեի, ինչպես նաև կառավարող պետական մարմինների խիստ վերահսկողությամբ, ապա ներկայումս դա արվում է անվերահսկելիության պայմաններում:

հոդված, որում մեր գիտական իրականության մեջ առաջին անգամ արծարծվեց Բունդեսվերում ընդունված ղեկավարման ու կառավարման համակարգի հարցը (*Auftragstaktik, Befehlstaktik, Innere Führung*) և տրվեցին համապատասխան թարգմանական համարժեքները[11]:

Ոչ արհեստավարժ մոտեցման դրսևորում է նաև *«maneuver and movement»* բաղադրյալ տերմինի թարգմանությունը որպես *«զորաշարժ և շարժունակություն»*: Դժվար չէ համոզվել, որ թարգմանությունը սխալ է. *«movement»*-ը երևույթ է՝ շարժում, մինչդեռ *«շարժունակությունը»*՝ հատկություն:

Վերջին ժամանակներս լայն տարածում է ստացել «բարեվարքություն» տերմինը: Մի կողմ թողնենք դրա իմաստը, որը ներառում է բոլոր այն հասկացությունները, որոնց կարող է վերագրվել «բարե-» մասնիկը. և՛ բարեկրթություն, և՛ բարեհուսություն, և՛ բարեգործություն, և՛ կոռուպցիայից զուրկ լինելը, և՛……: Տեսնենք, թե որքանով է այդ բառակազմությունը պատեհ: Եթե լիներ «բարեվարք», ապա զուտ բառային առումով այն «ականջ չէր ծակի» (հիշենք՝ «վարք», «հոգեվարք» և այլն): Ի՞նչ կարող է նշանակել «վարքություն» բառը: Հայերենին տիրապետողի համար սա պետք է որ թվա անհեթեթ, սակայն կիսաանգլերեն-կիսահայերեն իմացողները հաճույքով գործածում են այն:

Կարծում ենք, որ ժամանակն է պաշտպանության նախարարության կազմում ստեղծելու տերմինաբանական հանձնաժողով, որը քննարկի, ընդունի կամ մերժի, մշակի պաշտպանական ոլորտի հայերեն տերմինները: Այն պետք է կազմված լինի ինչպես ոլորտի մասնագետներից, այնպես էլ լեզվաբաններից: Հակառակ դեպքում, նման անվերահսկելի տերմինաշինությունը կարող է լուրջ բացասական ազդեցություն գործել լեզվի անաղարտության, լեզվամտածողության և ազգային ինքնության պահպանման վրա, մինչդեռ վերջինս «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ բնորոշվում է որպես հիմնարար արժեք[12]:

---

[11] Տես *Ա. Մ. Պետրոսյան,* ՁՈՒ-ի ղեկավարման միջազգային փորձը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Զինված ուժերի օրինակով: «ՀԲ», 2011, հմ. 1–2:

[12] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ՌԳՀ հատուկ թողարկում: Ե., 2007, էջ 14:

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անտոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ն. Ս. Մկրտչյանի, Լ. Հ. Պապիկյանի, Ք. Վ. Փիրոյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Անգլերեն և ռուսերեն տեքստերի խմբագրումը՝ *Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Լ. Հ. Պապիկյանի*

Լուսանկարչական ապահովումը՝
ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2016 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,25 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Times», «Times New Roman» և «Russian Baltica»: Տպագրությունը՝ օֆսեթ: Վկայական՝ 523:
Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԷՅՋԻ ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի և ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի ղեկավարությամբ ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի, ԼՂՀ ՊՈՒ հրամանատար գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանի և մի խումբ բարձրաստիճան սպաների խորհրդակցություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, 2016 թ. ապրիլի 19

Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ և Սեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա օրհնում են հայրենիքի երիտասարդ պաշտպաններին

Գանձասար, 2016 թ. ապրիլի 13

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 1 (87). 2016